ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԸ

ԺԷ ՏԱՐԻ

Ապրիլ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Դ

1960

2854

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հարության ավետիսը	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ սիրո և միության հրավեր կոնդակը	6
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Հույր եկեղեցիների հոգևոր պետերին և ստացված պատասխանները	9
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Եվրոպական Աբոռներին և առաջնորդարաններին և ստացված պատասխաններ	15
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ քարոզը Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ	17
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	20
Հանգիստ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի	23
Հայ բանաստեղծության երեկո Հոգևոր Ճեմարանում	25
Հ. Ա. ՍԻՐՈՒՆԻ— եղիշե պատրիարք Դուրյան	28
ՊՐՈՖ.-ԿՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ— Պողոս Տարոնեցի՝ ԺԱ—ԺԲ դարերի հայ մատենագիրը և թոնդրակեցի ու ծայթ հայերը	38
ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ—Մեծճ Ներսես Պարթև Հայրապետ	45
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՆԲՈՒԴՅԱՆՑ— Կարապետ Կոստանյանց	50
Կարդինալ Անտոնիո Կաժիանոն Բուենոս-Այրեսի հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում	57
Ձեռնադրություններ Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում	58
Դուրյան պատրիարքի ծննդյան հարյուրամյակի հանդիսությունը Դամասկոսի թեմում	59
ՎԱՀԵ ՀԱՅԿ— «Էջմիածին» ամսագիրը	59
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅԲԵՆԻՔԻՑ	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1980 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՂԵՏԻՍԸ

ատիկ է նորից: Գարուն է ամեն տեղ: Հայ եկեղեցու կամարների տակ մի անգամ ևս ճնշում է Քրիստոսի հրաշափառ հարության սուտառուչ օրհնիրգը, ԼՈՒՅՍԻ և ՆՈՐ ԿՅԱՆՔԻ կենդանարար ավետիսը, քրիստոնեական հավատի ուրախությամբ և աստվածային լուսավորությամբ լցնելով բոլոր բարի և հավատավոր հոգիները:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Զատիկ է նորից հավատացյալ ամեն հոգիկի տակ, քրիստոնյա հայության մեծագույն և ամենասիրելի տոնը, երբ, Վեհափառ Հայրապետի Զատկվա քարոզի շատ գեղեցիկ պատկերով, «ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ ԲՈԼՈՐ ՑՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՎԵՏԵՆ ԼՈՒՍԱՓԱՅԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՐԿՉԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ: ՈՒ ԿԼԵՑՎԻՆ ՆՈՐԵՆ ՀՈՒՅՍԻ ԲԱԺԱԿՆԵՐԸ ԸՆՏԻՐ ՍՐՏԵՐՈՒՆ՝ ԱՆՈՒՇ ՀՈՒՅԶԵՐՈՎ, ԼՈՒՅՍ ՏԵՍԻԼՔՆԵՐՈՎ:

ՏԵՍԵ՛Ք ԱՀԱ, Ո՞Վ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ, ԹԵ ՄԵԾ ՇՆՈՐՀՆԵՐՈՒ ԱՅՍ ԱՌԱՎՈՏՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ԿՇԱՏՆԱ ԼՈՒՅՍԸ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ: ԿԲԱՑՎԻՆ ԱՅՆՏԵՂ ՀՈՐԻՋՈՆՆԵՐԸ ԲՈԼՈՐ, ԵՎ ՆՈՐ ԱՊՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՔԱՂՑՐ ՏԵՆՉԵՐ ԿՏԱՆԻՆ ՄԵՋ ՎԵՐ, ԿՏԱՆԻՆ ՀԵՌՈ՛ՒՆ, ԴԵՊԻ ԱՓԵՐԸ ԲԱՐԻ՝ ԼՈՒՅՍ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ»:

Քրիստոսի հարությունը, իբրև իրողություն, հաստատված՝ բազմաթիվ սուրբգրական փաստերով և ժամանակակիցների բազմաթիվ վկայություններով, պատմական դեպք է: Բայց իբրև խորհուրդ և ոգեկան արժեք, իր նշանակությամբ և հոգևոր բարոյական ներգործությամբ հավերժաբար պատկանում է քրիստոնյա բոլոր դարերին և սերունդներին:

Քրիստոնեական կրոնի անշարժ սյունը խարսխվում է պատմության մեծագույն հրաշքի՝ Քրիստոսի հարության հավատի վրա: Քրիստոնեական եկեղեցու, որպես կազմակերպության, հիմնաքարն է Քրիստոսի հարության հավատը. «եթէ ՔՐԻՍՏՈՍ ՉԻՅԷ ՅԱՐՈՒՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ Է ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱՒԱՏՔՆ ՁԵՐ» (Ա Կորնթ. ԺԵ 14):

Քրիստոսի Հարության խորհուրդը իր մեջ խտացնում է ամենից առաջ ԿՅԱՆՔԻ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ, ԿՅԱՆՔԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ գաղափարը: Հավերժական կյանքի այդ գաղափարն է, որ լուսավորում է մարդկության ճանապարհը դեպի ԱՌԱՋ և դեպի ՎԵՐ:

«ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ,— ասում է Վեհափառ Հայրապետը,— ՊԱՏՎԱՆԴԱՆՆ Է ՄԵՐ ՀՈԳԵԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐՈՒՆ, ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԵՐ ՄԵԾ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԻՆ»:

Քրիստոս իր հարությամբ պսակում է Իր հավատացյալների ճույսերը, երազները, ձգտումները:

Ամեն գարնան, Քրիստոսի հարության հետ միասին, նոր խոստումներ են տրվում մարդ-

եանց նոր կյանքի, առավել կյանքի համար: Ե՛վ բնության մեջ, և՛ մարդկանց սրտերում հարության յուրաքանչյուր առավոտ փչում է ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՆԴՅԱՆ քաղցր շունչը՝ ասվածառուր խոստումների հանապարհով:

Գարնան գալուստով, մահաբեր ձմռան տակ թաղված կյանքը, գարնան կենդանարար շնչով, վերածաղկում է նորից, հազար ձևերով և հազար գույներով:

Իսկ եկեղեցին, Քրիստոսի հարության պատգամով, հավատացյալներին տալիս է նոր կյանքի, «հարուցյալ և փառավորյալ կյանքի» զվարթ և կենսաբորոգ ավետիսը:

Քրիստոսի հարությունը հավատավոր մարդկության համար մշտանորոգ կյանքի, հավերժական կյանքի սրտագին պատգամն է. «ԱՐԻ ՈՐ ՆՆՋԵՍՊ ԵՒ ԿԱՆԳՆԵԱՑ Ի ՄԵՌԵԼՈՑ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐԵՍՑԷ ԶՔԵԶ ՔՐԻՍՏՈՍ», որովհետև քրիստոնեության Աստվածը «ՉԷ ՄԵՌԵԼՈՑ ԱՍՏՈՒԱԾ, ԱՅԼ ԿԵՆԴԱՆԵԱՑ»:

Ի՞նչ է բերում քրիստոնեության հարուցյալ Աստվածը աշխարհին, մարդկությանն:

Հավերժության հաղթանակը՝ մահելության վրա, բարության հաղթանակը ատելության դեմ, խաղաղության հաղթանակը պատերազմի դեմ, ԿԵԱՆՔԻ հաղթանակը ՄԱՀՎԱՆ վրա:

«ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՆ ԵՒ ԿԵԱՆՔ, ՈՐ ՀԱՒԱՏԱՑ ՅԻՍ, ԹԷՊԷՏ ՄԵՌԱՆԻ, ԿԵՑՑԷ» (Յովհ. ԺԱ 25):

Մարդը ստեղծվել է հավերժության համար: Արարիչը նրան ստեղծել է, ըստ եկեղեցու ուսուցման, Ի՛ր պատկերով և նմանությամբ, այսինքն լույսի շողերով, անմահության կնիքով: Մահ գոյություն չունի բնության մեջ: Ոչինչ չի կորչում, ոչինչ չի մահանում տիեզերքի անհունության մեջ: Ինչ որ մահանում է, նորից վերածնվում է բնության ծոցում, կյանքի բազում ձևերով, հազար գույներով, որովհետև, քրիստոնյա մտածողության համար, Աստված է աղբյուրը ստեղծագործ զորության, մշտանորոգ կյանքի: Մարդկային կյանքն էլ ենթարկվում է նույն օրենքին և վերակենդանանում է Քրիստոսի հարության զորությամբ:

Քրիստոս ամեն Զատկի, ամեն գարնան հարություն է առնում Իր հավատացյալների հոգում, Իր եկեղեցու ծոցում: «Ի կոյս ի վիմէն» նոր առավոտ է ծագում աշխարհի վրա. «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՑ, ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄԱՀ ԿԱԽԵԱՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԲՆ ԻՐՈՎ ՄԵԶ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՒԵԱՑ»:

Ինչպիսի՞ հակատագրական դժբախտություն կլիներ աշխարհի համար մահը, եթե չլիներ Քրիստոսի հարության մխիթարիչ գաղափարը, անմահության գիտակցությունը, որը լուսավորում է մահվան սարսափելի գաղտնիքը: «ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԽԱՓԱՆԵԱՑ ԶՄԱՀ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐ ԱՐԱՐ ԶԿԵԱՆՍ ԵՒ ԶԱՆԵՂԾՈՒԹԻՆ Ի ՁԵՌՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ» (Բ Կորնթ. Ա 10): Հավատացյալի համար զերեզման գոյություն չունի: Հարուցյալ Փրկչի կյանքի և փառքի մեջ, նրա զորությամբ և շնորհով, հավերժորեն ապրում է քրիստոնյա մարդը: Քրիստոս ապրում է, կապրի և պիտի ապրի՝ Իր հարությամբ, հավատացյալի մեջ, Իր եկեղեցու ծոցում. «ԶԻ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ, ՆՈՅՆ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ»: Քրիստոս յուրայիններին է միշտ. «ՄԻՆՉԵՒ Ի ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ»:

Բայց ժառանգելու համար հավերժական կյանքը, հարկ է ՏԱՌԱՊԵԼ Քրիստոսի նման: Առանց զոհողության չկա երջանկություն և հաղթանակ: Առանց խաչելության չկա հարություն: Պետք է ՄԵՌՆԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ, ՔՐԻՍՏՈՍՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Այս իմաստով, Զատիկը գերազանցապես տոնն է հայ հավատացյալ ժողովրդի: ԶԱՏԻԿԸ ՏՈՆՆ է ՀԱՅ ՀԱՎԱՏԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ:

Հարության տոնը իր սրբազան խորհրդով ամենից շատ խոսում է քրիստոնյա հայ մարդու սրտին, հոգուն:

Հայ ժողովուրդը Քրիստոսի նման իր կյանքը զոհաբերել է արդարության, առաջադիմության, ազատության դատին: Նա եղել է առաջին մարտիրոսը քրիստոնեության և նահատակը՝ բաղդակերության: Այս պատճառով նրա սրտում միշտ վառ է եղել հարության հավատը: Զատիկը միշտ մեր ժողովրդին բերել է լավագույն կյանքի նույնն ու խոստումը: Ամեն Զատկի՝ մեր ժողովուրդը տոնել է նաև իր հարուցյալ կյանքի Զատիկը, իր ազգային-եկեղեցական վերածնունդյան տոնը:

Քրիստոնյա հայ մարդու կյանքը տևական, ամենօրյա ԶԱՏԻԿ է, այսինքն զեռում, զոհաբերում՝ հանուն հայ ժողովրդի լավագույն իդեալների, երազների: Եկեղեցու հայրերից Ս. Հովհան Ոսկեբերան ասել է. «ԱՄԵՆ ՕՐ ԶԱՏԻԿ, ՊԵՆՏԵԿՈՍՏԵ է ՄԵԶ ՀԱՄԱՐ»:

Ինչքա՜ն սրտառուչ, իրա՛վ և այժմեական է վեհափառ Հայրապետի Ջատկվա պատգամը՝ ուղղված բովանդակ հայութեան.

«ԱՅՍՕՐ, ԵՐԲ ՋԱՏԻԿ է ԵՎ ԳԱՐՈՒՆ, ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ ՁԵՐ ՍՐՏԵՐԸ ՁԵՂՈՒՆ, ԴՈ՛ՒՔ, ՀԵՌԱՎՈՐ ԲԱՅՑ ՄԻՇՏ ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻ՛Ք ՄԵՐ ՅԱՆԿԱԼԻ, ԱՅՍ ԼՈՒՅՍ ԱՌԱՎՈՏՈՒՆ ՁԵՐ ՀԱՅՈՒ ՊԱՅԾԱՌ ԱՉՔԵՐԸ ՈՒՂՂԵՑԵ՛Ք ԴԵՊԻ ԵՐԿԻՐԸ ՄԵՐ ՀԻՆ, ՍՈՒՐԲԳՐԱԿԱՆ, ԴԵՊԻ ԵՐԿԻՐԸ ՄԵՐ ՎԵՐԱԾՆԱԾ, ԴԵՊԻ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՄԱՍԻՍՆԵՐՈՒ, ԴԵՊԻ ԵՐԿՆԱՄԵՐՁ ԳՄԲԹՆԵՐԸ ՄԻԱՄՆԱԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ, ԵՎ ԼՈՒՅՍ ԱՌԵՔ ԵՎ ՇՈՒՆՉ ԿԵՆԱՑ ԵՎ ՁՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՄԱՀԱԿԱՆ։ ՄՆԱՑԵ՛Ք ՈՂՋ ԵՎ ԱՆՍԱՍԱՆ, ՀԱՎԱՏՔՈՎ ԼԻ, ԽԱՂԱՂ, ՊԱՅԾԱՌ ՈՒ ՇԻՆԱՐԱՐ։ ԱՊՐԵՑԵ՛Ք ԵՐՋԱՆԻԿ ԱՅԺՄ ԵՎ ՄԻՇՏ, ՍԻՐՈՎ ՄԻԱԲԱՆ, ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԵՎ ՄԻ՛ՇՏ ԵՌԱՑԵՔ ՀՈՎՔՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ, ՏԵՍԻԼՔՈՎՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ»։

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՜Ի Ի ՄԵՌԵԼՈՑ», հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍԻՐՈ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐ ԿՈՆԴԱԿԸ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՒՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՒՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԵՒԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ուղիղ չորս տարիներ անցան այն օրեն, երբ Մեր բնաւորութենեն քանի մը ամիս ետոյ, շատ քիչ անգամ նախընթաց ունեցող քայլ մը առինք և արտասահման այցի ելանք Մեր ցրված հոտին, առաջնորդված Մեր հոգևոր և ազգային առաքելության գիտակցութենեն:

Մենք մխիթարված ենք, որ Մեր հայրապետական առաքելությունը իր բարի պտուղները ավավ բազում տեսակետներե:

Ճանապարհորդության հաջորդող չորս տարիներու Մեր գործոց ընթացքը արդարացուց թե՛ Մեր հույսերը և թե՛ Մեր լավատեսությունը:

Դժբախտաբար սակայն Մեր գոհունակությունը ամբողջական չեղավ: Հայտնի է բոլորիս, թե 1956-ի Մեր հանապարհորդության գլխավոր նպատակներեն մին չիրագործվեցավ: Տանն Կիլիկիո Աթոռեն ներս Մենք չհաջողեցանք չեզոքացնել Հայ եկեղեցվո միասնության սպառնացող ձգտումներն ու ձրապիրները: Մեր սիրո խոսքը, Մեր համերաշխության և միության հորդորները չկրցան մեղմել այնկոծվող կիրքերը: Անթիլիասի մեջ, այդ օրերուն, Մենք զմեզ զգացինք անապատի մը մեջ: Եվ հարահատ, հեռացանք, բոլորին Մեր օրհնությունը տալն վերջ: Տխուր, շա՜տ տխուր մեկնեցանք Մենք Անթիլիասեն: Տխուր և տրտում մնացին նաև անթիլիասցի Մեր եղբայրները, բոլորն անխտիր: Տխուր մնաց և անմխիթար՝ մանավանդ մեր ժողովուրդը:

Հաջորդող դեպքերը և պատահարները և այնտեղ կազմված ու գործի դրված ծրագիրները, որ բոլորիս քաջ հայտնի են, ոչ միայն շմեղմեցին կիրքերը, այլ առավել խորացուցին, և առավել երկփեղկվեցան Ազգն ու Եկեղեցին:

Ի տես այս բոլորին, Մեր սիրտը վիշտով լեցվեցավ: Բայց երբեք չկորսընցուցինք Մեր հույսը և Մեր յավատեսությունը՝ Հայ Եկեղեցվո միությունը և խաղաղությունը վերականգնելու Մեր հիգերուն մեջ: Ծանոթ են բոլորին Մեր բազմաթիվ փորձերը այս աստվածահաճո և ազգաշեն նամբուն վրա:

Մենք, Մեր հայացքը սևեռած Ս. Լուսավորչի անմար կանթեղին, անգամ մը ևս կողքանք մեր Եկեղեցվո այս տխուր կացության վրա և վերստին սիրո և միության հրավեր կկարդանք բոլորին: Եկեղեցական և ազգային աղետի վերածվող այս կացության առաջ, անձնական հեղինակությանց խնդիր ճարուցել պիտի նշանակեր հոգեկան տկարություն և ընդհանուրի շահին գիտակցության պակաս:

Ուրեմն Մենք, անվարան ու անկեղծավոր սրտով, կոչ կընենք ամենուն անխտիր, որպեսզի պանվի ու պահպանվի, իբրև կյանքի սրբազան կանոն, Հայ Եկեղեցվո միությունը և ամբողջությունը, ամենայն հայոց նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, որպեսզի միացյալ հիգերով և փոխադարձ զիջումներով վերահաստատվի համերաշխ գործակցությունը Մեծի Տանն Կիլիկիո Աթոռեն և պառակտված թեմերեն ներս՝ մեր Եկեղեցվո կանոններուն, ավանդություններուն և եվիրապետական Աթոռներու պատմական իրավասություններուն լույսին տակ:

Այս իրերու կենսագործումը լոկ անհատական կամ խմբակցական ցանկություն չէ, այլ հրամայական թելադրանքը մեր Եկեղեցվո կանոններուն, մեր ազգային պատմության և մեր ժողովուրդի գերագույն շահերուն: Մենք մեկ Ազգ ենք և մեկ Եկեղեցի, և մեկ հավատք ունինք՝ Փրկչի Իջման սուրբ տեղով, ամենայն հայոց Ս. Էջմիածնով, որ Ս. Գրիգոր Լուսավորչի օրերեն մինչև մեր օրերը եղած է ու կմնա աստվածադիր միակ Գլուխը Հայաստանյայց Եկեղեցվո և հոգևոր գերագույն հեղինակությունը մեր Եկեղեցվո Եվիրապետության և համայն հայ հավատացյալ ժողովուրդի: Ս. Էջմիածնի օրհնությամբ, մեր Եկեղեցիեն ներս և մեր Եկեղեցիով, պետք է պահենք և ամեն գնով պահպանենք ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովուրդի հոգեկան միությունը:

Սիրո և միության Մեր կոչը կուղղենք նախ Անթիլիասի հերկա Աթոռակալին՝ Զարեհ սիրելյալ եղբորը Մեր, որմե չորս տարիներ առաջ համբուրիվ բաժնվեցանք Մեր մեկնումի տխուր օրը, ուրախ օր մը վերստին ողջագուրվելու քաղցր հույսով:

Սրտագին կոչ կուղղենք նաև ծերունազարդ եղբորը Մեր՝ Խադ Սրբազանին. որ, իբրև ճշմարիտ Աջապանյան մը, հավատարիմ մնաց Կիլիկյան Աթոռի լայնագույն ավանդություններուն:

Կփափագինք, որ Մեր կոչը հասնի նաև Մեծի Տանն Կիլիկիո երկփեղկված միաբանության և ժողովուրդի սրտին, բոլոր ազգային-եկեղեցական և հասարակական կազմակերպություններուն, հայ մամուլին, ինչպես և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներու, Իրանի և Հունաստանի բաժանյալ հատվածներուն:

Այս ոգիով հերշնչված ու գոտեպնդված, կառաջարկենք, որ այս տարվան ընթացքին, հարմար թվականի մը, տեղի ունենա ժողով մը, Մայր Աթոռի պատվիրակներու և Կիլիկյան Աթոռի երկու կողմերու ներկայացուցիչներու միջև, հույժ փափագելի գտնելով նաև, որ Մենք ևս անձնական հանդիպում մը ունենանք Տանն Կիլիկիո Սրբազան Աթոռակալին հետ, հարմարանդումն մեր սիրո միության և ի շինություն մեր Ս. Եկեղեցվո:

Աստվածահաճո Մեր այս առաջարկի հանապարհին վրա, վստահ ենք, թե Մեզ աջակից պիտի ունենանք Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո մեր Պատրիարքական Աթոռները, ինչպես նաև մեր բոլոր թեմական սրբազան առաջնորդները, որոնց նախանձաճույզ բարի ոգին և օրինապահ հայրատարությունը մեծ մխիթարություն եղած են միշտ Մեզ համար:

Թող իմաստության լույսը և ավետարանական սերն ու խաղաղությունը իջնեն մեր բոլորիս վրա և առաջնորդեն մեզ, որպեսզի ձեռք-ձեռքի տված, խաղաղություն ընենք մեր Աղօթքի տունին մեջ և լծվինք ազգաշեն գործի:

Թող միության և շինարար գործակցության նոր շրջան մը սկիզբ առնե մեր Ս. Եկեղեցվո հովանիին ներքև և համազգային միացյալ ճիգերով մեր ժողովուրդի հոգևոր, իմացական ու նյութական ուժերը մեկտեղելով, նվիրվինք Սփյուռքի հայության ազգապահպանության սրբազան գործին, մեր օրերու մեծագույն հարցը, որ դրված է մեր առաջ:

«Ողորմութիւն Աստուծոյ և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսին, ամէն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն ապրիլի
1980 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԸ,
ի Ս. Էջմիածին:

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՎԵՀՉԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒՅՑՈՒՆԸ ՊՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՄՈՒԱՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (*ՍՏԱՄԲՈՒԼ*),

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (*ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ*),

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻԻՆ
(*ԼՈՆԴՈՆ*),

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),

ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ*),

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (*ՔԵՐԱԼԱ*),

ՍԵՐԲԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԻՆ (*ԲԵԼԳՐԱԴ*),

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ՎԵՆԵՏԻԿ*),

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*),

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐՏ ԴԸ
ՀՈՒՖՏԻՆ (*ԺԸՆԵՎ*):

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՀ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Փրկչի լուսափայլ հարության ավետիսով, էջմիածնի մեր Ս. Աթոռին, ուրախ եմք Ձեզ բերելու Մեր եղբայրական սիրո ողջույնը, սրտաբուխ մաղթանք-

ներով հանդերձ Ձեր արևշատության և երջանիկ ճովվապետության համար և Ձեր Ս. եկեղեցվո ծաղկման համար՝ բարօրության և խաղաղության մեջ:

Տիրավանդ սիրով՝

ՎԱՉԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Աստվածային մեծ դիպքի լուսատու հանդիսավոր այս օրերին, մեր Փրկչի և Աստուծո Յիսուս Քրիստոսի հարության ավետիսով, սիրո և խաղաղության բարի ցանկությամբ, ողջունում եմ Ձեզ Սրբությանը:

Հարուցյալ Քրիստոսը թող զորացնի Ձեզ Իր լույսով և օրհնի Ձեր կյանքը՝ ճուրախություն և ի միխիթարություն Ձեր ճոտի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս մնամ միշտ Ձեզ անձնվեր՝

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

ՄՈՍԿՎԱ

Ձերդ Սրբություն.

«Արդարև Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Մեր հարուցյալ Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսով շնորհավորում ենք Ձերդ սիրելյալ Սրբությանը այս օրհնյալ Հարության, քրիստոնեության այս մեծ տոնի առթիվ, որն այս տարի տոնվում է միևնույն օրը:

Սրտանց փոխադարձելով Ձերդ Սրբության շնորհավորությունները մեր Տեր Հիսուս Քրիստոսով, աղոթում ենք հարուցյալ Քրիստոսին, որ լուսավորի Իր ժողովուրդներին հարության պայծառ լույսով և առաջնորդի նրանց միության և փոխադարձ հասկացողության՝ ի փառս Իր անվան: Ամեն:

Մնամք հարուցյալ Քրիստոսով Ձերդ Սրբության սիրելյալ եղբայր՝

ՔՐԻՍՏԱՖՈՐ Բ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Եղբայրական համբույրներով ի Քրիստոս ողջունում և շնորհավորում ենք Ձերդ սիրելյալ Սրբության Ս. Աթոռը և ամբողջ սրտով ցանկանում ենք Ձեր Ս. եկեղեցուն և Ձեր ասավածասեր ժողովրդին տարեցտարի խաղաղություն և բարօրություն՝ ուրախությամբ տոնելու քրիստոնեական այս մեծ տոնը:

Ձերդ Սրբությանը սիրող և հարուցյալ Քրիստոսով եղբայր՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

ԴԱՄԱՍԿՈՍ

Քրիստոսի հրաշափառ և սուրբ հարության տոնի առթիվ, սրտագին և եղբայրական պարտք ենք համարում ողջունել Ձեզ, Հայոց եկեղեցին և Ձեր սուրբ հոտի բոլոր եպիսկոպոսներին և հոգևորականությանը:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարակեցություն և նոր հաջողություններ, իսկ Հայ եկեղեցուն՝ պայծառություն:

Թո՛ղ հարուցյալ Քրիստոսը մեր սրտերը լցնի աստվածային սիրով և Իր ողորմությամբ, թո՛ղ օրհնի մեզ և համայն աշխարհը Իր խաղաղությամբ:

«Արդարև Քրիստոս յարեա՞ ի մեռելոց»:

Սիրո ողջույնով՝

ԵՓՐԵՄ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ

ԵՐՈՒՍԱԼԵՄ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Մի անգամ ևս քրիստոնյա ժողովուրդները ամենուրեք տոնում են համախորհուրդ իրենց Տիրոջ հարության հրաշափառ տոնը և լսում են առաքյալների պատգամը, վերհիշելով հաղթանակը իրենց Փրկչի, «որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խաւարի, և փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ» (Կողոս. Ա 13):

Կենաց Տիրոջ խոսքերը՝ «ես եմ լույս աշխարհի. որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՝ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (Յովհ. Ը 12), խոսում են մի սերնդի մարդկանց, որոնք զգում են, որ իրենք բոլոր կողմերից սպառնալիքի ենթարկված են խավարի ուժերի կողմից: Ինչպես Ս. Հովհաննեսը ասում է մեզ՝ «լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու», և չնայած, որ «յիւրսն եկ, և իւրքն զնա ոչ ընկալան» (Յովհ. Ա 5, 11), այնուամենայնիվ քրիստոնյա բոլոր հավատացյալների կյանքում միշտ փայլում է «լոյսն հշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհս» (Յովհ. Ա 9): Տերը նրանց տալիս է Իր խոստումը. «ես լոյս յաշխարհս եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի՝ մնասցէ» (Յովհ. ԺԲ 46):

Իմ սրտագին աղոթքն է, որ այս սուրբ տոնին Աստված Ձերդ Սրբության և Ձեր բոլոր հավատացյալ ժողովրդին շնորհի հշմարիտ լույսի բազմապատիկ օրհնությունները, որպեսզի միշտ զորացած լինեք ամեն փորձանքի ժամանակ, «զի Աստուած է որ յաջողէ ի ձեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան» (Փիլիպ. Բ 13):

Թո՛ղ հարուցյալ Քրիստոսի փառքը Զատկվա այս տոնին վառ մնա ամբողջ աշխարհի քրիստոնյա ժողովուրդների սրտերում և կարողացնի մեզ, թեպետև բաժանյալ Իր պաշտամունքի մեջ, ուշադիր լինել սիրեցյալ առաքյալի խոսքերին՝ «եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս նա ի լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս» (Ա Յովհ. Ա 7), և այդպես ամրապնդելու այս հասարակությունը. «մինչև հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի» (Եփես. Դ 13):

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՋԵՈՖՖՐԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼՈՆԴՈՆ

Քրիստոսի հրաշափառ հարության լուսափայլ տոնի առթիվ, սիրով և ուրախությամբ լեցուն հոգով, խնդրում ենք ընդունել նաև մեր կողմից ամենաջերմ բարի մաղթանքներ քաջառողջության, խաղաղության և հոգու մխիթարության՝ Ձերդ Սրբության, Ձեր եկեղեցու հոգևորականության և համայն հայ հավատացյալ ժողովրդի համար, որոնք գտնվում են Ձեր հայրական հոգածության և առաջնորդության ներքո:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Զերդ Սրբություն.

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Այս ուրախ ավետիսով նորից տոնում ենք Քրիստոսի հարության օրը նրեշտակների երգակցությամբ և ուրախությամբ խնդրում Հարուցյալին՝ «եվ մեզ՝ երկրի վրա գտնվողներիս ուժ տուր՝ մաքուր սրտով Քեզ բարեբանել»:

Քրիստոս հարյավ: Նրա հարությունը մեծագույն հրաշքն է և մեր ծննդյան լուսատու աղբյուրը և մանը հաղթահարելու ուժը:

«Զի զկեանս յափտենականս եւ մեզ Աստուած: Եւ այս են կեանքն՝ որ յիրդին նորա: Որ ընդունի զիրդին, ընդունի և զկեանս» (Յովհ. ե 11—12):

Քրիստոս հարյավ: Աստվածային սիրո դռները բացվում են, երկինքի և երկրի միջնապատերը ընկնում են: Նոր օր է սկսվում Աստուծո հոտի համար: Քրիստոնյաները ոգեշնչվում են հերոսամտությամբ և եղբայրական սիրով:

Աղոթում ենք կենդանարար Հարուցյալին, որ այդ խաղաղ ու սուրբ զգացումները հաստատի մեր սրտերի մեջ, որպեսզի հասնենք ցանկալի, մշտական խաղաղությանը և ժողովուրդների միաբանությանը:

Հարության այս առավոտը թո՛ղ առատ լույս լինի և թո՛ղ հարուցյալ Տերը Իր առատ ողորմությամբ լցնի մեզ երմարտության լույսով, որն անկյունաքար է դառնում մեր հավատի և քարոզի: Խաչեցյալ և հարուցյալ Քրիստոսի քարոզը չի դադարում աշխարհում, և դառնում է հավատի փաստ, որ դագաղի մեջ թաղվածը իսկական Աստված է, որ նա կյանքով լեցուն է, հաղթահարում է մահվան և իշխանության ուժի բարձրացնել մեղքի մեջ մեռած ամեն մարդու ուժը: Քրիստոսի հարության հավատի վրա հիմնում ենք մեր հույսերը, սրբության և այդ հավատի շնորհիվ ստանում ենք բարի պտուղներ մեր չերմեռանդության:

Եղբայրական սիրով ողջունելով Զերդ Սրբության, ցանկանում ենք Քեզ, միաբանությանդ և ասավածասեր հոտիդ՝ ուրախություն և խաղաղություն:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Քեր սուրբ աղոթքներով, մնամ Զերդ Սրբության խոնարհ եղբայր ի Քրիստոս՝

ԿԻՐԻԼ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Ստացել ենք Ս. Հարության Քեր նամակը: Աղոթում ենք Աստուծուն Քեր առողջության և Քեր եկեղեցու խաղաղության համար:

ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵԹՈՎՊԻՈ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

Զերդ Սրբություն.

Շնորհակալություն ենք հայտնում Զերդ Սրբության Ս. Զատկվա սիրալիր շնորհավորանքի համար: Աղոթում ենք, որպեսզի ամենակարող Աստված շնորհի Զերդ Ս. Օծության քաջառողջություն և երկար կյանք՝ Զերդ Սրբության խնամքին վստահված հոտն առաջնորդելու մեր Տիրոջ հանապարհով, և թո՛ղ նրա հարության ուժով մի անգամ ևս կենդանացած Ս. Եկեղեցին ծաղկի և բարգավաճի Զերդ Ս. Օծության հայրական առաջնորդության ներքև:

Եղբայրական սիրով և շնորհավորություններով, Զերդ ի Տեր՝

ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԵՎԵԼՔԻ

ՔԵՐԱԼԱ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Աստուծո ողորմությամբ, հոգեպարար Մեծ պահոց պատրաստությամբ, արժանավոր կերպով դիմավորում ենք մեր Տիրոջ հարությունը:

Իր հաղթական հարությամբ, մեր Տեր Հիսուսը վերանորոգեց մարդկությանը և փրկեց ադամական անեծքից. «Զի բոշակն մեղաց մահ է. այլ շնորհքն Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռովմ. Զ 23):

Քրիստոսի լուսափայլ մեծ տոնի առթիվ ցանկանում ենք Ձերդ Սրբությանը հղել զատկական եղբայրական սրտագին շնորհավորություններ լավագույն բարեմաղթություններով. «Որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ» (Հռովմ. Դ 25):

Ձերդ հարգելի Սրբության, հոգևորականության, Քրիստոսասեր Ձեր ժողովրդին հայտնում ենք մեծ ավետիսը՝

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Հանձնելով ինձ, մեր աստվածասեր հոգևորականությանը և հոգևոր հոտին Ձեր սուրբ աղոթքներին, մնամք Ձերդ հարգելի Սրբության եղբայր և ծակից՝

ԳԵՐՄԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՍԵՐԲԻՈ

ԲԵԼԳՐԱԴ

Սրտանց շնորհավորում եմ Ձերդ Սրբության Ս. Զատկի տոնը:

Հարուցյալ Քրիստոսը թո՛ղ Իր պայծառ լույսով օրհնի Հայոց հինավուրց եկեղեցին, նրա մեծ խաղաղասեր Հայրապետին, հոգևորականությանը և համայն հավատացյալներին:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ձերդ Սրբությո՛ւն.

Ի խորոց սրտի շնորհակալություն եմ հայտնում սիրալիր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

Քրիստոսի հարությանն ուրախությամբ, ամբողջ սրտով ողջունում և շնորհավորում եմ մեծ տոնը:

Ցանկանում եմ Ձեզ և Ձեր հավատացյալ հոտին խաղաղություն և ուրախություն ի Տեր:

Սիրով և հարգանքով՝

ՑԱՆ ԿԻՑՎԻՏ
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Վեհափա՛ռ Տեր.

Հիսուսի հրաշափառ հարության խաղցր ավետիսով օծում Ձեր բանկագին նամակը մեր պաշտելի Հայրենյաց շունչի անուշ բուրումով հասավ մեզի և բերկրեցուց ամենուս սրտերը, և մենք նույնքան սիրով և եռանդով Ձեզի կպատասխանենք. «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Խորապես երախտապարտ ենք, Վեհափա՛ռ Տեր, Ձեր հայրական բանկագին մաղթանքներում, զորս կրնեք ինձի և աստվածապահ Ուխտիս համօրեն հայրերուն: Թող Աստված լսե և բեղմնավորե և բազմապատկե մեր նվիրական գործերը Իր փառքին, ի պայծառություն Ս. եկեղեցվո և մեր սիրելի Ազգին զավակներուն հոգևոր և մտավոր բարիքին համար:

Կխնդրենք, որ Դուք ալ ճաճիք ընդունիլ փոխադարձ մեր ամենաջերմ և անկեղծ մաղթանքները, որոնցմով կրկնենք և Աստուծմե կխնդրենք Ձեզի և Ձեր հավատարիմ գործակիցներուն համար արևշատություն և երկնային շնորհաց առատություն, որոնց օժանդակությամբ կարենաք առաջնորդել Ձեզի հանձնված հոտը փրկության ճանապարհեն, զոր բացավ Հիսուս Ինքը Իր սուրբ արյունով և անկեց հառաջեցին անստեղծ մեր սուրբ հայրերը և իրենց հետեն տարին մեր սիրելի հայ ժողովուրդը:

Մաղթում և հարատև զարգում մեր Հայրենիքին մեջ Աստուծո շնորհքով բազ հարություն առնեն սրբության և աստվածային գիտության բուրումով մեր հինավուրց սրբավայրերն ու վանքերը հգնասուն աստվածասեր հոգիներու բազմությամբ, և այսպես վերստին պայծառանա Հայ եկեղեցին և իր երկնակամարին վրա փայլին հինգերուն հետ նորանոր աստղեր նորագույն փառքերով:

Հանեցեք ընդունիլ մեր ամենուս ամենախոնարհ և ջերմագին մեծարանքը, որով կմնամ Վեհափառ Տերությանդ ամենախոնարհ ծառա՝

Հ. ՍԱՊԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ. Ս. ՂԱԶԱՐ

Վեհափա՛ռ Տեր,

Շնորհակալու սրտիվ կփոխադարձեմ Վեհափառ Տյառնդ օրհնության, հաջողության և արևշատության այն ամենե սրտաբուխ մաղթանքները, զորս բարեհաճած էիք հայտնել ինձ և Ուխտիս՝ Փրկչին հրաշափառ և կենսաբեր Հարության տոնին ատիթով:

Նախ զենում ի խաչին, ապա փառավոր հարություն, անա մարդկային կյանքի ալ սահմանվածը. որքան կորովով բառնալ գիտե յուրաքանչյուրն իր խաչն ու հաղթել դժվարություններու ատի կյանքի, նույնքան ապահովված է հարության փառքն ու պսակը:

Կմաղթեմ, որ անհնկնելի կորով մը,— միակ գրավականը հաջողության,— միշտ համընթաց Վեհափառ Տյառնդ ջանքերուն, տարիներու շատ երկար շարքի մը ընթացքին, առաջնորդելու Ձեր հոտը ի լույս Քրիստոսի:

«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Խորին հարգանքի հավատիքով՝
ազոթակից

ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՉԵԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ

ՎԻԵՆՆԱ

Ձերդ Սրբությա՛ն.

Այս տարի, երբ բոլոր դավանանքներու քրիստոնյաները միասին տոնում են Քրիստոսի հարությունը նույն օրում, այս ուրախ առթիվ շնորհավորում ենք Ձեզ մասնավոր ջերմությամբ և ազոթում, որ Աստված խաղաղություն տա աշխարհին և միություն բոլոր քրիստոնյա ժողովուրդներին:

Ձերդ հավատարմորեն՝

ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐԹ ԴԸ ՀՈՒՖՏ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԺԷՆԵՎ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԵԼԱՎԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՔՈՒՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՊՏԱՅՎԱԾ ՊԱՏԱՄՈՒԱՆՆԵՐ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Սուրբ հարության ուրախությամբ զեղուն, հայոց Լուսավորչի Գահեն, ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Ձեզ, սիրելի՛ք և հարազատնե՛ր Մեր:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Ձեզ, ազգային մարմիններու պատվական անդամներուն, աստվածասեր հոգևոր դասուն, ազգային-եկեղեցական և բարեսիրական կազմակերպությանց բարեպաշտ անդամներուն, ուսուցչական կազմերուն և բարեկրոն ուսանողներուն ե համայն Մեր սիրեցյալ հավատացյալ զավակներուն:

Մեր Տիրոջ հրաշալի հարության ավետիսով, թող վերստին շողա փրկչահան լույսը Ձեր հուսացյալ հոգիներին հերս: «ՁՀՈԳԻՆ ՄԻ՝ ՇԻՋՈՒՑԱՆԷՔ» (Ա Թեսաղ. ե 19), զի «ՈՒՆԻՄՔ ՁՓՐԿՈՒԹԻՒՆ ԱՐԵԱՄԲՆ ՆՈՐԱ ԵՒ ՁԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ ՄԱՐՄՆՈՎՆ ՆՈՐԱ» (Կողոս. Ա 14):

Սիրելի՛ք Մեր, այս Ս. Զատկի օրով, լայնե բացեք Ձեր սիրտն ու հոգին, և բաժին մը առեք հարության լույսի հառագայթումեն: Թող լուսավորվին Ձեր մտածումներն ու Ձեր հույզերը բոլոր: Թող լուսավորվի Ձեր կյանքի ուղին: Եվ լույսի պես մաքուր, լույսի պես պայծառ թող ըլլան ձեռաց գործերը Ձեր ամեն:

Տիրոջ զորությամբ, ապրեցեք տարիներ երկար, խաղաղ, արևոտ, բարի օրերով, սիրով միաբան, եկեղեցիի ու Ազգի սիրով, միշտ հավատարիմ մեր սուրբ հավատին, միշտ հավատարիմ մեծ Լուսավորչի լուսե տեսիլքին. «ՔԱՆԶԻ Ի ՍՄԱ ԵԱԳԵԱՑ ՄԵՋ ԼՈՅՍ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ»:

Հավատավոր զավակնե՛ր Մեր հեռավոր, «ՈՂՋՈՅՆ ՏԱՋԻՔ ԵՂԲԱՐՑ ԱՄԵՆԵՑՈՒՆ Ի ՀԱՄԲՈՅՐ ՍՐԲՈՒԹԵԱՆ» (Ա Թեսաղ. ե 26):

Քրիստոսատես Հայոց աշխարհեն և սրբազնասուրբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն Ձեզ վերստին ողջո՛ւյն և բյո՛ւր օրհնություն:

«ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒՑԵԱԼ ՓՐԿՉԻՆ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ ԱՅԺՄ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ. ԱՄԷՆ»:

ՎԱԶԳԵՆ Ա
ՈԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության նախագահ մեծանարգ դոկտ. Ժոզֆ դե Ազեբեդո Պերդիկոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Արգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), ազգային զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարեբարներին և ազգային ծանոթ դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք բոլորիս զատկական սրտագին շնորհավորանքը և մաղթանքը Վեհիդ անամպ արևշատության և բոլոր ծեռնարկեռու հաջողության, վասն շինության և պայծառության Հայաստանյայց եկեղեցվո և Մայր Աթոռի:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

Ս. Զատկի հրաշափառ տոնին առիթով ընդունեցեք ջերմագին շնորհավորությունս՝ արևշատ կյանքի լավագույն մաղթանք:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Ս. Զատկի առթիվ Ջերդ Սրբության կնդենք մեր ամենաճարգալի շնորհավորանքները, մաղթելով Ջերդ Սրբության երկար ու երջանիկ կյանք և անսասանություն ու բարգավաճում Մայր Աթոռին:

ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ՍԻՈՒՍԱՂԵՄ

Ամենախորին մեծարանք Վեհիդ կմաղթեմ շնորհավոր Զատիկ, արևշատ, հաջող հովվապետություն, անհանգիստ բարգավաճում Մայր Աթոռին և եկեղեցիին:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՀԿԱԹԱ

Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, թեմական խորհուրդներից, հոգևոր հովիվներից, ազգային-եկեղեցական, մշակութային և հայրենակցական կազմակերպություններից և ազգայիններից:

ԱՄԲԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԽՐԻՂՁԻ ՀՐԱՇԵԱԼՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ.

(17 ապրիլի 1960 թ.)

Քրիստոսատես մեր աշխարհեն, էջմիածնի փառաց լույսի Ս. Տաճարեն, Ըզ ամենայն խնդութեան», ժողովո՛ւրդ հայոց: Եվ սիրո ողջո՛ւյն և սուրբ օրհնությո՛ւն, միշտ նույն ջերմ սիրով, միշտ նույն իղձերով, միշտ նույն կարոտով: Զի «ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ ՓԵՍԱՅՆ ԱՆՄԱՀ ԵՒ ԵՐԿՆԱՒՈՐ»:

Զատիկ է այսօր, սիրելինե՛ր Մեր, և մեր եկեղեցիներու զանգակները բոլոր ցնծությամբ կավետեն լուսափայլ հարությունը Փրկչին Քրիստոսի: Ու կլեցվին նորեն հույսի բաժակները ընտիր սրտերուն՝ անուշ հույզերով, լույս տեսիլքներով:

Տեսե՛ք անա, ո՞վ հավատացյալներ, թե մեծ շնորհներու այս առավոտուն, ինչպես կշատնա լույսը մեր հոգիներուն: Կբացվին այնտեղ հորիզոնները բոլոր, և նոր ապրումներ և հաղցր տենչեր կտանին մեզ վեր, կտանին հեռո՛ւն, դեպի ափերը բարի՝ լույս հավերժության:

Եվ մարդը ի՞նչ է, եթե ոչ համբորդ մը աշի, երբեմ հոգնաբեկ, որ հավետ կընթանա միշտ դեպի հառաջ, միշտ դեպի երկինք, ու կբախե համառ դռները հույսին: Ու այդ համբուն վրա միայն, սփռված է առատ «լույսը փառաց» մարդկային կյանքին: Եվ այդ համբուն վրա միայն մարդիկ կքալեն ազատ, Աստուծին հետ անտես, ու իրենց մարմինը հոգիի վերածած, կստեղծեն ինչ որ բարի է, ինչ որ ճշմարիտ, ինչ որ գեղեցիկ ու ինչ որ արդար:

Հավիտենական մարդն է, Դամասկոսի համբուն հարություն առած, Միածնի հարության անմահ շնորհներով:

Քրիստոսի հարությունը պատվանդանն է մեր հոգեկան կյանքին ու արժեքներուն, և հանապարհը մեր մեծ սպասումներու կատարումին:

«ԵԹԷ ՔՐԻՍՏՈՍ ՉԻՑԷ ՅԱՐՈՒՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ Է ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱՒԱՏՔՆ ՁԵՐ» (Ա Կորնթ. ԺԵ 14):

Եվ ահա վերստին Զատիկ է այսօր, առավոտ է այսօր, զարուն է այսօր: Սիրելի՛ և հարազա՛տ զավակներ Մեր, որ հեռկիր հայրենի և որ ի սփյուռս աշխարհի, քաջ հայտնի է ձեզ բոլորիդ, իբրև բարի հավատացյալներ, թե քրիստոնեական մեծ սպասումներեն մին՝ մարդոց միջև սիրո և համերաշխության և խաղաղ գոյակցության հույսն ու տենչանքն է:

Մեր երանելի նախնիք, այդ հավատով ու այդ հույսով լուսավորված, մեզի համար երգեցին ու կտակ թողուցին՝

«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՋ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ...
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԶԱՅՆ ՀՆՉԵՑԱՒ,
ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԵՌԱՑԱՒ,
ՍԷՐՆ ՑՐՆԴՀԱՆՈՒՐՍ ՍՓՌԵՑԱՒ»:

Արդ, մեր Տիրոջ և Փրկչի հարության ավետիսը մեր սրտերուն մեջ առած, ջերմագին եռանդով անձանձրույթ աղոթքնե՛ր խաղաղությանը համար մեր կյանքին, խաղաղությանը համար համայն աշխարհին: Մեր օրերու միջազգային կյանքի իրադրության և պայմաններուն մեջ, մեր տեղը, և բոլոր իրավ քրիստոնյաներու տեղը, խաղաղասեր մարդկության կողքին է, անպայմանավոր կերպով: Բոլոր ժողովուրդներուն համար անխտիր, բոլոր եկեղեցիներուն համար անխտիր, կյանքի ու գործի սեպուն խնդիրը խաղաղության պահպանման, պետություններու բարեկամության ամրապնդման և ընդհանուր զինաթափման հրամայական խնդիրն է: Այս հրամայականը մենք կնկատենք Աստուծո իսկ ձայնը, վասնզի «ՈՉ ԽՌՈՎՈՒԹԵԱՆ Է ԱՍՏՈՒԱԾ, ԱՅԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ» (Ա Կորնթ. ԺԴ 33), և կնավատանք խորապես, թե «ՊՏՈՒՂ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ՍԵՐՄԱՆԻ» (Յակոբ. Գ 18):

Սիրելի՛ հավատացյալներ, մանավանդ դո՛ւք, հեռավոր պանդուխտ զավակներ Մեր, սուրբ հարության խաղաղության ձայնը բող հնչե նաև ձեր եկեղեցիներեն ներս և սերը բող սփռվի առատապես ձեր համայնքային կյանքին վրա: Խաղաղություն, միություն և շինարար աշխատանք, ա՛յս բող ըլլա ձեր նշանաբանը և առաջնորդող ոգին: Հեռո՞ւ ձեզմե՛ն ամեն տեսակ քեն ու ոխ: Հեռո՞ւ ձեզմե՛ն ամեն տեսակ պառակտում և բաժանում: Խորհրդով, բանիվ և գործով մնացե՛ք հավատարիմ մեր նախնյաց լույս հավատքին, մնացե՛ք հավատարիմ քրիստոնեական հազարամյա սյուն ամենայն հայոց Ս. Էջմիածնին, մնացե՛ք հավատարիմ նաև ձեր բնակած երկիրներու օրենքներուն: Եղե՛ք բարի ու կարգապահ քաղաքացիներ: Այս սրբազան ուխտով, սիրելի՛ք Մեր, «ԸՆԴ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՄԻՄԵԱՆՑ ԱՐՔՍՈՒՔ ԳԻՐԿՍ ՍԻՐՈՎ, ԵՒ ՄԻԱԲԱՆ ԳՈՉԵՍՑՈՒՔ՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՅ» (Շարական):

Այսօր, երբ Զատիկ է և գարուն, և Ս. Հարության ուրախությամբ ձեր սրտերը զեղուն, դա՛ւք, հեռավոր քայց միշտ հարազատ որդի՛ք Մեր գանկալի, այս լույս առավոտուն, ձեր հայու պայծառ աչքերը ուղղեցե՛ք դեպի երկիրը մեր հին, սուրբգրական, դեպի երկիրը մեր վերածնած, դեպի անհասանելի բարձունքները վեհափառ Մասիսներու, դեպի երկնամերձ գմբեթները Միածնաէջ Մայր Տաճարի: Եվ լույս առեք, և ջուրջ կենաց, և զորություն անմահական: Մնացե՛ք ողջ ու անսասան, հավատքով լի, խաղաղ, պայծառ ու շինարար: Ապրեցե՛ք երջանիկ այժմ և միշտ, սիրով միաբան, բարի գործերով և մի՛շտ եռացեք եռվքով հայկական, տեսիլքովը Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի:

Մենք այստեղ բոլորս, բոլորս անխտիր, մեր սրտերը բաց, մեր հույսերը վառ, մեր կամքը ապառաժ, անհուն կարոտով ու այրող սիրով, միշտ ձեզ կսպասենք ու միշտ կաղոթենք ձեր կյանքին համար, ձեր բախտին համար:

Դուք արթնե՛ք կեցեք, անդոլ հսկեցե՛ք, սիրելիներ՝ Մեր, որ հարության հույսը երբեք, երբե՛ք չմարի ձեր սրտերեն ներս: Դուք և զավակները ձեր, ամո՛ւր պահեցեք ձեր կուրծքներուն տակ Մեծ Լուսավորչի սուրբ հավատքը մեր: Ամո՛ւր պահեցեք մայր լեզուն մեր հայկական, գանձերը մեր բոլոր, դարերու ավանդ, և սրբազան կարոտը Հայրենի հողի:

Այսպես է որ, սիրելի՛ զավակներ Մեր, որ մը առնում, ձեր բոլոր օրերեն մեծ ու սքանչելի, արժանի պիտի ըլլամ ողջունելու հարության լույսը ձեր պանդուխտ կյանքին, լույսը փրկության՝ դեպի Հայաստան, դեպի Հայաստան, ուր հայուն համար այլևս մահ չկա: Թող խաղաղ մնա, թող ծաղկած մնա, թող միշտ ուռճանա, կենսուրախ ապրի երկիրը մեր եղեմ:

Ո՛վ հավատավոր ժողովուրդ հայոց, քեզ կրկին ողջո՛ւյն և բյո՛ւր օրհնություն աստվածակառույց Ս. Էջմիածնեն, Հայոց գառուն աշխարհեն և մեր հայրական հուսացյալ սրտեն: Աշխարտապես «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԲՆ ԻՐՈՎ ՄԵԶ ԶԿԵԱՆԱՒ ՊԱՐԳԵՒԵԱՑ»:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒՑԵԱԼ ՓՐԿՉԻՆ, ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԶԵԶ ԱՑԺՄ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ, ԱՄԷՆ»:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՏԻ 13-ԻՆ, «ԱՆԱՌԱԿ»-Ի ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 20-ԻՆ, «ՏՆՏԵՍ»-Ի ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Գեղարդի վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռի վարդապետները քարոզեցին Երևանի եկեղեցիներում։ Հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը քարոզեց Ս. Սարգիս եկեղեցում, բնաբան ունենալով «Ցամենայն ժամ պարտ է կալ յաղօթս և մի ձանձրանալ»։ Ս. Զորավոր եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Հարությունն վարդապետ Մատենյանը՝ «Առէք զլուծ իմ ի ձեզ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց» բնաբանով։

***

ՄԱՐՏԻ 27-ԻՆ, «ԴԱՏԱՒՈՐ»-Ի ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը, քարոզեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, բնաբան ունենալով «Ցամենայն ժամ պարտ է կալ յաղօթս և մի ձանձրանալ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 30-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրամանով, Երևանի Ս. Սարգիս, Ս. Զորավոր և Ս. Հովհաննես եկեղեցիներում, Արևագալի ժամերգությունից հետո քարոզեցին բարեշնորհ Սանդրո, Կարապետ և Ծիրայր սարկավագները։

***

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի փիրապն»։ Մայր Տաճարում, իբրև Ս. Սեղանի առաջ, պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ, «ԳԱՎԱՍՏԵԱՆ» ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը՝ «Զայդ ամենայն դոր տեսանէք, եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի» բնաբանով։

***

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Աւետումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։ Սուրբ պատարագի երգեցողությունը կատարեց Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը։

***

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, զատկական տոների առթիվ Մոսկվա մեկնեց բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը, իսկ Բաքու մեկնեցին բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը, ճեմարանականներ Անաստաս Մովսիսյանը և Կարպիս Սերայդարյանը։

***

ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, երեկոյան, Մայր Տաճարում կատարվեց Մեծ պահոց հսկումի

վերջին հանդիսավոր արարողությունը, որին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և անվանի նկարիչ Մարտիրոս Սարյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի նիստը։

***

ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՇԱՂԿԱԶԱՐԴ։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։ Պատարագիչ սրբազան հայրը քարոզեց «Նախանձ տան՝ քո կերիցէ զիս» բնաբանով, նախ պատկերացնելով Սողոմոնի Տաճարը իր անցյալի փառքով ու նշանակությամբ, ապա նրա վիճակը Հիսուսի այժի առաջ։ Սրբազան հայրը եզրակացրեց, որ յուրաքանչյուր հայ հավատացյալ պետք է պահի իր հոգեկան տաճարի մաքրությունը, պատկառանք ունենա մեր տաճարների ու սրբավայրերի հանդեպ և սիրի իր Հայրենիքը՝ որպես հայության մեծագույն Տաճարը ու նվիրվի նրա բարգավաճմանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 5-ին կատարվեց «Դոնբաշէթ»-ի արարողությունը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։

***

ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Հոգևոր ճեմարանի ամբողջ ուսանողությունը, առավոտյան ժամերգությունից հետո, խոստովանվեց և հաղորդվեց։

Երեկոյան, Ոտնալվայի կարգը կատարեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Աղարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Գիշերվա ժամը 8-ին հսկումն է Մայր Տաճարում։ Սկսվում է ժամերգությունը։ Կարդացվում են մատնության Ավետարանները։

Ներկա է Վեհափառ Հայրապետը։

Հսկման քարոզն է խոսում գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ «Հայր, անցո յինէն զբաժակս զայս, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ դուն բնաբանով։ Քարոզիչ սրբազան հայրը Գեթսեմանիի պատկերով ներկայացնում է նաև հայ ժողովրդի Գեթսեմանին, նրա կրած անլուր տառապանքները անապատների միջով մինչև Արարատի ստորոտը, շեշտելու համար ի վերջո՝ Գողգոթայի փեշերի վրա Քրիստոսի հարությունը, իսկ Արարատի փեշերին՝ հայ ժողովրդի հարությունը։

***

ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ, ԱՎԱԳ ՇԱԲԱԹ, «Ճրագալոյց Զատկի»։ Երեկոյան ժամը 5-ին սկսվեց ժամերգությունը և ապա սուրբ պատարագը։ Պատարագիչն էր Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը և նախագահեց Զատկի նախատոնակի հանդիսությանը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Քրիստոս յարեաւ» հարության շարականի երգեցողությամբ առաջնորդվում է Վեհարան։

***

ԱՊՐԻԼ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԶԱՏԻԿ, «Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մեծ տոնի առթիվ Մայր Տաճարում հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը։ Սուրբ Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Եղիշե և հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետները ու արժանապատիվ Տ. Հակոբ և Տ. Հովհաննես քահանաները։

Սուրբ պատարագին ներկա են պաշտոնական հյուրեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, ուխտավորներ Ամերիկայից, Իտալիայից, Բելգիայից, Ռումինիայից, Սիրիայից և Իրանից։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը։ Քարոզը նույն գիշեր, ժամը 11.40-ին, ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, որտեղ, Ծաղկյա դահլիճում, լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, հանուն միաբանության և հավատացյալ հայ ժողովրդի, շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Զատիկը։

Նորին Սրբությունը օրհնում է բոլորին, խաղաղություն և բարգավաճում մաղթում մեր երկրին, մեր ժողովրդին, շինություն և պայծառություն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայ Եկեղեցուն։

Երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնական անձանց, հյուրերին, որոնց թվում էին Վեհապետը՝ նկարիչ Մարտիրոս Սարյանը, բժիշկ պրոֆ. Մեդնիկյանը, ճարտարապետներ Մ. Արզումանյանը, Ռ. Իսրայելյանը, նկարիչ Գրիգոր Շիլթյանը և տիկին Լյուսի Արզումանյանը Իտալիայից, հայագետ պրոֆ. Հակոբյանը և բելգիացի բժիշկ պր. Ժոակիմը Բրյուսելից և ռումինահայ ուխտավորներ տեր և տիկին Եղիազարյանները, ուսուցիչ Գ. Սարգսյանը, Մկրտիչ Տարաքճյանը և այլ հյուրեր։

Զատկական սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Սեղանի շուրջ ստեղծվում է ջերմ մթնոլորտ։ Արտասանվում են հայրենասիրական և կրոնաշունչ ճառեր, կատարվում են արտասանություններ, երգեր, մեներգեր։

Զատկական սեղանը վերջանում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

***

ԱՊՐԻԼԻ 18-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ Քահանա Հակոբյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց «հոգեհանգիստ վասն համօրէն նեղչեցելոց»։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐՏԻ 3-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաքիրյանը՝ թեմական գործերով։ Հոգեշնորհ հայր սուրբը իր թեմը վերադարձավ մարտի 10-ին։

***

ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց հայտնի ֆիզիոլոգ խաչատուր Կոշտոյանցը, ընկերակցությամբ նկարիչ Խ. Եսայանի։ Հարգելի հյուրերը ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից և ջերմ զրույց ունեցան։

***

ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Բելգիայից, Հալեպից և Իրաքից Մայր Հայրենիք ժամանած ուխտավորների մի խումբ, որը ներկա եղավ Մայր Տաճարում սուրբ պատարագի մատուցման, և ապա ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից։ Նորին Ս. Օծությունը հետաքրքրվեց ուխտավորների կյանքով և նրանց թեմերի ազգային-եկեղեցական կյանքով։

***

ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեցին ռումինահայ տեր և տիկին Եղիազարյանները, պր. Գ. Սարգսյանը և Մկրտիչ Տարաքճյանը։ Ուխտավորները եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում և Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուխտավորներին։

***

ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Միլանոյից որպես ուխտավոր Մայր Աթոռ ժամանեց տիկին Լյուսի Սեռմյան-Արզումանյանը և ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից։

***

ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ ժամանեց իտալահայ հայտնի նկարիչ Գրիգոր Շիլթյանը, որը Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի համար պատրաստել է արվեստի մի գեղեցիկ ստեղծագործություն՝ վերափոխվող Աստվածամոր մեծադիր նկարը։ Հարգելի արվեստագետին ընդունեց Վեհափառ Հայրապետը և երկար ու ջերմ զրույց ունեցավ նրա հետ։

***

ԱՊՐԻԼԻ 18-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց Բելգիայից հյուրաբար Մայր Հայրենիքում գտնվող հայագետ պրոֆ. Հակոբյանին և նրան ընկերացող բելգիացի բժիշկ պր. Ժոակիմին։ Վեհափառ Հայրապետի և հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց։



ՀԱՆԳՈՒՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
(1881—1960)

Մարտի 27-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիցագույն միաբան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Հանգուցյալը ծնվել է Վաղարշապատում 1881 թվականի փետրվարի 3-ին։ Նախնական կրթությունն ստացել է ծխական դրպրոցում և ապա ընդունվել Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որն ավարտել է 1907 թվականին։ 1905—1920 թվականներին աշխատել է Ս. Էջմիածնի Սինոդում որպես քարտուղար։ Այնուհետև զանազան հաստատություններում վարել է պատասխանատու պաշտոններ։

1944 թվականին մտնում է Մայր Աթոռի միաբանների շարքը որպես վարդապետ։

1945 թվականին նշանակվում է Իրանահնդկաստանի թեմի հայոց առաջնորդ և նույն թվականի ամռանը եպիսկոպոս է ձեռնադրվում։ Մինչև 1949 թվականի հոկտեմբերի 22-ը նա պաշտոնավարում է Իրանում։ Այնուհետև Մայր Աթոռում կոչվում է պատասխանատու պաշտոնների և արժանավորությամբ ծառայում Ս. Էջմիածնին։ Երկար ժամանակ նա եղել է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ, Մայր Տաճարի լուսարարապետ և Վրաստանի հայոց թեմի առաջնորդ։

Վերջին շրջանում, իր հիվանդության պատճառով, սրբազանը հանգստյան էր կոչվել և Մայր Աթոռում իր երշանիկ ծերությունն էր անցկացնում։

Հանգուցյալի մարմինը Մայր Տաճար իջեցվեց մարտի 29-ին, երեկոյան ժամը 7-ին։

Մարտի 30-ին, Մայր Աթոռի ամբողջ միաբանության, վանքի պաշտոնեության, հանգուցյալի հարազատների և հավատացյալների ներկայության կատարվեց վերջին օծումը և թաղման կարգը։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և օծման կարգը կատարեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ Հայրապետը։

Օծումից հետո, «Ողջո՛յն քեզ Ս. Եկեղեցի, ողջո՛յն քեզ Սեղան Սրբութեան, ողջո՛յն քեզ դասք քահանայից, ողջո՛յն ձեզ սիրելիք իմ» բանաբանով գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը հուզիչ և գեղեցիկ դամբանականով վեր հանեց հանգուցյալի էջմիածնավեր ծառայությունը։

Ժամը 1-ին, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի նախագահությամբ, թափորը շարժվեց դեպի Ս. Գայանեի վանքը, ուր պետք է ամփոփվեր հանգուցյալի աճյունը։

Մայր Աթոռի միաբաններն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողները ուսամբարձ դուրս են բերում դագաղը Մայր Տաճարից։ Թաղմական թափորը, շարականով և աղոթքով առաջնորդվում է Ս. Գայանեի վանքը։

Գերեզմանի վրա կատարվում է վերջին կարգը։ Ապա հանուն Գերագույն Հոգևոր խորհրդի դամբանական է խոսում գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ակնալուրյանը, իսկ հանուն Մայր Աթոռի աշխարհիկ պաշտոնեության՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Թաղումից հետո, Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տրվեց հոգեճաշ, որին ներկա էին նաև հանգուցյալի հարազատները։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։



ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մարտի 26-ին, երեկոյան ժամը 7-ին, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ հայ բանաստեղծության նվիրված երեկո։

Հանդեսին ներկա էին Ճեմարանի ամբողջ ուսանողությունը, դասախոսական կազմը և Մայր Աթոռի միաբանությունը։

Հանդեսին նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Հանդեսի բացումը կատարեց վերատեսուչ սրբազանը։ Ապա Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս պր. Պարգև Շահբազյանը հանդես եկավ հայ բանաստեղծության մասին գեղեցիկ և տպավորիչ հետևյալ զեկուցումով.

«Անցյալ դարի ռուս ականավոր քննադատ Բելինսկին խոսելով բանաստեղծության մասին՝ հետևյալ հատկանշական միտքն է արտահայտել. «Կյանքը բանաստեղծության մեջ ավելի է կյանք, քան բուն իսկ կյանքի մեջ։

Բանաստեղծությունը ըստ էության հետապնդում է կյանքի խորհրդի սեռման և այդ խորհուրդը բացահայտելու նպատակը։

Բնության մեջ բոլոր իրերը, երևույթները, առարկաները միասին վերցրած՝ գտնվում են փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ։

Բանաստեղծությունը կյանքի այս կամ այն երևույթը արտահայտում է նրա կապակցության մեջ ամբողջի հետ։

Մարդը իրեն բացահայտելով՝ բացահայտում է ամբողջը։ Այստեղից սխալ չի լինի եզրակացնել, որ բանաստեղծությունը մարդկային հոգու արտահայտությունն է, այն հոգու, որը հավիտենական հարաբերության մեջ է համագոյի հետ։

Բանաստեղծությունը առարկայանալու համար օգտագործում է ձայներ, գույներ, պատկերներ, որոնք շքեղազարդում են նրա կապը իրեն շրջապատող, իրենով իմաստավորվող իրականության հետ։ Բանաստեղծությունը կենդանի իրականության, բնության շնչառությունն է։ Հավանաբար այս է նկատի ունեցել Ռուսաստանի մեծատաղանդ գեղագետ-քննադատը՝ Բելինսկին, երբ բանաստեղծության էությունը բացատրելու համար դիմում է կենդանի մարդու և դիակի համեմատության։ Որպես ձև երկուսն էլ նույնն են. տարբերությունն այն է, որ մեկի մեջ շունչ, կյանք կա, մյուսի մեջ՝ ո՛չ։ Ուրեմն բանաստեղծության առարկան կյանքն է, որն առարկայանում է մարդու մեջ, մարդկային էությունը կազմավորող ու բաղկացնող գաղափարների, հույզերի, մտորումների, զգացմունքների մեջ։ Ահա թե ինչու երբ մենք խոսում ենք մեր ազգային բանաստեղծության մասին, մենք այն առարկայնացնում ենք այն գաղափարների, տրամադրությունների մեջ, որոնք հատուկ են եղել մեր ժողովրդին նրա կազմավորումից մինչև մեր օրերը։

Բանաստեղծությունը մեր ժողովրդի հոգեկան աճի արտահայտությունն է, սկսած այն շրջանից, երբ մեր ժողովուրդը իրեն շրջապատող բնական և հասարակական

երևույթները իր երևակայության մեջ վերամշակելով՝ առարկայացրել է առանձին ստեղծագործություններով։ Հիշենք Գողթան երգերը, մեր ժողովրդական բանաստեղծության այդ գոհարները, որոնց մեջ արտահայտված է մեր ժողովրդի պարզ ու վսեմ կյանքը։ Ոչ մեկ տեղ մեր ազգային ոճը այնքան հստակ չէ դրսևորված, որքան այդ գողտրիկ պատառիկների մեջ (Վահագնի ծնունդը, Սաթենիկի դիմումը Արտաշեսին, Նավասարդյան տոների ոգեկոչման մեջ արտահայտվող Արտաշեսի կարոտը)։ Հայրդում է մեր ժողովրդի վերածնունդը։ Վերափոխված հայ ժողովուրդը իր վերանորոգված հոգին մատուցում է Աստծուն մեր հոգևոր երգերի, մեր շարականների մեջ։ Գալիս է Նարեկացին, վերակենդանացնում է ժամանակավորապես բթացած բնության, կենդանի իրականության զգացողությունը։ Հիշենք նրա տաղերը, որոնք լույսի ու շողի ցնծերգություններ են՝ աստվածաբրթիռ խռովքով։

Նարեկացուց հետո գնալով խորանում է մեր բանաստեղծության աշխարհականացումը. ծաղկում է միշնադարյան տաղերգությունը, սե՛ր, բնությո՛ւն, ազնվացած, բյուրեղացած քրիստոնեական աշխարհազգացողությամբ։ Որոշ ժամանակ լռում է մեր դասական բանաստեղծությունը, մերթ մարելով, մերթ առկայծելով գուսանական, աշուղական երգերի մեջ։ Այդ պրոցեսը տևում է բավական երկար, մինչև որ գալիս է հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը. նրա սրտի արյունով հեղեղված «Վերք Հայաստանի» դյուցազներգության մեջ մարմին է առնում մեր Ազգի հոգին։ Նա իրեն բոցավառում է՝ լուսավորելով Հայոց խավարամած աշխարհը։ Գալիս է բոցաշունչ երգիչը, ազատության զինվորն ու նահատակը՝ մեծասիրտ Միքայել Նալբանդյանը, ազատության տարերքը ցնցում է դարերի թմբիրի տակ քնած հայի հոգին։ Նույն ոգով, բայց տարբեր երանգավորումով և տարբեր տաղանդով ողբում է հայ ժողովուրդը իր կործանված պետությունը Մայր Արաքսի արտասուքի մեջ։ Արևմտահայ հատվածի մոտ վիրավոր առյուծի նման մռնչում է հյուծախտավոր, մեծատաղանդ Պետրոս Դուրյանը, քաղցր, ներդաշնակ ձայնով հնչում են Պեշիկթաշլյանի սիրո, բնության, ազգային համերաշխության երգերը։ Նրա քնարը առնական շեշտերով գովերգում է հայ լեռնային արծիվների սխրագործությունը բռնության դեմ։ Հիշենք նրա զեյթունցիական երգերը։ Մոլեգնում է թրքական բռնապետությունը, հրկիզված գյուղեր, լեռնացած դիակուտեր, խոշտանգված մարդկային գանգեր...։ Մրրկվում է Սիամանթոն, առնականորեն հնչում են Վարուժանթոն, առնականորեն հնչում են Վարուժանի հերոսաշունչ երգերը, որոնք մեկ-մեկ ժանի հերոսաշունչ երգերը, որոնք մեկ-մեկ մարտահրավերներ են՝ նետված բռնության դեմ, վերագտնելու համար մեր Ազգի հպարտությունը, մեր ապրելու սրբազան իրավունքը արևի տակ։

Հայրենի գյուղից գալիս է Մեծարենցը, գարնան, արևի, լույսով ողողված գիշերների սիրահար բանաստեղծը, անանձնական ուրախության, հայ հոգու ամենազուլալ, ամենապայծառ ձգտումների և իղձերի սրբազահար բանաստեղծը։

Արևելահայ հատվածի մոտ, ռոմանտիկ թևածումներից հետո, վերադարձ դեպի հայրենի հողը, ժողովրդական բառն ու բանը։ Հայրենական հողի վրա բարձրանում են Թումանյանի էպիկական պոեմներն ու Իսահակյանի հայրենաբույր տաղերը՝ ներծծված հայրենի բնությամբ և հայ ժողովրդի ազգային լուսավոր թախիծով։ Քաղաքային բանաստեղծության երևումը ազգային բեմի վրա։ Այս անգամ ականջալուր ենք լինում քաղաքային մարդու հոգեբանական ապրումների, նուրբ ու բարդ վիճակների ոսկեկար հյուսվածքով մեզ մատուցվող Տերյանի քաղցրաշունչ, ներդաշնակ երգերին։

Ապա նորից կոտորած, ջարդ, ամայացում Արևմտահայաստանի, բայց անօրինակ ուժով բոցերի մեջ իսկ վերընձյուղող հայ ոգու նոր պոռթկում։ Գալիս է Չարենցը, հընչում են նրա դյուցազնաշունչ երգերը, որոնք հիմք հանդիսացան մեր նորագույն բանաստեղծության ձևավորմանն ու զարգացմանը։

Մեր նոր կյանքի պատկերմանը նվիրված երգեր են սկսում հնչել մեր վերածնված Սովետական Հայրենիքի մեջ։ Մահարի, Նորենց, Չարյան, Արաղի, Սարյան, Կապուտիկյան, Համո Սահյան, Դավթյան ու էմին առավել կամ նվազ տաղանդով շարունակում են զարգացնել մեր ազգային բանաստեղծության ավանդությունները՝ նրան հաղորդելով նոր բովանդակություն, որով շնչում և իմաստավորվում է այսօր մեր կյանքը։ Ազգային հին թախիծը այսօր փոխարինված է կենսահաստատ աշխարհազգացողությամբ։ Մեր ազգային բանաստեղծության նորագույն բովանդակության հարստացման մի վառ օրինակ է վերջերս լույս տեսած Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն»-ը։ Այդ գործը իսկապես նվաճում է մեր բանաստեղծության մեջ։

Հայ բանաստեղծության մեջ տիրապետող երակը քնարականությունն է։ Մեր ազգային բանաստեղծությունը ամենից առաջ քնարական բանաստեղծություն է։ Մեր ժողովուրդը սրտի ու հույզի ժողովուրդ է և առավելապես

սիրահար լույսի, բնության շենշող գույների, միշտ լավատես, հավատավոր։ Դրանով է պայմանավորված անշուշտ մեր ժողովրդի կենսունակությունը, որ գիտե ամեն մի հարվածից հետո նորից վերականգնել՝ առ Աստված մատուցելու համար կյանքով թրթռուն իր հիացագին աղոթքն ու մրմունջը։

Մեր ազգային յուրահատուկ ոճը, ինչպես մեր մյուս արվեստների (երաժշտության, քանդակագործության, մանրանկարչության, ճարտարապետության), այնպես էլ բանաստեղծության մեջ բնորոշվում է իր պարզությամբ, սեթևեթանքի պակասով, կարճ ու կուռ գծերի ներդաշնակ միահյուսումով։ Մեր ժողովրդի մտածողությունը որքան դատողական, առավել ևս պատկերավոր, հուզական մտածողություն է։ Հայը կարծեք մտածում է իր սրտով։ Այստեղից մեր բանաստեղծության հուզաթաթավ, թախիծով քաղցրացած, լուսավոր բնույթը։

Սիրելի սանե՛ր Հոգևոր Ճեմարանի։

Մեր նոր բանաստեղծության լավագույն ներկայացուցիչների առանձին ստեղծագործությունների ընթերցմանը նվիրված մեր այսօրվա երեկոն ես հույս ունեմ կնպաստի մեր այս բացման խոսքի թերևս վերացական թվացող մտքերի թանձրացմանն ու առարկայացմանը։ Մենք կարող ենք միայն մեր հիացումն ու ուրախությունը հայտնել այսօրվա այս գեղեցիկ նախաձեռնության համար։ Ավելի լավ հայրենասիրական ոգով չի կարելի դաստիարակել մեր երիտասարդությանը, քան նրան հաղորդակից դարձնելով իր սեփական ժողովրդի զգացողության մայր երակի հետ։ Մեր բանաստեղծության մեջ շնչում է մեր ժողովուրդը իր դարավոր իմաստությամբ և հուզականությամբ։ Ես հույս և վստահություն ունեմ, որ դուք այսօր կզգաք ու կշոշափեք այդ իմաստությունը և կլցվեք ազգային հպարտության վսեմ զգացմունքներով։

Հայ բանաստեղծության նվիրված մեր այսօրվա երեկոն հայտարարում եմ բացված։

Երեկոյին մասնակցում էին բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը, Կարապետ սարկավագ Բենլիյանը, Սանդրո սարկավագ Բեհբուդյանցը, ուրարակիր Խորեն Հակոբյանը և Ա լսարանի ուսանող Արամայիս Սահակյանը։ Հայտագիրը վարում էր բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը։ Ընթերցողները նստած էին դահլիճում դրված մեծ սեղանի չուրջ, երեք լուսամփոփների առաջ։ Դահլիճի բոլոր լույսերը հանգել էին, երբ գիշերվա մթության մեջ հնչեցին բանաստեղծների թրթռացող հոգուց բխած հայ գոհար բանաստեղծությունները՝ արվեստի կատարելությամբ, զգայնությամբ ու ջերմ հայրենասիրությամբ զեղուն։

Ընթերցվեցին հետևյալ բանաստեղծությունները. Խաչատուր Արովյան՝ «Վերք Հայաստանի» (հատված), Պետրոս Դուրյան՝ «Իմ մահը», Ռաֆայել Պատկանյան՝ «Արաքսի արտասուքը», Հովհաննես Հովհաննիսյան՝ «Երգչի անեծքը» (թրգմ.) և «Հատիկը», Դանիել Վարուժան՝ «Ցորյանի ծովերը» և «Առկայծ ճրագ», Միսակ Մեծարենց՝ «Հյուղը», Հովհաննես Թումանյան՝ «Հայրենիքիս հետ», Ռուբեն Սևակ՝ «Հոգիս», Վահան Տերյան՝ «Ճամբարաժանս» և «Վերադարձ», Եղիշե Չարենց՝ «Ամբոխները խելագարված» (հատված), Ավետիք Իսահակյան՝ «Անցավոր աշխարհ» և «Քանաստեղծությունն», Գեղամ Սարյան՝ «Կարոտ», Սիլվա Կապուտիկյան՝ «Ներքող Հայաստանին», Հովհաննես Շիրազ՝ «Մայրս», «Քառյակներ» և «Սփյուռքի հայությանն», Գևորգ Էմին՝ «Ազգյուր-հուշարձանի առաջ», «Պարույր Սևակ՝ «Անլռելի զանգակատուն» (հատված)։

Երեկոյի վերջում եպիսկոպոս ունեցավ վեհափառ Հայրապետը և օրհնեց մասնակցողներին։





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐՅԱՆ*

ԻՎ. ԴՈՒՐՅԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ոչ մեկ տարակույս չունենանք. Դուրյան նաև գիտնական մըն էր։

Եթե գիտնականի մը առաջին ստորոգելին որոնելու իր կիրքն ու ճիգն է՝ Դուրյան քաղեց ու ամբարեց ամբողջ կյանք մը։

Ոչ ոք թերևս մեր մեջ իրեն չափ կարդաց։ Կարդալը կիրք մը դարձած էր իր մոտ։ Ոչ մեկ զրադում զինքը չհեռացուց իր գրքերեն, ու ոչ մեկ առիթ չփախցուց գրքերու մեջ թաղվելու համար։

Գրքերու հանդեպ իր այս պաշտամունքին ակնարկելով էր, որ կրսեր Եղիան, թե «դրամն որ ձեռքը կանցնի իսկույն կանհետանա մյուս ձեռքին մեջ գիրք ըլլալու համար»։

Կոստանդնուպոլիս զուրկ էր հանրային մատենադարաններե, ինչպես առհասարակ Թուրքիո բոլոր քաղաքները։ Բայց ինքը իր սեփականն ունեցավ, ու զայն հետը պտտցուց ամեն տեղ։ Եվ ուր որ ոտք կոխեց՝ գրքեր ու գրադարաններ փնտռեց ամենեն առաջ։

Երբ Հայկական դատին աչակցելու համար Փարիզ գնաց 1919-ին, գրքերն եղած են դարձյալ իր սեռուն գաղափարը,— ինչպես պատմած է այն օրերու իր ուղեկիցը՝ պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյան,— Սորբոնի ու Կոլեժ դը Ֆրանսի սրահները իր սիրական հաճախավայրը։

Եվ ան գրքերուն կպարտի ամեն ինչ։ Նախ իր հմտությունը։ Կարդալով ու յուրացնելով գրադարան մը դարձած էր ինքն ալ։

Ու գրքերեն կուգա նաև գրելու մեջ իր ժլատությունը։

Այդպես է որ հիսուն տարի պրպտեց ու ղննեց ան, քաղեց ու ամբարեց։

Ըսենք այս առթիվ, թե ան համարձակ էր եղած ի սկզբան, նույնիսկ այն ատեն, երբ հանդգնություն էր խոժոռ նայիլ առասպելներուն վրա։

Երբ 1887-ին Տեմիրճիպաշյանի «Երկրագոմդ»-ին մեջ լույս կընծայեր իր «Աբգար դպիր և Լաբուբնա կամ Հայոց Եկեղեցին» հոդվածը, չէր տատամսած զգացնելու, թե ճիշտ պիտի ըլլար Աբգարը ներմուծել հայոց թագավորներու շարքը։

Երիտասարդ հոգևորականի մը համար բավական քաջություն էր այն օրերուն մերժել Աբգարը իբրև հայոց թագավոր։

Ցուցացավ անշուշտ Կրոնական ժողովին սաստը Հայ Եկեղեցվո ավանդություններեն շեղած ըլլալուն համար։

Հետագային ալ իր այդ տեսակետը չլքեց, ու շարունակեց մերժել Աբգարը։ Իր «Ազգային պատմության» մեջ, ժխտելով եղեսական պատմության կապը մեր պատմության հետ, ան կգրեր.

«Այս մանրամասնությունները հառաջ բերելով, մեր նպատակն է ցույց տալ, թե Արշամի, Աբգարի և այլն վերագրված իրողությունները կամ դեպքերը բնավ աղերս մը

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի Ա, Բ և Գ համարներից։

լունին մեր տոհմային պատմության հետ» (էջ 125)։

Նախապաշարումներու դեմ իր միակ ելույթը չէր այդ։

Երբյան մը ունեցանք,— ու բոլորովին զեռ չէ անհետացած ան,— երբ հին արժեքները նոր կշիռքի մեջ գնելու փորձերը քիչ մը ծայրահեղության դացին։ Այն օրեն ի վեր, երբ հայ ժողովուրդի պատմությունը քննական բովե սկսանք անցնել, կարծեցինք, թե անհրաժեշտ է մեկ հարվածով փլցնել բոլոր հին կուռքերը։

Արդար էր անշուշտ, որ մեր հայրենասիրությունը այլևս չօրորեինք Հայկով ու Բելով, Արամով ու Բարշամով, Արայով ու Շամիրամով, ու դրախտին մեջ չփնտռեինք մեր հայրենիքը, կամ դրախտը մեր հայրենիքին մեջ։

Բայց իրավունք չունեինք չգուրգուրալու առասպելներուն վրա, որոնք դարերով սնուցեր էին մեր սերունդները, կամ ծիծաղիլ միամտությանը վրա մեր նախնիքներուն, որոնք իրենց ազգային հպարտությունը կառուցեր էին զրույցներու վրա։

Անցյալը վերագնահատել գեղեցիկ բան էր, բայց ավելի գեղեցիկ էր չափի զգացումը։ Պետք էր զգույշ ըլլալ որքան պատվանդանեն իջեցուցած ատեն հին կուռքերը՝ նույնքան նոր կուռքեր ստեղծած պահուն։

Չափի զգացումը կորսնցուց մեր քննադատությունը, օրինակ, երբ Վարդանի մեջ շփոթեց հայրենասերն ու մոլեռանդը, և հիմքեր փնտռեց չքմեղացնելու համար Վասակը։ Երկու հերոսներու պայքարը ան վարծեց քաղաքական երկու հակամարտ ուղղությանց վեճ, և Սյունյաց իշխանին սայթաքումը անտեսեց։ Այդ սայթաքումը վերլուծելու փորձերը մինչև զայն արդարացնելու, նույնիսկ հերոսացնելու գացին։ Դերենիկ Դեմիրճյան, որ օր մը իր զմայլելի «Վարդանանք»-ը պիտի տար, տարբեր մտայնություն ուներ այն օրերուն, երբ բեմ կհաներ «Վասակ»-ը։ Եվ ան բացառություն մը չէր։

Թուղթերուս մեջ ոտանավոր մը կմնար մինչև վերջերս։ Արմաշական բարեկամ մը ինձ ընծայեր էր զայն երբ Կեդրոնականն էի։ Դուրյանի պատմական անտիպ քերթվածն էր ան, որ կկրեր սա խորագիրը. «Դյուցազն իշխան Վասակ Սյունիս։ Զայն գրած էր իր երիտասարդության, Ճիշտ այն օրերուն, երբ մեր պատմությունը և իր հերոսները սկսեր էին նժարը դրվիլ ի նորո, և երբ ինքն ալ տարբեր սկսեր էր դատել անցյալն ու իր դեմքերը։

Դուրյան պատմական իր այդ քերթվածը երբեք ալ լույս չընծայեց սակայն, ու չէր ալ ուզեր զայն հիշել։ Թող ինձ ներեն իր ա-ճյունները, երբ անոր ակնարկությունն ըրի հոս, բացատրելու համար հանգրվանները մտքի մը, որ չէ կրցած քարանալ։

Ուշագրավ է, որ իր «Ազգային պատմության» մեջ, որ հետմահու լույս տեսավ 1934-ին, կպակսի ամբողջական շրջան մը. Արշակունիք ընդհատված են Պապի հետ (374), և կսկսին անմիջապես Բագրատունիք Աշոտ Ա-ով։ Այնպես որ չենք գիտեր, թե ինչպես պիտի նկարագրված ըլլար Ե դարը նույն պատմության մեջ, և ինչպես պիտի ներկայացված ըլլային Վարդանի և Վասակի տիպարները Վարդանանց պատերազմի մասին խոսած ատեն։

Փոխարեն իր «Հայ մատենագրության պատմության» մեջ, որ լույս տեսավ նույնպես հետմահու, Դուրյան կրսե Եղիշեի մասին խոսելու ատեն.

«Իր հայեցակետն եղած է ապագա սերունդներուն ազդել, հավատքին ոճովը կենդանագրված անձնվիրության չքնաղ օրինակը ցույց տալով Վարդանի վրա մեկ կողմեն, և մյուս կողմեն՝ Վասակին փառասեր և ուրացող անմտությունը դամելով նախատինքի սյունին վրա։

Պետք է ըսել, որ քննական ոգին միշտ ուժեղ մնաց իր մոտ, իր բոլոր ուսումնասիրությանց մեջ։ Ան այդ ոգին Արմաշ ալ մրտցուց, ու ներարկեց իր սաներուն ալ։ Ինք դեմ է եղած քարացած սկզբունքներու, և մղած է իր սաները ես ավանդությանց ուժեն չվախնալ։

«Մշակն ու վարձքը» մեծարանքի հատորին մեջ իր կենսագիրը, որ նույնինքն Թորգոմ եպիսկոպոսն էր, կգրեր.

«Օրմանյանի վերատեսչության օրով բոլորովին իր ջանքերուն արդյունքն էր եղած քննական ոգիի և հայագիտական ուղղության ներմուծումը ազգային պատմության և գրականության ուսմանց մեջ։ Իր վերատեսչության օրով ինքն էր դարձյալ, որ աստվածաբանական նորագույն դպրոցներու գիտությունը մտցուց վարժարանին մեջ և այդ ոգով պատրաստել տվավ բուն իր շրջանի աշակերտներուն՝ իրենց քննաբանական կամ ավարտական գրությունները։

Դուրյանի՝ Արմաշ բերած քննական այդ ոգիին ակնարկելով, Բարգեն վարդապետ կրսե, թե «Դուրյանի դիտողություններու տակ Հայկ, Բել, Խորենացի կամաց-կամաց կփոխեին իրենց արժեքը... պատմահայր Խորենացիեն կխլվեր ստուգապատում պատմագրի մը պարծանքը և Ե դարեն կփոխադրվեր է դարը...», ու կխոստովանի, թե Դուրյանի այս վերաբերումը դեպի հին արժեքները առաջին օրերուն հաճելի չէր թվեր մինչև այն ատեն ուրիշ տեսություններով սնած իր սաներուն. «Դուրյան կկործաներ հին ղղյակնե-

ները, շինված համբավները, և ասիկա կվրդովեր զիս»։

Դուրյան չի կառչիր սակայն չոփ-չոր փաստերուն։ Անոր համար ամեն ինչ չեն նյութեղեն ապացույցները։ Ան կհավատար, որ ավանդութիւնները, զորս այնքան գուրգուրանքով կփոխանցեն ժողովուրդը դարերուն, առասպելներ չեն բոլորն ալ, և որ անոնց խորքը կպահվըտի ժողովուրդներու ամբողջ անցյալը։

Խոսելով զրույցներու պատմական կարևորության մասին, ինքն է որ կրսե. «Պետք է գիտնալ, թե հին ժողովուրդները ո՛չ ամեն բան ստեղծած են ըստ հաճույս, այլ ինչ որ մանավանդ բուռն տպավորություն մը, խորին հիշատակ մը թողած է իրենց երևակայության ու մտքին մեջ, թե՛ բնական երևույթ մը լինի ան և թե՛ տոհմային մի նշանավոր պատահար, իրենց հոգեբանական վիճակին կամ ազգային նախաձեռնության ոգվույն համաձայն մեկնելով կամ վիպելով զայն՝ փոխանցած են սերունդ սերունդ, սակայն նորանոր տարրեր միշտ կավելնան հինավուրց ավանդությանց վրա և այս՝ ճակատագրական ընթացքն է անգիր դարերուն։

Հոգևոր պատգամներու ևս գերին չէ Դուրյան, ամեն անգամ որ անոնք կհակասեն գիտության փաստերուն։ Իր սքեմը չի կուրցներ զինքը, երբ պետք ըլլա ճշմարտությունը փնտռել։ Ով որ լսած է զայն իր դասերուն մեջ և կամ իր հետմահու դասերը կթղթատե, որոշ կտեսնե սառնարյուն մարդը, որ գերի չէ նախապաշարումներուն։

Մյուս կողմե, ան չէ վարանած ավանդական պատմության նվիրագործված դրվագները սառն տրամաբանության բովեն անցնել, զանոնք բացատրելու ձևին տակ։

Շահեկան էր, օրինակ, տեսնել, թե ինչպես կմեկնեն Հայ եկեղեցվո մերօրյա երկու կարկառուն դեմքերը՝ Դուրյան և Օրմանյան, Տրդատի խողակերպությունը, զոր մեզ կավանդե Ագաթանգեղոս։

Դուրյան հետևյալը կգրե դարձդարձիկ և մանվածապատ բացատրությանց մեջ, որ իր սովորությունն է հաճախ. «Անտեղի է անշուշտ այս ամենը բառական նշանակությամբ ընդունիլ, բայց թե իրոք պատահեցա՞վ թագավորին որևէ հիվանդություն՝ որ ադանկ ծիծաղելի ցնորաբանությանց տեղի տված ըլլա ավելի հիվանդոտ երևակայությանց մեջ, որոշ բան մը չենք գիտեր, թերևս անհավանական պիտի չըլլար գայլախտության (lycanthropie) երևույթը համարել Տրդատի հիվանդությունը, և այն՝ գուցե իբրև հետևանք այն վիճաբանությունի խոր տրտմության, հորում մնաց նա տառ անձուկ սիրոյն Հռիփսիմեայ», եթե իր տարիքը ներեր մեզ այսպիսի պատճառի մը վրա ծանրանալ։ Այս առասպելախառն իրողության ծագումը ուրիշ կերպով կրնա բացատրվիլ. ա՛յն է պատմիչին կամ այդ կեղծիքը ավանդողներուն մտքի տրամադրությանը մեջ՝ որ զանազան նկատումներեն զատ՝ գլխավորաբար հին և նոր պատմության վերաբերող անցքերն ալ օգուտ քաղած է և ըստ այնմ հերյուրած այն հրեշտակային այլակերպությունը։ Նախ՝ Նաբուգոդոնոսորի և Դանիելի պատմության պարագաները շատ նպաստած են այդ մասին... մյուս կողմանե ալ՝ ինչպես դիտել կուտա հմուտ արբան Դյուշեն՝ հալածող թագավորներու նկատմամբ՝ որոնք հետո քրիստոնեությունն ընդունեցին՝ նման երևույթներ կրկնված են ավանդական պատմություններու մեջ» («Ազգային պատմություն», էջ 205)։

Ավելի հակիրճ է Օրմանյան և ավելի զգույշերեք ընդարձակ հատորներու մեջ եկեղեցվո պատմությունը շարադրող այս մեծ հոգևորականը պարզապես կգրե.

«Պատմության այս մասը ոմանց կողմե Նաբուգոդոնոսորի արկածին նմանողությամբ հերյուրված զրույց մը կկարծվի, սակայն եղելությունը, եթե յուր քերթողական զարդերեն մերկացնենք, գայլախտություն (lycanthropie) կոչված ծանոթ ախտին կվերածվի, և շատ հարմար կուգա Տրդատի հուժկու կազմին և բուռն կիրքերուն և տարօրինակ բնավորության» (Ազգապատում», հատ. Ա, էջ 83)։

Ոչ նվազ շահեկան էր լսել Դուրյանի կարծիքը Մեսրոպի վերագրված տեսիլքի մասին։ Ըսելե հետո, թե մեր առջև գտնված հիշատակարանները, առանց տարակուսանքի, աստվածային օժանդակության կվերագրեն հայկական այբուբենի գյուտը և թե «այսպես մտածելու կամ հավատալու տրամադրյալ էին միտքեր՝ որ այնքա՞ն դժվարին և տագնապեցուցիչ գործի մը անակնկալ հաջողությունը մարդկային կարողութենե վեր կնկատեին», Դուրյան հետևյալ բացատրությունը ևս կուտա «այդ կարծեցյալ գերբնական իրողության». «ալքի առջև ունենալով Սրբույն հանձն առած տաժանելի տքնությունները, արտասվալից պաղատանքները, խստամբությունները և այլն (ըստ Կորյունի), իր գեղեցիկ նպատակին հասնելու հրատապ տենչը, մեկ խոսքով՝ հոգեկան այդ մեծ և խորազգաց հուզումները, պիտի չվարանինք ընդունելու, թե այդ ամենը պիտի կրնար նետել զինքը այն հափշտակության մեջ («տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ») ուր մտքի երկարժամանակյա սաղմնառությամբ նկարված երկունքը պիտի կարծեր տեսնել դեմ հանդիման իրեն տախտակի մը կամ քարի մը վրա՝ հստակ գիծերով

պատկերացած։ Եթե՝ ստուգիվ ա՛յս եղած ըլլա իրաց բուն վիճակը, այն ատեն ենթակայական այդ երևումը կրնա նկատված ըլլալ իրը առարկայական տեսիլք, և ավանդությունն ալ գտած կըլլա իր համեստ արդարացումը («Պատմություն հայ մատենագրության», էջ 413)։

Իսկ Օրմանյան նույն այդ տեսիլքին մասին պարզապես կրսե. «Աստվածային տեսիլքին պատմությունը բնավ դժվարության տեղի չի կրնար տալ, քանի որ գիտենք, թե մեր երանաշնորհ հայրերը առանց Աստուծո և առանց աղոթքի գործի մը ձեռնամուխ չէին ըլլար և ամեն հայրողություն և անակնկալ բարեդիպություն ուղղակի պստվածային Աչույն անմիջական ներգործության կվերագրեին։ Մեսրոպ ալ, որ շարունակ աղոթքն չէր դադարած, ուրիշ կերպով չէր կրնար մեկնել յուր վերջնական հաջողությունը» («Ազգապատում», հատ. Ա, էջ 275)։

***

Իր հորելյանին առթիվ լույս ընծայած հոդվածաշարքին մեջ «քանքարաթաքույց» կոչեր էի դայն։ Ընդուներ էի, թե քիչեր հայ կյանքին մեջ այնքան պաշար ժողված են, որքան Դուրյան, թե ոչ համալսարան տեսած է ան, ոչ ալ տիտղոս ամբարած, այլ հասկ կապած իր հոգիին, իր ճիգերուն ուժովը, սպառելով ի՛ր ներսեն բան մը, թե տարիներու տքնությամբ,— ի՛ր տքնությամբը,— մթերած է ինչ որ պիտի չկարենային տալ համալսարանները, բայց և ըսած էի, թե ան մարդոցմե զատուկ պահեց ինքզինքը, իր գանձերը ծածկեց մարդոց ակնարկեն, չթողուց որ ամբոխը երկարե ձեռքը, թե ուրիշներ տվին ինչ որ ունեին, աղքատներուն բաժնեցին իրենց պուտ մը բաներ, տասը ծանոթություն ժողված գրքերեն՝ տասը հատոր լեցուցին՝ մինչ Դուրյան իր ամբարները կղպեց։ Ու գրեր էի.

«Բայց մեծ է գիտնական Դուրյանին մեղքը։ Իր ահավոր պաշարեն փշրանքներ միայն տվավ։ Տեսակ մը ողորմություն, զոր հարուստները փողոց կնետեն մուրացկաններուն համար։ Հապա ինչո՞ւ ամբարեր այդքան գիտություն, եթե դայն չպիտի շռայլեր աջ ու ձախ, բուռ-բուռ։

...Դուրյան սրբազան ծածուկ կպահե իր քանքարները։ Պատահաբար փշրանքներ միայն կշնորհե անցորդներուն։ Կաթիլ մը ջուր անապատին համար, որ դարձյալ կմրկի տապին։ Իր հո՞գը չէ։ Թող տառապին ծարավիները, բայց ձեռք չտա՞ք իր քանքարներուն...

Աշխարհքեն կվախնա այս մե՞ծ Դուրյանը։ Այո՛, կվախնա լույսին հանել իր գիտական հետազոտության պտուղը, որուն գովքը կընեն շարունակ իր աշակերտները երեք տասնյակ տարիներե ի վեր։ Ամբողջ աշխարհը գիտե արդարև, թե Ս. Հակոբա գահակալը արդեն պատրաստ ունի Հայոց մատենագրությունը, Հայոց պատմությունը, Կրոնմեհերու պատմությունն մը, որոնցմե սնած իր սաները ավելի ճարպիկ եղան հաճախ ու ավելի առատաձեռն։ Իսկ ինք կզգուշանա զանոնք գիտության բերել։ Մարդոց խծծա՞նքն է արդյոք զինքը այսպես զգույշ պահողը, կվախնա, որ իր հետազոտության մեջ մարդիկ բիծե՞ր կփնտռեն։ Ո՞վ գիտե։ Կամ թերևս գիտնականի իր խղճահարությունն է, որ դեռ սպասել կուտա. թերևս դեռ նո՞ր փաստերու, դեռ նո՞ր լույսի կսպասե իր վիթխարի երկերը կնքելու համար. որպեսզի չըլլա, թե կետ մը մոռցված ըլլա, կամ գիտության ծանոթ փաստերեն դանց առնված չըլլա հատ մը։

Հորելյանական հանդիսության մեջ արտասանած իր ուղերձը գրեթե ամբողջությամբ պատասխան մըն էր այս տողերը գրողին ու տեսակ մը փորձ՝ լքմեղանալու, մանավանդ անկեղծ մտահոգություն մը աշխարհը հուսախաբ չընելու, երբոր լույս տեսնեին իր այնքան ծարավով սպասված երկերը։

Այդ ուղերձին մեջ բառ առ բառ ըսավ Դուրյան.

«Հիսնամյա Մահանայությանս հորելյանին առթիվ՝ ոմանք տարբեր կշիռ մը ուզեցին գործածել ու պակաս մը գտան. բայց ես հավակնություն չունեի՝ միաժամանակ՝ հայ հանրության ներկայանալու իրրև գրագետ, բանասեր և այլն, տիտղոսներ, որոնք Մանարաթաֆույցի մեղադրանքը միայն կրեբեն ինձի, և որոնք մեծ նշանակություն մ՚ալ չունեին եկեղեցիի մարդուն համար։ ...Եվ ինչո՞ւ ըլլամ Մանարաթաֆույց, եթե հիսուն տարիներ սրբազան բեմերե ավետարանական հավատքը քարոզեցի մեր եկեղեցիի զավակներուն, և նույնչափ ու ավելի տարիներով սորվեցուցի աննախանձաբար, դասարանական աթոռներու վրա, ինչ որ գիտեի մեր լեզվին ու մատենագրության, մեր պատմության և ուրիշ ո՛չ նվազ կարևոր ուսումներու վերաբերմամբ։ Գալով քանի մը տողերուս, որոնք հրապարակ հանված են, թերևս դյուրահաճ քիմքեր Մաֆարի համ մը առած ըլլան անոնցմե, բայց անոնք չե՛ն կրնար գուշակել տալ թաքնված Մանարաթի մը արժեքն ու կշիռը»։

Երբոր սակայն իր երկերը լույս տեսան հետմահու, պարզվեցավ, որ իսկապես շափազանցություններ են եղած տարածված լուրերը իր քանքարներուն մասին։ Ոչ մեկ բացառիկ գանձ չհայտնվեցավ։

Արդարև, հատորներու շարքը, զոր Թորգոմ պատրիարք լույս ընծայեց «Ամբողջ երկեր Եղիշե պատրիարք Դուրյանի» տիտղոսին ներքև,— «Պատմություն հայ մատենագրության» 1933-ին, «Հայոց հին կրոնը կամ հայկական դիցաբանություն 1933-ին և «Ազգային պատմություն» 1934-ին,— ուրիշ բան չէին, բայց եթե մեծ մասամբ իր դասախոսությունները Արմաշի մեջ և այլուր, համադրական, լրիվ, տևական գործեր ըլլալե դեռ շատ հեռու։

Շատ վարանած պետք է ըլլան զանոնք հրատարակողները նույնությամբ տպարան հանձնելե առաջ, այլապես անոնք պիտի չգրեին «Հայ մատենագրության պատմության» հառաջաբանին մեջ.

«Հրատարակիչները, հասկնալի խղճահարությամբ մը՝ չուզելով որևէ փոփոխություն մտցնել անոր մեջ, մամլո հանձնած են զայն, թե՛ իբր բաղկացություն և թե՛ իբրև խմբագրություն, գրեթե ճիշտ այնպես՝ ինչպես գտնված է ան իր ձեռագիրներուն հավաքումին մեջ։

Գիտակ՝ նրբադատ մատենագրի իր տեսություններուն, անոնք ի սկզբան տեսակ մը վարանքով մոտեցած են նույնիսկ հրատարակչական այս ձեռնարկին, խորհելով, թե իր հոգին պիտի հավանե՞ր արդյոք աշակերտի և հիացողի այս փութկոտության՝ հանրության ներկայացնելու համար իր երկերը, իրենց այն ձևին մեջ՝ զոր ինքն իսկ կնկատեր տակավին ընդունակ և կարոտ լուրջ վերաձեռնումի։ Բայց, ի վերջո, համարձակությունը չէ պակսած այդ մասին իրենց, այն գիտակցությամբ միայն, թե այդ գործերը, իրենց ա՛յս վիճակին մեջ ալ, կընձեռեն մեծ շահեկանություն, նյութին թե՛ ուսումնասիրությամբը և թե՛ ուսումովը զբաղողներու, այսինքն բանասերներու և ուսուցիչներու և ուսանողաց միանգամայն»։

***

Ու հիմա, որ անցեր է երեսուն տարի այն գիշերեն ի վեր, երբ աչքերն ընդմիշտ փակեց Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան, ատեն է, որ ա՛լ փորձենք անդրադառնալ նաև այն պատճառներուն, որոնք զինքը այսքան զգույշ էին բրած, ու այսքան վերապահ ու ժլատ։

Մեծ իմաստության պետք չկա կռահելու համար, որ Դուրյան սրբազան ատենը հասած չէր նկատեր եզրակացությանց հանգելու։ Ու այդ՝ շատ բնական էր։ Առձեռն փաստերով կարելի չէր դեռ կառուցել հայոց պատմության վերջնական շենքը։

Ամեն բանե առաջ չունինք դեռ մեր Գիրք Ծննդոցը։

Քանի՞ անգամ արդարև հայոց պատմությունը դիմագիծ փոխեց մեր աչքերուն տակ։ Հիմնիվայր շրջվեցավ ինչ որ գիտենք մեր բնիկ հողին, մեր ծագման ու մեր նախահայրերուն մասին և մեր առաջին կապերուն մասին ուրիշ ժողովուրդներու հետ։

Խորենացին, որ մեզ սնուցեր էր մեկուկես հազարամյակ, այլևս ուժ չուներ մեզ համոզելու։ Սկսած էինք նոր նախահայրեր փընտռել մեզի։

Ավելի քան դար ու կես առաջ Ջամշյան, 1784—1786 թվականներուն, փորձեր էր Հայոց պատմությունը համադրել երեք հատորներու մեջ, չանալով քամել մինչև այն ատեն հայտնված բոլոր աղբյուրները և կառուցել ամբակուռ շենք մը Հայոց պատմության համար։ Ու անկե հետո Հայոց պատմություն գրելու բոլոր փորձերը իրենց սնունդը Ջամշյանեն առին, նոր բան շատ քիչ ըսելով։

Պետք էր ամբողջ դար մը անցներ, որպեսզի Հայոց պատմությունը նոր հուն մը մտներ։ Արդարև 1888-ին էր, որ Մատաթիա Գարագաշյան լույս ընծայեց առաջին հատորը իր «Հայոց քննական պատմության», կարծել տալով պահ մը, թե գիտությունը ըսած է իր վերջին խոսքը։ Գարագաշյան կուգար ավանդությանց շենքը փլցնել, և նոր մը կառուցանել։ Այդ նոր շենքին հիմքերը ան կփորձեր շաղախել գիտության նոր տվյալներով, այսինքն անոնցմով, որ արդեն հայտնված էին իր օրերուն։

Եվ սակայն ի՜նչ ահավոր փոփոխություններ Գարագաշյանեն հետո այլ նորանոր վարկածներ մեր ծագման մասին մեզ շվարեցուցին։ Աշխարհե աշխարհ ման եկանք մեզ նախահայր փնտռելու համար։ Ու ամեն անգամ, որ կարծեցինք, թե ա՛լ գտած ենք զայն, հանկարծ նոր փաստ մը կհայտնվեր ու զայն կխլեր մեզմե։

Ինչպե՞ս ավարտեր Դուրյան իր Հայոց պատմությունը, երբ ան, իր աչքերուն տակ, կտեսներ, թե վարկածներ կհայտնվին ամեն օր ու կհերքվին, տեսություններ կպարզվին ու կչախչախվին հաջորդ օրն իսկ, փաստեր կհայտարարվին վերջնական և սակայն կմերժվին շատ չանցած։

Պրպտումներու և որոնումներու երկու տենդագին դարերե և այնքան մանրակրկիտ խուզարկություններեն հետո, ուր բնեռագետներն ու հնախոսները այնքան քրտինք թափեցին անցյալին քողը պատռելու, իսկ լեզվագիտությունն ու մարդաբանությունը՝ մեր նախահայրը գտնելու համար, դեռ այսօր ալ չունինք ուրիշ ստուգություն քան այն համոզումը միայն, որ համադրություն մըն է հայ ժողովուրդը և թե այդ համադրության մեջ դեր կատարած են բնիկ ու եկվոր տարրեր՝ ամեն մեկը բերելով իր որոշ նպաստը։

Հետո՞։ Հետո մշուշն է, որ կսկսի, ու երթալով ավելի ևս կխտանա։ Ի սկզբան, երբ դեռ Խորենացին էր մեր պատմության սուրբ գիրքը, խաղաղ ու երջանիկ էր մեր քունը։ Գիտեինք, որ Հայկին թոռներն ենք, ու դրախտն է մեր հայրենիքը։ Հետո մշուշն սկսավ։ Երբ ուրացանք մեր պապերը, դոնե-դուռ ինկանք ծնողք մը փնտռելու մեզ։ Ու քանի՞-քանի՞ անգամ կարծեցինք, որ այլևս գտած ենք զայն։ Բայց շատերը իսորթ ելան, ու մշուշը ավելի ևս խտացավ։

Ու մինչև այսօր ալ պեղումներն ու հետազոտությունները կշարունակեն նորանոր անակնկալներու առջև դնել մեզ, ժխտելով ու հաստատելով, հերքելով ու հերքվելով։ Բայց թելը արդեն գտնված է, անոր կառչած պիտի կրնանք օր մը ակունքը հասնիլ։ Բայց պետք է տոկալ, չխրտչիլ նորանոր անուններեն, որոնք քարերուն տակեն կելլեն, ու չզարհուրիլ, երբ կփշրվին դարերուն կերտած կուռքերը։

***

Միայն հայ ժողովուրդի պատմությունը չէ որ այսպես շփոթեցուց մեզ. հայ մատենագրությունը հակասական փուլերեն նույնպես անցավ, ու դեռ կշարունակե անցնիլ մինչև այսօր։

Զարպհանելյան համարձակեր էր հայ մատենագրության պատմություն մը շարադրել ասկե դար մը առաջ, ու անով սնան քանի մը սերունդ՝ հայ մտքի երբեմնի տիտաններ ճանչնալու համար։ Բայց հետո, կամաց-կամաց, իր կուռքերը տակավ վար իջան իրենց պատվանդաններեն, ոմանք փշրվելու համար իսպառ, ուրիշներ բազմելու համար ավելի համեստ պատվանդաններու վրա։

Ո՞վ հիմա կրնա ճշգրիտ ըսել, թե ո՛վ են և ե՞րբ ապրած են Փավստոսն ու Ագաթանգեղոսը, ի՛նչ ազգ են և ի՛նչ լեզվով են գրած, կամ թե գոյություն ունեցա՞ծ են իրոք այդ անվամբ մարդիկ։

Ո՞ր դարու հեղինակ է Խորենացին՝ ո՞վ կրնա ըսել. ի՞րն է թե չէ իրեն վերագրված «Աշխարհացույց»-ը։

Քանի՞ Դավիթ ունինք մեր մատենագրության մեջ, ո՞վ է անոնցմե Անհաղթը և ե՞րբ է ապրած։

Ինչպե՞ս ավարտեր Դուրյան իր հայոց մատենագրությունը՝ երբ հայ մատենագիրները դար կփոխեին իր աչքերուն տակ, դեմքեր կուրացվեին և ուրիշներ կհայտնվեին ի նորու։ Եվ սակայն ան իր որոշ տեսակետները պարզած է մեր մատենագրության նախնական շրջանի ինչ-ինչ գեմքերու մասին, որոնք այնքան վեճերու տեղի տվին վերջին տասնամյակներուն։

Այսպես, «Ցճաճախապատում»-ը, որ երկար ատեն Լուսավորչի վերագրվեցավ, ըստ Դուրյանի, հայ հեթանոսության դեմ քառորդ դարեն մը ավելի կռվող առաքյալի մը խոսքն ու գործը չեն ցոլացներ բնավ, ոչ ալ կարելի է Մեսրոպի հեղինակությունը համարել անոր պարունակած ճառերը։

Զենոբ Գլակի վերագրված պատմությունը ևս անհարազատ գործ մը կնկատե Դուրյան, իսկ ամբողջ գրվածքին վրա վերջին ու կարկատիչ ձեռք դնողն ու՝ այդպես ալ դայն թարգմանողը եղած է Հովհան Մամիկոնյան եպիսկոպոսը է դարուն։

Ըստ Դուրյանի՝ Ագաթանգեղոսի անվամբ մեզ հասած պատմությունը մասամբ միայն բուն հեղինակինն է, որ հույն էր, մնացյալ մասը խմբագրություն մը (compilation) ըլլալով հունարեն զանազան վկայաբանություններե՝ կատարված թարգմանչին ձեռքով, որ հավանաբար Կորյունն է։ Ագաթանգեղոսի հունարեն բնագիրն ալ կա, որ սակայն հայերեն թարգմանության վրայեն եղած հունարեն թարգմանություն մըն է, բայց ոչ ամբողջական։

«Փավստոս,— կըսե,— ծագումով հույն մըն է, կանուխեն սակայն ապրելով հայոց մեջ, հայացած է գրեթե... այն կարծիքը, թե Փավստոս հայերեն գրած ըլլա իր գործը՝ բնավ հավանություն չունի, ոչ միայն որովհետև գրի գյուտեն առաջ արդեն մեռած էր ան, այլև հնար չէր, որ օտարազգի մը այնքան ճոխ ու հարդ հայերի լեզվի մը տիրապետած ըլլար իր ժամանակին. հայտնի է ուրեմն, որ հունարեն լեզվով գրեց Փավստոս իր Պատմությունը որ հետո հայերեն թարգմանվեցավ առաջին թարգմանիչներեն մեկուն ձեռքով»։

Խորենացիի ապրած դարուն մասին, որ կես դարեն ի վեր բուռն վեճերու նյութ է, շատ չի ծանրանար Դուրյան, և անցողակի կհիշե միայն, որ Կարրիեռ ֆրանսացի բանասերը «Խորենացիի Պատմության աղբյուրներուն մեջեն դուրս բերավ այնպիսի փաստաթղթեր, որոնք Զ և է դարերուն կվերաբերեին։

Դուրյան տրամադիր չէ սակայն նվիրագործված արժեքները մեկ անգամեն քանդելու։ Եթե կտրուկ է Լուսավորչի վերագրված «Ցճաճախապատում»-ը մերժելու ատեն, մյուս կողմե, սակայն, կզգուշանա Զենոբ Գլակը բոլորովին կրակը նետել ըսելով, որ «գրքի մը անհարազատ հանգամանքը կամ ա՛յս կամ այն կամայական հավելվածներով կրած ընդմիջարկումներն որչափ ալ կցկտուր ու անպիտան գործեն դայն՝ չեն կրնար բոլորովին անոր պատմական բունին վնասել տիրապետ», որովհետև «ստոստպեր

անգամ իրենց գոյութեան որևէ հիմ կրնան ունենալ, ո՛րչափ ևս առավել պատմական իրողութեանց վրա հորինված գիրք մը՝ թեպետ մեր նշանակած խորին այլակերպութիւններեն անցած ըլլա այնչ («Պատմութիւն հայ մատենագրութեան», էջ 427)։

Բայց այսուհանդերձ բավական նյութ թողած է մեզ Դուրյան հետամահու տպված իր հատորներուն մեջ։ Մեր անցյալով զբաղողները կրնան անոնցմե շատ բան ուսանիլ, մանավանդ իր ողջամիտ տեսութիւններեն, զորս տեղ-տեղ կսպրդեցնե։

Եթե իր այդ երկերը չկարենան իսկ պատվանդանը դառնալ փառքի մը, բավական են գիտնական մը վճռելու համար Եղիշե Դուրյանի մեջ։

15. ԴՈՒՐՅԱՆ ՄԱՐԴԸ

Դուրյանի ստորագրիներուն վրա շուք կձգեր սակայն մեծագույնը իր առաքինութիւններեն՝ մարդը։

Քիչեր մեր հոգևորականութեան մեջ կըրցած են այնքան խաղաղ ըլլալ իրենց խառնվածքով, որքան պայծառ իրենց նկարագրով, ինչպես Դուրյան, զոր ունեցեր էր առաջին օրեն և որ երբեք չբաժնվեցավ իրմե, հակառակ գործունեութեան այլազան մարզերուն, ուրկե իր կյանքը անցավ, և միջավայրերուն, զորս ան փոխեց։

Հակառակ իր շուքին ու ներշնչած պատկառանքին, ամեն բանե առաջ համեստ էր Դուրյան։ Համեստութիւնը բացառիկ առաքինութիւն մը չէ ինքնին, բայց անմիջապես ուշադրութիւն կդրավե ան, երբոր այնքան ուրիշներ պուտ մը արժանիքի համար, և երբեմն նույնիսկ առանց այդ ալ ունենալու, կփքին ու կգոռոզանան։ Բոլոր մեծ մարդիկը համեստ եղած են, որովհետև կարիք չեն ունեցած ոչ հպարտութեան, ոչ ալ ինքնապարծութեան՝ պարտադրելու համար իրենք զիրենք։ Համեստութիւնը Դուրյան չէր հասցներ սակայն խոնարհութեան այն ձևին, որ իր կեղծ բնույթը իսկույն կմատնե։ Ան տե՛րն էր իր պատկառանքին։

Որովհետև վերեն կնայեր մարդոց ու անոնց գործերուն վրա՝ զայն սկեպտիկ կարծած են շատեր. սկեպտիկ մը չէր, որովհետև իր հավատքն ուներ, թեև այդ հավատքը կույր ու բնազդական հավատքը չէր, որ մարդոց մտածումը կքարացնե։ Ավելի ստոյիկյան մըն էր ան, որովհետև արհամարհել գիտեր ու վեր կանգնիլ կիրքերեն, որովհետև տքնիլ կրնար՝ հասնելու համար կատարելութեան և իր հոգին ամուր կպահեր ինչպես փառքին՝ նույնպես հարվածներուն դիմաց։ Վեր մնալ կիրքերեն, ոչ ընկճվիլ վիշտերու պահուն և ոչ ալ ոգևորվիլ հաճույքով, վաղանցուկ սեպել ամեն փափագ ու պատրանք՝ ամեն վայելք. այս է եղած իր փիլիսոփայութիւնը։

Զվարթ էր իր սովորական կյանքին մեջ ու զվարթախոհ՝ նույնիսկ իր ամենեն մռայլ վայրկյաններուն, ինչպես կվկայեն զայն իր մտերիմ կյանքին մեջ ալ ճանչցողները։ Բայց մանավանդ մեծ հեգնող մըն էր ու կըրնար մեծ երգիծաբան մը դառնալ՝ եթե թուղթին ալ հանձներ հեգնութեան իր գոհարները, զորս գիտեր սփռել աչ ու ձախ, ամեն մեկ առթիվ։

Բուխարեստեն մեկնելե առաջ, երբ իր վերջին խոստովանութիւնները կըներ ինձ Օտյան 1924-ին, պատվիրելով, որ զանոնք տպեմ մեռնելեն հետո միայն, կըսեր ի միջի այլոց, թե մեծագույն երգիծաբանները, զորս ճանչցած է, Արփիարյանն ու Դուրյանը եղած են, թեև անոնցմե առաջինը շատ քիչ բան գրած է իբրև երգիծանք, իսկ երկրորդը հավանաբար ոչ իսկ տող մը. բայց երկուքն ալ կրցած են վերեն նայիլ իրերուն վրա, ու հեգնել կյանքը։

Բայց իր հեգնութեան մեջ ոչ ծաղր կար, ոչ ալ խայթ. չէիր վիրավորվեր դուն իր հեգնութիւններեն։ Ամենեն կծու հեգնութիւններն անգամ ժպիտով մը կքաղցրացներ, ու կատակով մը կմեղմեր զանոնք՝ եթե տեսներ, որ խոցած էին քեզ։

Բառախաղը ևս կսիրեր, ու արդեն հոդ կհայտնվեր նաև կատակաբանը։ Ոչ ոք փորձ ըրած է հավաքել իր սրախոսութիւնները. ինքնատիպ փունջ մը պիտի կազմեին անոնք։

Բառախաղ մըն էին, օրինակ, անուններու չորս վարդապետներուն, որոնք Արմաշի մեջ իր վերջին սաները եղեր էին և զորս Իզմիրեն եկավ ձեռնադրեց՝ Շավարշ, Շահե, Պսակ ու Պարգև։

Դուրյան բացառիկ ձիրքն ուներ իր լըրջութիւնը հաշտեցնելու զվարթախոհութիւնը հետ։ Իր կատակներեն բան մը չէր կորսընցներ իր պատկառանքը։

«Դուրյանը դուրսեն ու հեռվեն դիտողներուն տպավորութիւնը այնպես կարծել կուտա,— կըսե Բարգեն,— թե անմատչելի է ան և խոժոռ։ Այդ տպավորութիւնը թեև իրական է, բայց ոչ հիմնական։ Դուրյան լուրջ է բառին գեղեցիկ առումով։ Ճշմարիտ վայելք մըն է իր մտերմիկ կենցաղը իր աշակերտներուն և բարեկամներուն շրջանակին մեջ։ Զվարթութիւնը կճառագայթե իր էութենեն, կատակներ, մանրագեպեր կհաջորդեն իրարու։ Իր գրական բյուրեղ հայերենը

կերանգավորվի Կոստանդնուպոլսի ռամկորենով՝ այն ատեն, երբ կուզե իր կատակներուն և մանրադեպերուն վրա դարնել ինքնատպութեան դրոշմը։

Ժպիտ կար արդարև իր լրջութեան մեջ, և իր ժպիտին մեջ՝ լրջութիւն, որովհետև ժպիտը միշտ հրճվանքի նշան չէ. մոռալ մտածում մը, կնճիռ մը, մորմոք մը կծածկե հաճախ ան մեզմե։

Իր ժպիտին ակնարկելով Թորգոմ եպիսկոպոս կըսե.

«Անուշ՝ ինչպես բարքը, հանդարտ՝ ինչպես իր նկարագիրը, վճիտ՝ ինչպես իր սիրտը, իր էութեան ցոլքը, իր հոգիին խաղաղութեան ծաղիկն է ան»։

Անհիշաչարութիւնը ևս իր նկարագրին հիմնական գիծերեն մեկն է եղած։ Ամեն մեկը թող իր վրա չափե. ու պիտի զգա, թե որքան դժվար քան է անհիշաչար ըլլալ կյանքին մեջ. մոռնալ քեզ հասցված չարիք մը, մտքեդ սրբել նախատինք մը, որուն առարկա ևս եղած, երբեմն իսկապես հերոսութիւն է աշխարհի մը մեջ, ուր մարդը կշարունակե գալլ մնալ մարդուն։ Ոմանք շուտ մը կմոռնան, որովհետև կվախնան ոսոխ ստեղծելե, ուրիշներ կներեն իսկույն՝ անկարող ոխ պահելու։ Բայց և կան մարդիկ, որոնք կարհամարհեն չարիքը, որ իրենց հասցված է, թշնամութիւնը, վիրավորանքը։ Դուրյան անոնցմե էր։ Զըսենք, թե միայն վարդ քաղեց ան կյանքի մեջ, և հաւածանք բնավ չտեսավ։ Բայց ան կրցավ վերեն նայիլ։ Երբ կարհամարհես թշնամիդ՝ անզոր կդարձնես զայն հաճախ։

Հաղորդականութիւնը իր նկարագրին մեկ ուրիշ գիծն էր։ Ան քեզ իրեն կկապեր առաջին իսկ հպումիդ։ Ճիշտ է՝ ան չէր մերձենար լրիվ, անջրպետ մը միշտ կպահեր իր և խոսակցին միջև, և այդ անջրպետը ավելի ևս կխորանար իր հարկադրած պատկառանքովը. բայց ան ժպիտով մը, կատակով մը կվերցներ իսկույն այդ անջրպետը, ու թույլ կուտար, որ մոտենաս իրեն։

Զգայուն էր, բայց և պաղարյուն։ Շատ անգամ զարմացած եմ, թե ինչպես կրնար այդքան սառն մնալ ինք, երբ ուրիշներ պիտի հուզվեին, պիտի վրդովեին իսկույն։ Ինքն իսկ պատմած է, թե հազվադեպ են եղած հուզման իր վայրկյանները։ Մեկը, օրինակ, այն պահն է եղած, երբ շրթունքները հպած են Մեսրոպի գերեզմանին։

Առաքինութիւններ կան, որոնք արժանիք մը չեն հաճախ. զանոնք մարդ ունի անգիտակցորեն։ Դժվար չէ, օրինակ, բարի ըլլալ, գթասիրտ, ներող։ Տկար հոգիով մարդիկ շատ դյուրավ կրնան խղճալ, ողորմիլ։ Մարդիկ ալ կան, որ չեն կրնար ատել, և ուրիշներ, որոնք անընդունակ են կիրքի, չարիքի։ Ճշմարիտ առաքինութիւնն այն է, որուն մարդ կմղվի գիտակցութեամբ, իր իսկ կիրքերն ամլացնելով, բան մը զոհելով սեփական եսեն։

Դուրյան առաքինի էր այս իմաստով միայն։ Իր հեզութեան մեջ գիտակցութիւն կար, և իր բարութիւնը բնազդական զգացում մը չէր միայն, զոր մարդ կշռալլե առանց ուզելու։

Ու փոխարեն որքան թերութիւններ կան, որոնք արժանիք կհանդիսանան տրված պահու մը։ Որքան անհրաժեշտ կդառնա երբեմն անկարեկիր մնալ դեպքերուն առջև, պահ մը խիղճը քնացնել, երբ ավելի մեծ շահեր վտանգի տակ են և արցունքներն իսկ չազդվիլ։ Երբ փոթորիկներուն մեջեն նավ մը կառաջնորդե մարդ՝ չի կրնար շատ մը զգացումներ ներսը չխեղդել։

Դուրյանին պակսեցան այդ ամուր ջիղերը. ինչպես գիտենք՝ վանքի մեջ մարզված ոգվով փորձեց Կոստանդնուպոլսո պատրիարքութիւնը վարել. չգիտցավ, թե քաղցրութեամբ կարելի չէ միշտ վճռները սանձել՝ երբոր մանավանդ անոնք բռնկած են լրիվ, և հովվական սրնգի մը ուժով կարելի չէ խաղաղցնել փոթորկած կիրքերը։

Հիմա, որ իրենց վախճանին կմոտենան այս նոթերը, հարկ կզգամ ճշտելու, թե կենսագրություն մը չէ որ ուզեցի հորինել, ոչ ալ վերլուծելու մարդու մը գործը։ Փորձ մըն էր միայն այս՝ մարդ մը ներկայացնելու իր կյանքին ու գործին գլխավոր գիծերուն մեջ այնպես, ինչպես որ կրցեր էի զայն ճանչնալ։ Այս էջերը ուրիշ արժանիք չունին, բայց եթե իրենց անկեղծությունը։ Եվ այդ անկեղծությունն է, որ ինձ թույլ կուտա ըսել, թե տարիները կատարեցին իրենց ճակատագրական դերը. զեղչեցին շատ բան հմայքեն, զոր Դուրյան վայելեց ամբողջ կյանք մը. բայց չկրցան պզտիկցնել մարդը։

16. ԶՈՒԳԱԿՇԻՌ ՄԸ

Մարդոց դիմագիծը տալու համար զուգակշիռներու դիմելու դարը անցած է վաղուց։ Մարդիկ կդատվին իրենց իսկ կյանքով, իրենց իսկ դերով։ Իրենք իրենց մեջ ամբողջություն մըն են. անոնք կբացատրվին առհասարակ իրենց բովանդակ շրջապատով ու դեպքերով, որոնց կխառնվին։

Եվ եթե կփորձվինք երկու մեծ հոգևորականներուն զուգակշիռն ընել հոս՝ անոր համար է միայն, որ հաճախ հակադրված են անոնք իրարու, մանավանդ իրենց գործակցության շրջանին, և նաև անոր համար, որ

երկու ուրույն հոսանքներ ստեղծված են իրենք անձին շուրջ, նույնիսկ անկախ իրենցմէ, այդ՝ սկսելով Արմաշեն։

Գաղտնիք մը չէ ոչ ոքի, որ Արմաշի իրենց սաներուն մէջ իսկ անոնք ունեցած են իրենց ուրույն համակրողները՝ օրմանյանականներ և դուրյանականներ, եթէ կարելի է այսպես որակել դպրոցական գրասեղաններու վրա արտահայտված նախասիրությունները, որոնք դուրսը չեն տեսեր հաճախ։

Բայց օրմանյանականներ և դուրյանականներ դուրսն ալ կային, մանավանդ Կոստանդնուպոլսի մամուլին մէջ, Երբեմն մը էր, երբ Կոստանդնուպոլսի մամուլին մէջ կային Օրմանյանի ուխտյալ հակակիրները, թեև քողի տակ։ Դուրյանը համակրանքով պարուրելով՝ կկարծեին հարվածած ըլլալ օրվան պատրիարքը։

Գաղտնիք մը չէ նույնպես, որ Կոստանդնուպոլսի մամուլին վերաբերումը դեպի Օրմանյանն ու Դուրյանը՝ կտարածվեր նաև անոնց ձեռնասունը կարծվածներուն վրա։ Թերթեր կային, օրինակ, որոնք խեթով կնայեին Բարգենի վրա,— Կիլիկիո ապագա կաթողիկոսին,— զոր Օրմանյանի ձեռնասունը կնկատեին ու պաշտպանյալը, մինչ Մուշեղ՝ հետագային արքեպիսկոպոս և ի վերջո կաթողիկոս՝ շատերու համակրանքն ուներ, իբրև թե Դուրյանի ձեռնասունն եղած ըլլար։

Մեր կարծիքով սխալ է սակայն Արմաշը տեսակ մը աղդեցությանց գոտի-ներու բաժնել, և փորձել անոր վարիչներուն ուրույն դերը փնտռել հոգևորական նոր սերունդի պատրաստության մէջ։

(Ընենք փակագծի մէջ, որ եթե անպատճառ ձեռնասունները պետք ըլլար վերագրել Արմաշի զույգ սյուներեն մեկուն կամ մյուսին, արդար էր Բարգենը նկատել իսկապես Օրմանյանիները՝ խառնվածքներու, աշխատանքի մեթոդներու և պտղաբերության տեսակետով ալ, բայց երբեք Մուշեղը՝ Դուրյանինը, որուն հոգիեն ոչինչ ժառանգած էր, բացի գրելու և խոսելու որոշ շնորհե մը։ Դուրյանի իսկական ձեռնասունը Թորգոմն էր, որ Երուսաղեմի Աթոռին վրա իր հաջորդը պիտի ըլլար, ինչպես եղեր էր Արմաշի մէջ, և որ ոչ միայն գրագետի և բեմբասացի ձիրքերը ժառանգած էր Դուրյանեն, այլև գիտակցությունը անոր սկսած մեծ առաքելության, սերունդ ձգելու իրմե ալ հետո)։

Հակոտնյա տիպարներ էին անշուշտ հայ հոգևորականության երկու մեծ դեմքերը՝ Օրմանյան և Դուրյան, հակոտնյա՝ իրենց խառնվածքով և նախասիրություններով, վարվելու կերպով և իրենց գրական երկով։

Օրմանյանի մէջ դատողություն, տրամաբանություն, բայց և կիրք կար, երբ տեսակետ կպարզեր, Դուրյան կվախնար համոզում դոյացնելե. վերջնական տարաձներ բանաձևելե, միշտ անձնատուր էր տարակուսանքու, միշտ տատամսող ու միշտ վերապահ։

Օրմանյան սառն էր, նույնիսկ ամենեն վրդովիչ դեպքերուն առջև անտարբեր և հաճախ կոպիտ՝ մարդոց հանդեպ իր վերաբերմունքին մէջ, Դուրյան՝ բարի և քաղցր ժպիտ մը ուներ ամենուն ու ամեն բանի համար. Օրմանյան կծիծաղեր լիաթոք, մինչ Դուրյան անուշ մը կհեգներ իր խոսակիցը։

Օրմանյան քեզ կընկճեր իր փաստերուն հեղեղին տակ, Դուրյան իր նայվածքովը դինաթափ կըներ քեզ։

Օրմանյան չոր թիվերու և չոր փաստերու մարդն էր արդարև, և անոնց ուժով կհամոզեր քեզ. Դուրյան կսավառներ. բարձունքե բարձունք, կվերանար ու կվերացներ քեզ։

Օրմանյան լիառատ տվավ ինչ որ ամբարած էր, Դուրյան ժլատ եղավ հանրության տալու իր մթերածը, ոչ իսկ թուղթին հանձնեց լրիվ ինչ որ ուներ էր գրքերեն ու պրպտումներեն։

«Օրմանյան կխոսեր և կգրեր միշտ. Դուրյան կկարդար միշտ և կլռեր»,— կըսե Բարգեն։

Դուրյան կսիրեր որոնել, զննել անընդհատ, կրկին որոնել ու կրկին զննել. Օրմանյան իսկույն թուղթին կհանձներ ինչ որ կրցած էր քաղել իր պրպտումներեն։

Օրմանյանը քեզ երկյուղ կազդեր և ակնածանք ալ. կսոսկայիր իր ուժեն, ու կխոնարհեիր իր պաշարին, իր կորովին, իր կամքին առջև. դժվար կսիրեիր զինքը. մեծ մարդիկ կան, որ քեզ կվանեն, ինքն անոնցմե էր. չէր մերձենար քեզ, ու քեզ չէր մերձեցներ իրեն։ Դուրյան ճիշտ հակառակն էր. քեզ կկախարդեր հպած իսկ պահուդ, ու ա՛լ հավիտյան դուն անորն էիր։

Արտաքինով տպավորողներու համար ևս տարբեր էին երկու հոգևորականները. տարբեր էին անոնք իրենց ներշնչած պատկառանքով. Դուրյան օժտված էր բնության շնորհներով ալ, ու տպավորիչ էին կերպարանքը, ձայնը, նայվածքը։

Բայց այս երկու հակոտնյա մարդիկը չէին հակասեր երբեք իրարու. անոնք զիրար կլրացնեին։ Արմաշի սերունդը երկուքին ալ դրոշմը կրեց։

Կար գիծ մը, որ կկապեր արդարև երկու մեծ հոգևորականները,— իրենց անխարդախ հայրենասիրությունն էր այդ, իրենց պաշտամունքն էր դեպի Եկեղեցին, որուն կոչված էին ծառայել, իրենց ճգնելու անհողդողդ ճիգն էր։

17. ԻՐ ՏԵՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շատ դժվար բան է պատմության մեջ տեղ հատկացնել մարդոց, եթե նույնիսկ այդ պատմությունը մեզ նման փոքրիկ ժողովուրդի մը ըլլա։ Ոչ չափանիշներ ունինք մարդիկը դատելու ատեն, ոչ ալ կշիռ մը ամեն մեկուն վաստակը դատելու համար։

Ավելի դժվար է սակայն, երբ հարցը Դուրյանի կուգա։ Բազմաթիվ երեսներով կներկայանա ան, ու կշվարիս, թե անոնցմե որո՛ւն նախապատվություն տաս։ Կշվարիս, որովհետև մարդիկ իրենց նախասիրությունն ունին արժանիքներ փնտռած ատեն մեկու մը վրա ու չես գիտեր որո՛ւն նախասիրությունը քեզ նժար ընես։ Մարդոց պես նախասիրություններ ունին շրջաններն ալ. այսօրվան պանծացված արժանիք մը վաղը կրնա քմծիծաղ շարժել, և փոխադարձաբար։ Ու կշվարիս վաղվան առջև ալ։

Մարդիկ կան, որոնց նտևեն շոշափելի հետք մը կմնա, կոթող մը, բացառիկ երկ մը, որոնց արժեքին համեմատ տեղ մը կփնտռես իրեն իր ժամանակակիցներու շարքին մեջ։ Դուրյանին տեղ մը գտնել դժվար է այդ տեսակետով ալ։ Ան չի թողուր աչքառու վկայական մը, որով վաղվան սերունդներն ալ կարենային ճանչնալ զայն իր հետքերեն. մենք կրցանք ճանչնալ զայն շնորհիվ իր հետ ունեցած մեր հպումին։

Դուրյանեն ալ, անշուշտ, շատ բան կմնա։ Կմնան նախ իր գրական ու գիտական երկերը։ Իր գրական երկերեն պիտի ապրին իր քերթվածներեն ոմանք, ու իր գիտական աշխատանքներեն ոմանք պիտի հիշատակվին։

Բայց այդքանը քիչ է, որպեսզի ապրողներս Դուրյանը կարենանք հանձնել մեզմե ետքիններուն։ Այդքանով՝ ապագա սերունդները պիտի չկրնան Դուրյանն ըմբռնել։ Ակնածանքով պիտի կարդան անոր կենսագրությունը, ու պիտի զմայլին հիսուն տարիներուն առջև, զորս ան քամեց հայ ժողովուրդին համար։ Բայց պիտի չկրնան ըմբռնել մարդը այնպես, ինչպես որ էր, ոչ ալ հմայքը, զոր ան տարածեց իր շուրջը։

Ի՞նչ փաստ ցույց տանք մենք անոնց, որպեսզի ամբողջական դառնա իրենց պատկառանքը։

Այո՛, պիտի ըսենք մենք անոնց, թե Դուրյան մեծ էր նախ իր նկարագրով, իր կենցաղով, իր վերաբերումով դեպի ուրիշը։

Պատմության անցնելու համար, չի բավեր սակայն առաքինի ըլլալն ալ։ Ինչքան առաքինություններ մոռցած է ու կմոռնա պատմությունը, ինչպես կմոռնա բարոյական բիծերը ևս մարդոց՝ անոնց գործը դատելու ատեն։

Ու, պիտի ըսենք դարձյալ հաջորդ սերունդին, թե Դուրյանի հմայքը իր անձի մեջն էր ավելի, անոր խոսքին ու ժպիտին մեջ, հրապույրին մեջ իր դասերուն, իր քարոզներուն գեղեցկությանը ու իր զրույցներուն քաղցրությանը մեջ։ Ոչ ոք կրնար արբեցությամբ լեցնել անոր պես իր ունկնդիրները և առինքնել իր խոսակիցը։ Պատմության անցնելու համար չեն բավեր նաև ասոնք։

Եվ պիտի ըսենք վերջապես, թե Դուրյան մեծ եղավ մանավանդ շունչով, զոր տարածեց իր շուրջը, թե այդ շունչը կշարունակվի սերունդներուն մեջ, որոնք իր ձեռքին անցան, ու անոնց հաջորդող սերունդին մեջ ալ։

Անգութ դատավոր է ժամանակը։ Ինչքան կուռքեր փշրած է ան, ու ինչքա՜ն նորեր կանգնած։ Ու զարմանալի չէ, որ փշրածը կկառուցանե ան կրկին, ու կփլցնե ինչ որ կանգնած է հետու։ Ինչե՞ր պատվանդան կելլեն մեր աչքերուն առջև, ու ինչե՞ր կգտորին անդունդը։ Ամեն դար իր նժարն ու իր չափանիշը ունի։

Բայց չափանիշ մը կա, զոր պիտի չկրնան փոփոխել դարերը։ Ի՞նչ ըրիր մարդկության համար, ու քու ժողովուրդիդ համար նախ։ Ի՞նչ տվիր անոր համար քու ներսեդ։ Կրցա՞ր ետդ պահ մը ուրանալ, քունդ ու հանգիստդ քամահրել, վատնել հոգիիդ ու աչքերուդ կրակը, բան մը զոհել դուն քեզմե։ Բարիքը, զոր մարդ կընե շուրջինին, պտուղը, զոր կբաշխե աջ ու ձախ, հետքը, զոր ան կձգե, հարաբերական իմացություններ են լոկ։ Կան ու չկան։ Կրցա՞ր տալ ինչ որ ունեիր։ այն ատե՛ն է որ կատարած ես պարտքդ։

Դուրյան իր պարտքը լրիվ հատուցց իր ժողովուրդին։ Ան տվավ ինչ որ կարծեց, թե իրն է։ Ներսը մաղեց ինչ որ կցրած էր ժողվել ու տվավ ինչ որ կարծեց, թե կրնար տալ իր նմաններուն։ Ժլատ կարծեցինք զայն, բայց չտեսանք իմաստությունը, որ ծածկված էր այդ ժլատության մեջ։

Ան իր հոգին լրի՛վ բաշխեց մարդոց։

Վաղվան մարդիկը այսպես արձանագրված պիտի գտնեն իր անունին դիմաց։

ՊՐՈՖ.– ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ–ԲԵԿ
(Գիտության վաստակավոր գործիչ)

ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ՝ ԺԱ—ԺԲ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ ԵՎ ԹՈՆԴՐԱԿԵՑԻ ՈՒ ԵԱՑԹ ՀԱՅԵՐԸ

Ասյն -բյուզանդական և հարակից մտայնության դեմ հայ իրականության մեջ գաղափարական պայքար էր մղվում ԺԱ—ԺԲ դարերում երկու ճակատով[1]։

Դրանցից մեկն էր «հյուսիսային վարդապետներ»-ի մղած պայքարը, ղեկավարությամբ խոշորագույն գիտնական Սոփեստոս Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու։ «Հյուսիսային վարդապետներ»-ի մասին ԺԳ դարի անանուն վրաց պատմիչը իրավամբ գրել էր. «Նրանք պարծենում էին նրանով, որ հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին»[2]։

Պայքարի երկրորդ ճակատը ղեկավարում էին Տարոնում «հարավային վարդապետներ»-ը, որոնց գլխավորում էր Պողոս Տարոնեցին։

Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատեցու և Պողոս Տարոնեցու՝ այս երկու պայծառ դեմքերի՝ ուսերին էր ծանրանում գաղափարական պայքարն ընդդիմադիր ուժերի ոտնձգությունների դեմ։

Մինչ Հովհաննես Սոփեստոսի կյանքը և գրական վաստակը մատենագրական տեսակետից բավականին լուսաբանված են, Պողոս Տարոնեցուն դեռևս մնում է մշուշի մեջ։ Այս հոդվածում նպատակահարմար ենք գտնում խոսել նրա կյանքի և գործունեության մասին։

***

Պողոս Տարոնեցու կենսագրության և գրական գործունեության վերաբերյալ մենք ունենք միմիայն կցկտուր տեղեկություններ հայ և օտար աղբյուրների մեջ։

Պողոս Տարոնեցուն սովորաբար դասում են ԺԱ դարի մատենագիրների շարքը[3]։ Բայց դա ճիշտ չէ, քանի որ Պողոսը, Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, մահացել է 572 (=1123) թվականին, 6 տարով միայն կանխելով Հովհաննես Սոփեստոսի մահը։

Մատթեոս Ուռհայեցին, որի վկայությունը միակն է Պողոս Տարոնեցու կենսագրության մասին, գրում է հետևյալը. «Ցայսմ

1 Տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետաց հայոց հյուսիսային կողմանց», Թբիլիսի, 1938, էջ 160—162 (վրացերեն)։ Նաև մեր գրախոսականը՝ «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, 1957 թ., № 4, էջ 120—121։

2 Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. Ա, էջ 218։

3 Գարեգին վրդ. Զարբհանալյան, «Հայկական հին դպրության պատմություն», Դ—ԺԳ դար, Գ հրատ., Վենետիկ, 1897, էջ 605։— Աբր. Զամինյան, «Պատմություն հայ գրականության», մասն Ա, Նոր-Նախիջևան, 1915, էջ 163—164։ Ի դեպ նշենք, որ «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա»-յում (Երևան, 1941) Պողոսի անունը նույնիսկ չի հիշվում։

ամի [ՇՀԲ] մեռաւ մեծ իմաստասէրն Հայոց Պողոս վարդապետն։ Սա երևեալ այր հրաշալի, տեղեակ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ։ Սա հասեալ շնորհացն առաջին սուրբ վարդապետացն և երկրորդ լուսաւորիչ երևեալ տանս Հայոց և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց, և յոյժ ախոյեան լեալ ուղղափառաց և անպատկառելի վարուք ի կեանս իւր կացեալ ընդդէմ հերետիկոսաց։ Եւ էր սա ի Տարօն գաւառէն։ Ցայսմ ամի մեռաւ և թաղեցաւ ի վանս Ղազարու մերձ ի Սասունս[4]։

Պողոս Տարոնեցու երկերից մեկին՝ «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» աշխատութեան հետագայում կցված հավելվածում (ԺԸ դարում), որը «Զեկուցումն Ոտ բարեսէր ընթերցողդ վասն հեղինակին դրքոյս» վերնագիրն է կրում, նրան հետևյալ կերպ են բնութագրել. «...ի ժամանակին յայնմիկ նա միայն ունէր ղշնորհս իմաստութեան և վարդապետութեան ի մէջ ազգին Հայոց, որպէս և առաջին իմաստասէրքն տանս Հայոց։ Որ և էր բանիբուն և կարի հմուտ Հնոց և Նորոց Կտակարանաց և լցեալ ամենայն գիտութեամբ աստուածեղէն Սուրբ Գրոց... Այլ [հակառակորդքն] աղքատ հմտութեամբ ջանացեալ ընդդէմ հզօր գիտնականիս այսմիկ և իմաստասիրի Հայոց մաքառիլ, որ առժամայն լի ամօթով լեալ յաղթահարեցան ի սոյն վարդապետէս Հայոց»[5]։

Պողոս Տարոնեցու երկերը բազմաթիվ ձեռագրերով են հասել մեզ (Վատիկանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանց, Հայաստանի Մատենադարանի և այլն)։ Այդ երկերի վերնագրերում նա կոչվում է «եռամեծ և բանիբուն ուղղափառ վարդապետ»[6], «գործնական և արդիւնական վարդապետ Հայոց մեծ Պողոս Ղազարու վանից վանական»[7], «Պողոս վարդապետ Ղազարու վանիցն վանական»[8] և այլն։ «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկում նա կոչվում է «երանելի Պողոս Տարօնացի յաղթող ախոյեան վարդապետ»[9], իսկ ինքը հեղինակը նույն երկում իրեն անվանում է. «Ես, նուաստ ծառայս Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, վարդապետ Պողոս»[10]։

Տարոնի Առաքելոց վանքի մեծ ճառընտիրի մեջ պահպանված է «Իշխանի Տարօնոյ և ամենայն Հայոց՝ Զորտուանելի, որդւոյ Տաճատայ քաջի Մամիկոնոյ»[11] հիշատակարանը, 553 (=1104) թվականին գրված, հետևյալ բովանդակությամբ. «Գնացի ի սուրբ ուխտ Առաքելոցն Ղազարու վանաց՝ առ ծերունի[12] և մեծ հռետորն Հայոց Պողոս. խնդրեցի ինձ գերեզման ի դուռն սուրբ ուխտին»[13]։

Հետևապես, 1104 թվականին Պողոս Տարոնեցին ծերունի է եղել։ Իսկ այդ նշանակում է, որ նա ծնված պիտի լինի ԺԱ դարի առաջին կեսին գոնե, ավելի ճիշտն ասած՝ նույն դարի երկրորդ քառորդում։

Պողոս Տարոնեցին ծագումով եղել է Տարոնից, ուստի և «Տարոնեցի» կամ «Տարոնացի» է կոչվել։ Եղել է վանական Սասունին կից գտնվող «Ղազարու» վանքում, ուր և վախճանվել ու թաղվել է, ինչպես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը ենթադրում էր. «Թարգմանչաց գերեզմաններուն կարգին, ինչպես ցայսօր կտեսնվի»[14]։

Պողոս Տարոնեցին ուներ մեծ գիտնականի, իմաստասեր-փիլիսոփայի և աստվածաբան-դավանաբանի համբավ։ Նա միաժամանակ մեծ ջատագով է եղել Հայոց Ազգային Եկեղեցու անկախության և սաստիկ պայքար է մղել հունադավան-քաղկեդոնիկների դեմ, ուստի և իրավամբ հոչակվել է իբրև «երկրորդ լուսաւորիչ տանս Հայոց» և «վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց»՝ ըստ վկայութեան Մատթեոս Ուռհայեցու, իսկ ըստ Հ. Մ. Ջամչյանի՝ «ասի առաքեալ Մշոյ յերկրին Տարօնոյ»[15]։

Խոսելով Պողոս Տարոնեցու մասին, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը նշում է, միաժամանակ, որ նա «Ղազարու վանքին կամ Տիրինկատարի Առաքելոց վանքի առաջնորդն եղավ»[16], որ, սակայն, չի ապացուցվում սկզբնաղբյուրներով։ Իսկ «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկի առաջաբանում նա կոչվում է «հռետորն Հայոց... Պողոս՝ ի

---

4 «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», երուսաղէմ, 1869, էջ 446=Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 355—356։

5 «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», Կ. Պոլիս, 1752, էջ 323—334։

6 Հակոբոս վրդ. Տաշյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895 թ., էջ 578։

7 Նույն տեղում, էջ 767։

8 Նույն տեղում, էջ 769։

9 «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 1։

10 Նույն տեղում, էջ 13։

11 Ն. Ադոնց, «Տարոնցիները Հայաստանում և Բյուզանդիայում», «Բյուզանդիոն», հատ. Ժ, Բրյուսել, 1935, էջ 549 (ֆրանսերեն)։

12 Ընդգծումը այստեղ և ստորև մերն է։— Լ. Մ.-Բ.։

13 Հ. Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, էջ 395։

14 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատ. Ա, էջ 1394։

15 Հ. Մ. Ջամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, էջ 51։

16 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատ. Ա, էջ 1394։

վանսն (տպված է՝ վանէն— Լ. Մ.-Բ.), որ կոչի Ղազարու, մերձ ի գաւառին Տարօնոյ, որ էր վիճակ Սասնոյ»[17],

Վրաց աստվածաբանական-իմաստասիրական-քերականագիտական գրականության մեծագույն ներկայացուցիչ, ԺԷ դարի գիտնական Անտոն Ա Բագրատիոն արքայազն կաթողիկոսը, հետևելով Կղեմես Դայանոսին (որի անունը, սակայն, չի տալիս), հիշատակում է Պողոս Տարոնեցուն, ի թիվս միաբնակ (հակաքաղկեդոնիկ) հայ վարդապետների, հետևյալ հաջորդականությամբ. «Հովհան Օձնեցի, Պողոս Տարոնեցի, Ստեփանոս Սյունեցի, Գոշիկ վանական (այսինքն՝ Մխիթար Գոշ—Լ. Մ.-Բ.), Վարդան, Սարգիս, Մաշտոց [կաթողիկոս], Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Գրիգոր Կեչառեցի, Ղազար Ջահկեցի, Հակոբ Ակնեցի»[18],

Նույն առումով Պողոս Տարոնեցին հիշված է Անտոնի «Հակաճառութիւն» երկի Գ գրքի 23-րդ գլխում[19],

Պողոս Տարոնեցու գրչին են պատկանում մի շարք երկասիրություններ, գերազանցապես աստվածաբանական-դավանաբանական և եկեղեցական ծիսագիտության ու ժամակարգության խնդիրների շուրջը.

ա. «Թուղթ երանելւոյն Պաւղոսի Տարոնացւոյ, յաղթաւղ ախոյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոպիստեայ հռոմ փիլիսոփային»[20],

բ. «Պաւղոսի Տարոնեցւոյ եռամեծի և բանիբուն ուղղափառ վարդապետի ասացեալ՝ Ընդդէմ երկարնակաց ժողովոյն Քաղկեդոնի և այլ չարափառաց հերձուածողաց»[21],

գ. «Գործնական և արդիւնական վարդապետին Հայոց՝ Մեծին Պաւղոսի Ղազարու վանից վանականի՝ Բացայայտութիւն կարգի ժամուց աղաւթից»[22]:

դ. «Նորին Պաւղոսի վարդապետի՝ Յաղագս եկեղեցւոյ կարգաց ցոյցք»[23]:

ե. «Յաղագս Քառասնորոյց պանոց՝ Պաւղոսի վարդապետի Ղազարու վանից վանականի բացատրեալ»[24],

զ. «Յաղագս Առաջաւորացն պանոց՝ նորին Պաւղոսի ասացեալ»[25],

է. «Պաւղոսի Տարունեցւոյ ասացեալ Բան հաւատոյ»[26]:

Եվ այլն[27],

Այս երկերից, որքան մեզ հայտնի է, ցարդ հրատարակված է միայն առաջինը, որն ընդգրկում է Պողոսի երկասիրության բուն տեքստն առաջաբանով՝ 1—132 էջերում, որից հետո գալիս է «Ջեկուցումն առ բարեսէր ընթերցողդ վասն հեղինակին գրքոյս»՝ 323—334 էջերում, անվանացանկը՝ 335—355 էջերում և հիշատակարանը՝ 356—357 էջերում։ Գիրքը տպված է Կոստանդնուպոլսում ՌՄԱ(=1752) թվականին ջարդեամբ Ապուչեխցի Հովուենց հանգուցեալ մահտեսի Պաղտասարի որդւոյն՝ մահտեսի Խաչատուրին և Գէորգ աղայինն։

«Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» կամ, որ միևնույնն է, «Պատասխանի առ Թէոպիստէս», հավանական է հորինված լինի Զորտուանել ազգատոհմի որևէ ներկայացուցչի հանձնարարությամբ, ոչ շուտ քան ՇՌ=1101 թվականին, եթե, իհարկե, ընդունենք, որ այն գրվել է Թեոպիստեի գրությունը ստանալուց (ՇՌ=1101 թ. օգոստոսին)[28] անմիջապես հետո։

Ընդ սմին Լ. Մ. Ջամչյանը հաղորդում է, որ «այս գիրք Պողոսի Տարօնացւոյ մերժեցին Հայք ի ժամանակս Մխիթարայ կաթողիկոսի ի բանն, զոր գրեցին ի Հռոմ, որպէս տեսանել ի հաւաքմունս ժողովոց[29]. հատոր իմ, երես 1267։ Եւ յետ ժամանակաց փոխանակ այրելոյ զսա տպագրեցին ոմանք ի Կոստանդնուպոլիս ի թուին Հայոց ՌՄԱ, որոյ իբր վերակացու և սրբագրիչ եղև երէց ոմն անարգ, զոր ազգն մեր իսկ մերժեալ էր յեկեղեցւոյ վասն մերժելոյ նորա զեկեղեցիս և այլն»[30],

17 Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 330։

18 «Մշդամեանց՝ վէճերաց», հրատ. Պոլիկարպոս Քան. Կարբելաշվիլու, Թբիլիսի, 1892, էջ 4 (վրացերեն)։

19 Նույն տեղում, էջ 601։

20 Հրատ. Կ. Պոլիս, 1752։

21 Հովհաննես վրդ. Մխսճյան. «Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանի», «Հանդէս ամսօրեայ», 1892 թ., էջ 310։—Հմմտ. Հակոբոս վրդ. Տաշյան. «Մայր ցուցակ», էջ 578։

22 Հակոբոս վրդ. Տաշյան. «Մայր ցուցակ», էջ 578։

23 Նույն տեղում, էջ 768։

24 Նույն տեղում, էջ 769։

25 Նույն տեղում, էջ 769։— Նաև՝ Բարսեղ վրդ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 529—530։

26 Հակոբոս վրդ. Տաշյան, «Մայր ցուցակ», էջ 722։

27 Նույն տեղում, էջ 189։— Նաև՝ Գրիգորիս վրդ. Դալեմբարյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Մինխէն», Վիեննա, 1892, էջ 26բ։

28 «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 13, հմմտ, էջ 330։

29 Ի նկատի ունի Յոհաննես Դոմինիկուս Մանսիի 30 տարբեր հատորներից բաղկացած «Մեծագույն ժողովների նոր և ամբողջական հավաքածու» շարքը, հրատարակված Ա. Զատտայի կողմից Վենետիկում 1770—1785 թվականների միջոցին (լատիներեն)։

30 Լ. Մ. Ջամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, էջ 22։

Եվ իրոք, երկասիրությանը կցված «զնկուցմանս» մեջ, որը հիշատակարանի բնույթ է կրում, այս «վերակացու և սրբագրիչը» հիշված է աշխատակիցներով հանդերձ.

«Ցիշնաջիք... զտպագրողս սորին զմահտեսի Տէր Յոհաննէս բանին սպասաւոր անուանի և նի քահանայս։

Ցիշնաջիք զաշխատաւոր գործարանիս մերոյ զշարաբարդող և զդրուագ գրոյս զՏէր Անտոնն։

Նաև զմիւս աշխատաւոր գործարանիս զբրտնաջան և բազմաշխատ զԽոյնայ Սեանցի Իգնատիոսն...»[31]։

Հ. Մ. Ջամչյանի այսպիսի վերաբերմունքը դեպի Պողոս Տարոնեցին և նրա գնահատականը վերջինիս գործունեության մասին, իհարկե, տարօրինակ չպիտի թվա։ Այնուամենայնիվ, նրա հաղորդած տեղեկությունը, որ Պողոսի՝ «Ընդդէմ Թէոպիստեայ» գրած թուղթը (պատասխանը) «մերժեցին Հայք ի ժամանակս Մխիթարայ կաթողիկոսի», արժանի է քննության։

Այստեղ հիշված Մխիթարը Մխիթար Ա կաթողիկոս Գոնեցին է (1341—1355)[32], որի օրով Հայ և Լատին եկեղեցիների միության որոշ փորձեր կատարվեցին։

Բայց շատ հետաքրքիր է միաբնակ հայ եկեղեցականների վերաբերմունքն ու գնահատականը դեպի այս երկասիրությունը.

«Անգին և աննման Գիրքս այս ոչ է կարօտ գովասանութեան, զի ինքն ինքեան բաւական գովասանութիւն է, որպէս յայտ է ամենայն քաջամիտ ընթերցողի։

Զի ոչ միայն ի մէջ Հայոց, այլև ի մէջ Հոռոմոց և Ֆրռանկաց՝ տեսեալ է իմ երբէք գայսպիսի Գիրք մի, որ ի վերայ մի միայն բանի՝ զայնքան յաւախ վկայութիւն Աստուածաշունչ Գրոց և սուրբ հայրապետաց, բարբանութեամբ հարցարանեալ և յաղթահարեալ լինիցի զհակառակորդս, որքան այս Գիրքս առնէ։ Մանաւանդ վկայութիւնք Լևոնի, զորս յառաջ բերէ վասն ցուցանելոյ դնեստորական հերձուածս նորա, ամենեին ստոյգ և ճշմարիտ են, նոյն և նմանք՝ հոռոմերէն թարգմանութեան՝ Տօմար անուանեալ թղթոյն նորա, որ գրեալ կայ ի մէջ գործոց գրքոյն Քաղկեդոնի ժողովոյն։

Ի մէջ այս գրքոյս դերկու նոր բանս ուսանիմք։ Նախ և առաջ, որ հայ հուսումքն ո՛չ թէ ի բրնէ հոռոմք, այլ ի Հայոց դարձած հոռոմք են։ Երկրորդ՝ որ յառաջ քան դխատնիլն մեր ընդ մէջ հոռոմոց և երկարնակաց, վարդապետք Սկեղեցւոյն մերոյ ամենեին ճգնաւորք և սուրբ են եղեալ»[33]։

Դարձյալ.

«... Վարդապետին քարոզելով և գրելով ընդդէմ հերձուածոց և Աշխարհականին տպագրեալ տալով և ձրրի բաժանելով զգրեանս հայրապետաց և վարդապետաց մերոց, որոց մինն և գլխաւորն՝ այս երանելի Պօղոս Տարօնացին է, որոյ Գիրքն զնրմանն իւր ո՛չ ունի և ո՛չ կարէ ունի։

Աղաչեմք ուրեմն զամենայն լուսաւորչադաւան քրիստոնեայս, զի մի ձանձրացցին իրաքանչիւր ոք զընել զայս աննման Գիրքս, և ինքեանք ընթեռնուլ և այլոց ևս ընթեռնուլ տալ, զի այսպէս յաղթեալ զփորձութիւնն հերձուածողութեան»[34]։

Պողոսի «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկը պարունակում է, ի միջի այլոց, նաև նյութեր հայ-վրացական փոխհարաբերության պատմության վերաբերյալ։

Այսպես, օրինակ, Դվինի 507 թվականի համատեղ հայ-վրաց-աղվանից-սյունյաց եկեղեցական ժողովին վրացոց մասնակցության մասին Պողոսը գրում է. «Դարձեալ վրաց մետրապոլիտն (այսպես— Լ. Մ.-Բ.) Գարրիէլ տասն և հինգ եպիսկոպոսօք եկեալ յաշխարհս Հայոց առ Բարգէն եպիսկոպոսապետն և ամենայն ուղղափառ հաւատով միաբանեալ ընդ հայրապետն մեր, նեղվեաց դժողովն Քաղկեդոնի և դամենայն հաւանողսն։ Եւ նեղվեաց դասացողսն երկու բնութիւն ի Քրիստոս»[35]։

Խոսելով Քրիստոսի ծննդյան տոնակատարության հնագույն սովորության մասին, որ կապված է եղել հունվարի 6-ի հետ[36], Պողոս Տարոնեցին հիշատակում է համապատասխան ամիսները այլևայլ ժողովուրդների մոտ՝ հրեաների, արաբների, մակեդոնացոց, եգիպտացոց, եթովպացիների, աթենացոց, բյուզանդացոց, կապադովկացոց, վրացոց, հունաց, հռոմայեցոց, ասորոց և հայոց մեջ.

31 «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 358։

32 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատ. Բ, էջ 1861—1916։

33 «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 2—3։

34 Նույն տեղում, էջ 7։

35 Նույն տեղում, էջ 133։— Հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 180—181։— Երվանդ Տեր-Մինասյան, «Բարգէն կաթուղիկոսի ժողովի թվականը և տեղը», «Արարատ», 1908, էջ 690—707։

36 Հմմտ. Նիրեմ Խուրի, «Ծննդյան տոնակատարության օրերի մասին», հրատ. Ն. Մառի, «Տեքստեր և ուսումնասիրություններ հայ-վրացական բնաբերության մասին», հատ. Ա, Պետերբուրգ, 1900 (ռուսերեն)։— Ն. Սկեկլիձե, «Հին եկեղեցում Քրիստոսի ծնունդը տոնելու ժամանակի հարցի շուրջը», «Ինչյան հոգևոր ճեմարանի աշխատություններ», 1905 թ., N 1, էջ 1—10 (ռուսերեն)։

և մասնավորապես նշված է «Վրաց՝ ապանի տասն և մէկ»-ը, հունվարի իմաստով[37]։

Ոչ պակաս հետաքրքիր են Պողոսի դատողությունները Քառասնորդաց և Առաջավորաց պասերի մասին, մանավանդ երկրորդի վերաբերյալ[38], որոնց նվիրված ունի, ինչպես վերև տեսանք, հատուկ գրություններ (Ը և Զ-ի ներքո)։

Առանձնապես նշանակալից են Պողոս Տարոնեցու արտահայտությունները բոնդրակեցի և ծայթ հայերի մասին։

Տարոնեցին գրում է։

«Եւ ոչ է արժան մեզ զբանս երկարել և ոչ յիշել զբոնդրակեցիսն։ Վասնզի ազգ մի, որ զհաւատոյն վկայ և հարստութիւն և Աստուած ոչ ունի, նորա ոչ է պիտոյ խաչն կամ եկեղեցին»[39]։

«Արդ բոնդրակեցիքն ի ձեռն չարալուր ուրացութեան իւրեանց խօսին և ասեն՝ թէ պատարագն և կամ մատաղն չէ ինչ օգուտ մեռելոց. և ահա զտաք զնոսա հաստատեալք այսմ հերձուածողացս, որք հակառակին պատարագին Քրիստոսի, որ վասն մեզաց կատարին։ Ապեկլա ոմն այր պիղծ և ալևորեալ մարմնով, դառնացեալ աւուրքք և հպարտացեալ ի դիւաց...[40]։

«Եւ արդ՝ եկեսցուք անդրէն ի տեղի պատասխանատրութեանս, զոր ունէաք ընդ յունաց, և թողցուք զպիղծ մանիքեցիսն...»։

Ապա, դիմելով քաղկեդոնականներին, Պողոսն ասում է.

«Մայթն ելից զտեղի երկոտասան ազգացն։

Արդ՝ այդպէս է ծայթն...

Ապա ուրեմն ծայթն դուք էք, որ զտեղին լցիք»[41]։

Պողոս Տարոնեցու «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկասիրությունից քաղած այս մեջբերումների մեջ երկիցս հիշված են բոնդրակեցիք, մի անգամ՝ մանիքեցիք և երեք անգամ՝ ծայթն։

Քանի որ Բոնդրակեցիների և ծայթերի հիշատակությունն առնվում է Հայաստանի ԺԱ—ԺԱ դարերի անցքերի հետ, կուզեինք մի քանի խոսք ասել սրանց մասին[42]։

Ճիշտ է, որ Պողոս Տարոնեցին գրեթե ոչ մի նոր բան չի ասում Բոնդրակեցիների մասին, իր նախորդների համեմատությամբ. որպիսիք են (չհաշված Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցուն և Ներսես Շնորհալուն)՝ Անանիա Նարեկացին[43], Գրիգոր Նարեկացին[44], Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը[45], Արիստակես Լաստիվերտցին[46] և Գրիգոր Մագիստրոս Պահլավունին[47], սակայն տալիս է Բոնդրակեցիներին հաղորդա-

37 «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 225։ Հմմտ. Ա. Գ. Արքեպիսկոպոս, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956, էջ 74, 80. նաև մեր գրախոսականը այս գրքի մասին՝ «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», 1957 թ., № 4, էջ 132։

38 Նույն տեղում, էջ 275—278։

39 Նույն տեղում, էջ 260։ Ընդգծումները այստեղ և ստորև մերն են— Լ. Մ.-Բ.։

40 Նույն տեղում, էջ 262։ Այս մեջբերումի մեջ հիշված «Ապեկլա» անձնանունը դուցե ստորերեն «աբելյա»-յից լինի առաջացած աբեղայի իմաստով— Լ. Մ.-Բ.։

41 Նույն տեղում, էջ 267։

42 Հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ. «Նոր նյութեր Բոնդրակեցիների մասին», «Արշավ» (Թբիլիսի), 1940 թ., № 2, էջ 51—54։

43 «Հակաճառութիւն ընդդէմ Բոնդրակեցւոց» (հատված). տե՛ս Հ. Ա. Անասյան, «Հայկական մատենագիտություն, ե—ԺԸ դ. դ., հատ. Ա», Երևան, 1959, էջ 726—730։

44 «Գրիգորի վարդապետի Նարեկացւոյ սացեալ ի խորհուրդ Սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Բոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց» (Մատեան ողբերգութեան, բան ՀԸ) և «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հոյակապ և յականաւոր ուխտն Կճաւայ, վասն կարծեացն անիծելոց Բոնդրակեանց Յանեսի և Յամրեսի. որ եկն զդեստիւ ոչխարաց և ի ներքոյ գայլ յափշտակող, որ և ի պղտոյ ծանուցաւ ամենից, զոր լուեալ սուրբ վարդապետին գրեաց սակս աղաւաղութեան ի շար կարծեացն» («Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498—502)։

45 Միխայելյան երկիցս իր պատմության Գ գրքի 3-րդ և 7-րդ գլուխներում («Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Բ տիպ [ի ձեռն Ստ. Մալխասեանց]. ԱԳԲ, 1885, էջ 160, 178)։

46 Պատմության ԻԲ գլխում՝ «Վասն չար աղանդին Բոնդրակեցւոց, որ երևեցաւ ի գաւառն Հարքայ, և զբազումս խոովեցաւ և ԻԳ գլխում՝ «Թէ որպէս և ի Մանանադւոյ սահմանն բորբոքեցաւ հրդեհ մոլորութեան, անելի էր» («Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, էջ 142—151 և 151—162)։

47 Թղթերից կէ-ում՝ «Պատասխանի Թղթոյն կաթուղիկոսին Ասորւոց ի ժամանակին, յորժամ էր դուքս ի Վասպուրական և ի Տարօն, զկնի բառնալոյն զմահրեցիսն յաշխարհէն Յունաց, և ի Բոնդրկաց մնացեալսն նոցա կործանեալ ազգն. յորոյ առ կաթուղիկոսն Ասորւոց ի քաղաքն Ամիթ, զի թերևս խաբէութեամբ հաւանեցուցեն զնա, զոր նորա գրեալ թուղթ ի Գրիգոր Մագիստրոսն յԱրշակունին։ Եւ այս է պատասխանին», կԸ-ում՝ «Պատասխանի Թղթոյն Թուլայեցւոց, մնացելոցն ի նորոց Մանիքեցւոց Բոնդրակեցեացն, որք եկեալ էին առ կաթուղիկոսն Ասորւոց և կամէին խաբել զնա» և կԹ-ում՝ «Ճառագս նկարագրութեան սրբոյ եկեղեցւոյն սրահի գաւթի գրեաց զայսոսիկ և սակս Մանիքեցւոցս» (Կ. Կոստանեանց, «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 148—161, 164—168 և 168—170)։

կից և նրանց շարժման մասնակից մեկի անունը, որը անհայտ է այլ աղբյուրներից (և նույնիսկ մտած չէ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի մեջ), այն է «Ապելլա»-յի։

Ի դեպ, վրաց գրականության մեջ թոնդրակեցիք հիշվում են ԺԷ—ԺԸ դարերում բառարանագետ Սուլխան-Սաբա Օրբելիանի «Վրացերեն բառարան»-ում «թոնդրակելի»-ի ձևով[48]։

Ինչ վերաբերում է ծայթերին, այս խնդրով նախքան Պողոս Տարոնեցին, ինչպես հայտնի է, զբաղվել է Ուխտանես եպիսկոպոս Ուռհայեցին (Եդեսացին) դեռևս Ժ դարում։

Եվ իրոք, չէ՞ որ Ուխտանեսի պատմագրական գործը բաղկացած է եղել 3 գրքից, որոնցից առաջին երկուսն է, որ հասել են մեզ, այն է՝ «Պատմութիւն Հայոց» և «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», իսկ երրորդը ոչնչացվել է, հավանական է, իդեոլոգիական պայքարի հանգամանքներում։

Այս՝ երրորդ՝ գրքի բովանդակության մասին որոշ ակնարկ կարելի է գտնել հենց իրեն՝ Ուխտանեսի ցուցմունքից, թե ինչ է եղել նրա ամբողջ գործի շարժառիթն ու նպատակը. «Նախ՝ դիւ թագաւորացն և զհայրապետացն մերոց, և զրաժանումն Վրաց ի Հայոց միաբանութենէ. և յետ այնորիկ զմկրտութիւն ազգին, որ Ծաղն կոչի»[49]։

«Ծաղ» կամ, որ նույնն է, «ծայթ» բառի մեկնաբանությունը տալիս են Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ը և Ս. Մալխասյանի «Բացատրական բառարան»-ը, ուր կուտակված են բաղմաթիվ վկայություններ թե՛ մեր մատենագրությունից և թե՛ գիտական գրականությունից և, վերջապես, կենդանի լեզվից ու բարբառներից։

Հ. Աճառյանը գրում է. «Ծայր, որ և ծայդ, ծաթ, ծադ գործածված է իբրև նախատական բառ, «հավատքի մեջ թերի կամ ազատամիտ» նշանակությամբ... Ձևացած է ծաթ ազգի անունից։ Այս ազգը գնչուների մի ցեղ էր, որ Հնդկաստանից գաղթելով՝ եկավ Հայաստան։ Ծաթերը հետո մկրտվելով հայ դարձան և հետո էլ Հունական եկեղեցուն հարելով՝ հույն դարձան։ Այսպես ձևացան ծաթ–հայերն ու ծաթ–հույները, նայլն»[50]։

Դրեթե նույնն է կրկնում և Ս. Մալխասյանը.

«Ծայդ, ծայթ. գնչուների հին ծաթ ցեղի անունից, որոնք հայ մկրտվեցին Հայաստանում, հետո Հույն եկեղեցուն հարելով հույն դարձան։ Ըստ այլ կարծիքի՝ քաղկեդոնական հայ, աՁ[ական]. հավատի մեջ թերի, կիսատ, անկատար (նախատական մակդիր). ծայթ (կամ ծաթ) հայ. ծաթ հույն։

Այստեղից ծայդանձն կամ ծայթանձն, ածական, հավատի մեջ ծայթ, հերձվածող, հերետիկոս»[51]։

Հայաստանում այժմ էլ կա Ալավերդու շրջանում «Ծաթեր» անունով գյուղ և երկաթուղային կայարան[52]։

Այս տեղանունը, ինչպես ճիշտ դիտված է համապատասխան գրականության մեջ, մնացորդ է գաղափարախոսական բախումների և երկարնակ (քաղկեդոնիկ) հայերի առկայության Զորագետի շրջանում, որի հուշարձաններն են Քորայրը, Հնեվանքը, Պղնձահանք-Ախտալան, Շահնազարը շրջակայքով և այլն։

Վիեննայի Մխիթարյան Հ. Ներսես վրդ. Ակինյանը, հենվելով Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի Ճանապարհորդության Բ հատորի (էջ 104) և Վրաց Վախուշտի արքայազն Բագրատիոնի Աշխարհագրության (ակադեմիկոս Մ. Բրոսսեի ֆրանսերեն հրատարակությամբ, էջ 57) վրա, կռահել էր, որ «մերձ ի Սանահնին կա գյուղ մը «Ծաթեր» անուն, որ կրնա առնչություն մ'ունենալ ծայթերու հետ, քանի որ հիշատակարանք կմատնանշեն հոն հույն ազդեցության հետքերն»[53]։

Քորայրի քաղկեդոնիկ մենաստանի անվան ծագումը վրացերեն «քվար»-ի (քարանձավ, կաթսա) և հայերեն «այր» (նույն իմաստով) բառերից[54] և այդ մենաստանի մոտիկությունը Ծաթեր գյուղից և կայարանից, թելադրում են մեզ ընդունել, որ այս գյուղի բնակիչները, որոնք կապված էին այդ

---

48 Լ. Մելիքսեթ-Բեկ. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. Բ, Երևան, 1937, էջ 122։ Նույնի «Նոր նյութեր թոնդրակեցիների մասին», «Արարատ», 1910 թ., № 2, էջ 53։ Նույնի «Հայոց հին գրականության պատմությունը», Թբիլիսի, 1941, էջ 107 (վրացերեն)։

49 Ուխտանես. «Պատմութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 11։

50 Հ. Աճառյան. «Հայերեն արմատական բառարան», հատ. Գ, էջ 727—730։

51 Ս. Մալխասյան. «Հայերեն բացատրական բառարան», հատ. Բ, էջ 325։

52 «Հայկական ՍՍՌ աշխարհագրական անուններ», Երևան, 1951, էջ 34, 100։

53 Հ. Ներսես վրդ. Ակինյան, «Հյուրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 78, ծանոթություն նախորդ էջի։

54 Լ. Մելիքսեթ-Բեկ. «Քորայրը և նրա հայերեն ու վրացերեն արձանագրությունները», «Թբիլիսիի համալսարանի Տեղեկագիր», VII, 1927, էջ 60—61 (վրացերեն)։

վանքի հետ, իրոք, ծայր-հայեր էին, այսինքն հունա-վրացադավանության անցած[55]։

Այսպիսով, Գողոս Տարոնեցու հիշատակած ծայրն և Ուխտանեսի ծաղն միևնույնն են, որ վերաբերում են ծայր-հայերին, իսկ վերջինների հետքը ներկայումս առկա է Հայաստանի Ալավերդու շրջանի Ծաբեր գյուղի և երկաթուղային կայարանի անվանց մեջ։

---

55 Հատուկ գրականությունը այս խնդրի շուրջ. Ադ. Երիցյան, «Մագ ազգ Հայ է՞. թե ոչ». «Փեթե», 1881 թ., № 3, էջ 125—126։— Ֆ. Էմին, «Մաքերի մասին», «Մ. Օ. Էմինի հետազոտությունները և հոդվածները հայկական միթոլոգիայի, հնագիտության, պատմության և գրականության պատմության մասին», Մոսկվա, 1896, էջ 137—138 (ռուսերեն)։— Ն. Մառ, «Արքաուն», «Բյուզանդական ժամանակագիր», հատ. XII, № 1—2, էջ 1—68 (ռուսերեն)։— Ն. Ադոնց, «Հայ ծաքերի ծագման մասին», «ժողովրդական լուսավորության մինիստրության ամսագիր», 1911 թ., էջ 238—249 (ռուսերեն)։— Նույնը՝ Ն. Ադոնց, «Հայ=ծաքերի ծագման մասին», թարգմ.՝ Լ. Լիսիցյան, «Հանդես ամսօրյա», 1912 թ., էջ 257—271։

ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԷՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՎ ՀԱՅՐԱՊԵՏ

(ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ)

Ա.

Ներսէս Պարթեւի մասին խոսելու ժամանակ երբեք մոռնալու չենք, որ ան հայ Արշակունի թագաւորական ընտանիքի անդամ էր, Լուսաւորչյան ընտանիքի միակը, որուն մայրը Արշակունի արքայադուստր էր, նաև մեծ մայրը՝ Արշակունի արքայադուստր[1]։

Այս իրողութեան քաջածանոթ ըլլալու էր նաև շարականագիրը, երբ Ներսէսին նվիրված շարականի մեջ կգրէր «...Ողորմելով որդւոց Աբրամայ, ետուր յազգէն Արշակունեաց հոլիս ընտրեալ զՍուրբն Ներսէս...»։

Արշակունիները գրեթէ հինգ հարյուր տարի իշխեցին Պարսկաստանի մեջ՝ մինչև Սասանյաններու երեան դալը և երեք հարյուր տարի՝ Հայաստանի մեջ։ Հաչս երկու պետութեանց ժողովուրդներու՝ Արշակունի անունը անտարակուսելի նվիրականութիւն մը ստացած էր, որ Արշակունին աստվածներու հավասար կդարձներ։

Չորրորդ դարու նշանավոր պատմաբան Ամմիանոս Մարկելլինոս կվկայէ այս մասին, երբ կգրէ. «Պարթեւները Արշակը կհարգեին որպես աստված մը, և իրենց պաշտամունքը հանդեպ իրեն այնքան հառաջ գացած էր, որ մինչև մեր օրերը, միմիայն Արշակի սերունդեն մարդ մը, եթե որեէ տեղ կա հատ մը, նախընտրելի է գահուն համար քան ուրիշները։ Նույնիսկ քաղաքային կուիվներուն, որ շարունակ կպատահի իրենց մեջ, ամեն անձ սրբապղծութիւն կհամարեն ձեռք բարձրացնել Արշակունիի մը, հոգ չէ թե սա դինված է կամ պարզ քաղաքացի մը»[2]։

Նույնը և ավելին Հայաստանի մեջ։

Երբ Ներսեսի պատանեկան տարիներու անմիջական միջավայրը նկատի առնես, կըսես, թե անհավանական է, որ այս դեռատի իշխանը օր մը եկեղեցական ասպարեզ մտնե։ Հեշտամոլ, ցոփ հոր զավակ էր Ներսես, հեշտամոլ, ցոփ հորեղբոր մրն ալ օրինակը աչքին առջև։

[1] Փավստոս Բյուզանդ. Գ 19, Դ 3։

[2] Ամմիանոս. ԻԳ. 6 5։

Սակայն Ներսեսի ամբողջական կյանքը ուսումնասիրելուդ, կեզրակացնես, թե Ներսես Դ դարու Հայաստանի խղճմտանքն էր, արժանի իր մեծության, ա՛լ ավելի արժանի իր իրավ սրբության։

Մեծ էր Ներսես որպես պետական գործիչ, սուրբ՝ որպես քրիստոնյա հայրապետ։

Ներսեսով կսկսի Հայ Եկեղեցվո ամրապինդ կազմակերպումը և կաթողիկոսական հեղինակության բարձրանալը։ Իրմե առաջ, որքան կրոնական նույնքան ալ եկեղեցական անկազմակերպ վիճակ մը կտիրեր երկրի մեկ ծայրեն մյուսը։ Արքունիքը և ազնվականությունը, եթե ոչ բոլորովին գործոն թշնամությամբ, գոնե արհամարհական անտարբերությամբ կվերաբերեին դեպի Եկեղեցին և անոր Պետը։

Քրիստոնեությունը հասարակ ժողովուրդի աչքին նորաձևության պես բան մըն էր։ Փավստոսի բառերով, ամարդկային մոլություն մը, որուն մոդան ուշ կամ կանուխ կանցներ, և իրենք, խելքերնին տուն եկած, կրկին կդառնային իրենց հազարամյա Արամազդին և Անահիտին։

Եվ իրավ ալ, երբ հզոր արքա Տրդատի կյանքին վերջ կտրվեր թույնով, արդեն մակընթացությունը կսկսեր։ Որոշապես չենք գիտեր, թե դավադրող նախարարներ ի՞նչ պատճառով սպանեցին Տրդատը։ Բայց կըրնանք հավանական համարել, թե մեծ արքային արմատական, կտրուկ և բռնի ձեռնարկները հին դարավոր կրոնը ջնջելու, համառ ընդդիմության բախեցան ոչ միայն քրմական դասեն, այլ մանավանդ ավագանիեն։

Այն պարագան, թե Գրիգոր Լուսավորիչն իսկ վերջեն բոլորովին կքաշվի հրապարակեն, հավանաբար իրավունք կուտա մեզի ենթադրելու, թե նոր կյանքին դեմ համառ և շարունակական դիմադրություն կար։

Տրդատեն և Գրիգոր Լուսավորիչեն վերջ, նորամուտ կրոնը հազիվ կպահեր իր գոյությունը Հայաստանի մեջ։ Ս. Գրիգորի հաջորդներու կյանքն անգամ վտանգի մեջ էր։ Լուսավորչի հաջորդը՝ Արիստակես կաթողիկոս կսպանվեր հայ իշխանի մը կողմե։ Հաջորդը՝ Վրթանես, հազիվ կաղատեր դավադիրներու մահափորձեն։ Վրթանեսի հրկվորյակ զավակներեն առաջինը՝ Գրիգորիս եպիսկոպոս կնահատակվեր, իսկ Հուսիկ կաթողիկոս, Տիրան թագավորի հրամանով և անոր իսկ ներկայության, գայլազաններու հարվածին տակ հոգին կավանդեր եկեղեցվո մեջ։

Ահա այսպիսի պայմաններու մեջ Հայրապետական Աթոռը պիտի գրավեր Ներսես 341 կամ 342 թվականին[3], ծանոթ՝ իր նախորդներուն վիճակված տխուր ճակատագրին։

Իսկ Ներսես ա՛լ ավելի գիտակ էր Եկեղեցվո անկյալ, ողբալի վիճակին։ Հեթանոսական մառախուղն էր, որ կփորձեր վերագառնալ քրիստոնեական խունկը կլանելու։

Երիտասարդ հայրապետը, Քրիստոսի վարդապետության բարձրագույն սկզբունքներով զրահավորված, ասպարեզ պիտի նետվեր՝ պայքարելու բազմագլխանի չարիքին դեմ։

Որպեսզի ավելի որոշ հայտնած ըլլամ միտքս, ըսեմ, որ եթե Գրիգոր Լուսավորիչ Հայաստանի քրիստոնեության Հիսուսն էր, Ներսես անոր Պողոս առաքյալը եղավ, որ նորահաստատ Եկեղեցին պիտի օժտեր կուռ կազմակերպությամբ, և իր իսկ օրինակով ներշնչեր այն բազմաթիվ հոգևոր մշակները, որոնց պատրաստությունը իր գլխավոր աշխատանքներեն մին եղավ։

Ներսեսն էր, որ ոչ միայն Հայ Եկեղեցիին տվավ վարչական ուժեղ կազմակերպություն, կարգ-կանոն և ըրավ դայն բարոյական սկզբունքներու ներուժ գանձարան, այլ նաև նյութական հարստության ալ գանձարան, որով Եկեղեցին կունենար ընդարձակ հողեր և նյութական հնարավորություն ու միջոց հեղինակության աճման։

Կաթողիկոս Ներսեսի մեջ կա նաև պետական գործիչ Ներսեսը, որ հաճախ մոռացության կտրվի։

Ներսեսով կսկսի հայ կաթողիկոսության նաև քաղաքական ասպարեզի մեջ գործոն դեր ունենալը։ Իրմե առաջ, եթե Վրթանես կաթողիկոսի մեջ կգտնենք քաղաքական գործունեության փորձեր, այդ առավելապես վերագրելի է Խոսրով թագավորի թույլ անհատականության։ Ներսեսն էր, որ կաթողիկոսը տարավ արքունիք, ոչ որպես Եկեղեցվո հայրապետը, այլ պետության գործունյա մեկ իշխանը կամ նախարարը։ Թերևս իր Արշակունի ըլլալու հանգամանքը մեծապես սատարեց իր հանդուգն գործունեության։

Իսկ իր զավկին՝ Սահակ կաթողիկոսի օրով, քաղաքական այս գործունեությունը կհասներ իր գագաթնակետին, Սահակը դարձնելով հինգերորդ դարու առաջին կեսին մեծագույն պետական գործիչը թագավորեն վերջ։

---

3 Այս թվականը բոլոր հայ բանասերներն և պատմաբաններն մերժված է։ Անոնք առհասարակ 353 թվականը կընդունին որպես Ներսեսի ընտրության տարին։ Ըստ իս, այս բոլորովին կամայական է։ Այս հոդվածիս կառուցվածքը չի ներեր հոս արտահայտվիլ այդ մասին։

Հետագային ալ, երբ թագավորությունը կվերջանար, Կաթողիկոսարանը կըլլար նաև տնական մը արքունիք։

Հայ Հայրապետության քաղաքական մարդի մեջ գործունեությունը պիտի շարունակեր դարերով, գրեթե մինչև քսաներորդ դարու սկիզբը, շնորհիվ այն հզոր սկզբնավորության, որ Ներսես և ապա Սահակ տվին անոր։

Այս հոդվածով պիտի յխոսիմ Ներսեսի եկեղեցական և պետական մարդերու մեջ ունեցած գործունեության մասին։ Պիտի փորձեմ ներկայացնել միմիայն իր երիտասարդական տարիները, մինչև իր Կաթողիկոսական Գահ բարձրանալը, անշուշտ ըսելիքներս հիմնավորելով աղբյուրներու ուսումնասիրության վրա։

Ը

Պատանի Ներսեսին ծանոթանալու ջանքիդ մեջ բնականաբար ուշադրությանդ առարկա կըլլա իր հայրը Աթանագինես, ինչպես, օրինակ, Սահակ Պարթևի կյանքը սերտելուդ՝ իր հայրը Ներսես կաթողիկոս կրարձրանա մտքի այքերուդ առաջ։

Սակայն երբ Ներսեսի հոր կդառնաս, կապշիս կմնաս, և կբացականչես. «Այս ի՞նչ առաքինի պտուղ է, բայց ինչպիսի՞ շարարարո ծառնեն։

Ծանոթանանք երիտասարդ զինվորական Աթանագինես իշխանին, որ դավակն է Հուսիկ կաթողիկոսին։

Ան ամուսնացած է Տիրան թագավորի քրոջ հետ։ Արքայական ընտանիքի փեսա ըլլալ, նույնինքն թագավորին քեռայրը, բացառիկ պատիվ մըն է, որ բախտավոր փեսային փառասիրությունը անհունս կհրահրեր։ Եթե ան նկարագրի ընդոծին տոկունություն չունի, դողող անգոսանքով կնայի իր երեկի հավասարներուն։ Կամայական սանձարձակ գործունեություն. եսին ինքնահավան պանծացում. ամբարտավանությունը շփոթել արժանիքին հետ, և մահկանացուները վարող պարտադիր օրենքներեն վեր ըլլալու համոզումը կուգան փչացնել իր մեջ առաքինության դույզն մասնիկ մը՝ եթե այդ գոյություն ուներ։

Աթանագինեսի պարագային՝ հոռեգույները այս հատկանիշներուն տիրապետեցին իր անձին։ Ան մոռցավ, ավելի ճիշտը, արհամարհական ծաղրանքով անտեսեց, թե իր հայրը կաթողիկոս էր, իր պապը նույնպես կաթողիկոս, իսկ իր պարուն հայրը՝ սրբացյալ Գրիգոր Լուսավորիչ։

Հուսիկ կաթողիկոսի մահով Աթանագինես և իր երկվորյակ եղբայրը Պապ ժառանգ կստանային կայսրածային հսկա հարստություն՝ Սեբեդյաց դավառի մեջ թիլ ավանը, որ Գրիգորի կալվածը եղած էր[4]. Դարանաղյաց գավառի մեջ Թորդան գյուղը, ուր թաղված էին Գրիգոր, Վրթանես և Հուսիկ։ Ապա հորենական ընդարձակ կալված ունեցած ըլլալու էին Հայաստանի առաջին Մայր Եկեղեցիի սրբազան վայր Արտաշատի մեջ։

Արշակունի արքայի փեսա, ազգոր վրա ավելցուր սեփական հարստություն, Աթանագինեսի հաճույամոլ կենցաղավարությունը մղեցին լպրծուն զառիվայրը ցոփության։ Եվ ան իրեն հետ միասին քաշեց տարավ իր եղբայրն ալ։

Աթանագինես, «անխրատ սոահակս, իր «սնոտի աղնվականությամբ և ազդականությամբ պարծենալով զինվորական կյանք ընտրեցա»[6], Եպիսկոպոսներ փորձեցին բռնի սարկավագ ձեռնադրել երկու եղբայրները, բայց երկուքն ալ ընդվզեցան։

Զինվորական սպարեղոր չափազանց ձիերնաու կըլլար Աթանագինեսի հեշտասիրության։ Հագված, սքված, գոհարազարդ սուրը մեջքին, ան սոնքացող հերոսը կդառնար՝ բազմապիսի մարմնական հաճույքներով վխտացող այն լայն ու լայն պողոտային, որ մանկության ատեն իր հոգևորական հորմեն լսած կրնար ըլլալ, թե դժոխք տանող ճամբան է։

Եվ Աթանագինեսը կշրջապատեին «վարձակներ, գուսաններ և ծաղրածուներ»[7]։

Անառակության մեջ թաթախուն այսպիսի ցոփ հայր մը ինչքա՞ն մտահոգ կրնար ըլլալ իր դավկին կրթությամբ։ Ներսես ալ ի սկզբան զինվորական պիտի ըլլար, բայց իր հայրը պիտի չտեսներ այդ։

Գ

Արդյոք ո՞վ էր, որ Աթանագինեսի այս որդին դեռ մանուկ հասակին Կեսարիա ղրկեց։ Ամենայն հավանականությամբ մանկան մեծ հայրը՝ Հուսիկ կաթողիկոս։ Իր երկու զավակներու ամբարիշտ կենցաղավարությենեն դառնացած, գիտնալով, որ անոնցմե մին կամ մյուսը Հայրապետական Աթոռ պիտի չբարձրանա և այդպիսով Գրիգորի ընտանիքը պիտի կորսնցնե կաթողիկոսության ժառանգական իրավունքը, Հուսիկ իր հույսը կապեց Աթանագինեսի որդվույն, դայն ղրկեց Կեսարիա, աղատելով անառակ հոր ազդեցությենեն։

Այն ատեն Կեսարիան, Կապադովկիո այս մայրաքաղաքը, հռչակավոր կրթական վա-

4 Փավստոս Բյուզանդ. Դ 2։

5 Փավստոս Բյուզանդ. Դ 2, 11, 12։

6 Փավստոս Բյուզանդ. Դ 13։

7 Փավստոս Բյուզանդ. Դ 19։

ռարան էր և Փոքր Ասիո ամենամեծ քաղաքը։ Նորահաստատ Կոստանդնուպոլիսը դեռ չէր կրնար բաղդատվիլ անոր հետ։ Բնակիչներուն ճիշտ թիվը որոշել դժվար է, բայց 260-ական թվականներուն, երբ Շապուհ Ա Սասանյան թագավորը գրավեց Կեսարիան, քաղաքը չորս հարյուր հազարի մոտ բնակչություն ուներ։

Մանուկ Ներսես ի բնե ուշիմ, արթնամիտ և գործունյա մեկն էր, կատարյալ հակապատկերը իր ստահակ հոր։ Կեսարիո մեջ կարող քրիստոնյա դաստիարակներու խնամքին հանձնված, ան կստանար և կյուրացներ հիմնական ուսմունք՝ զարգացնելու իր միտքը, ի հայտ բերելու իր մեջ և ոռոգելու մարդասիրական առաքինությանց կոկոնները, որ շատ չանցած, իր չափահասության, լիապայծառ ճոխությամբ պիտի ծաղկեին Հայաստան աշխարհի հողին վրա, իր իսկ հարատև ջանքերով։

Որոշապես չենք կրնար ըսել, թե Կեսարիո դպրոցի քանի մը աշակերտները, որոնք հետագային բովանդակ Քրիստոնյա եկեղեցվո հռչակավոր վարդապետներեն և սուրբերեն եղան, Ներսեսի դասընկերները եղած ըլլային, զոր օրինակ, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, ապա Գրիգոր Նազիանզացի։ Ներսեսի աշակերտության ատեն անոնք դեռ փոքր էին. Բարսեղ ծնած էր 329-ին, Նյուսացին՝ 330-ին, Նազիանզացին՝ 329-ին։ Բայց թե վերջին Ներսես պիտի ճանչնար զանոնք, մանավանդ Բարսեղը, և անկե ներշնչվեր, կասկած չկա։

Բազմահարուստ ընտանիքի զավակ և Արշակունի իշխան, Ներսեսի դաստիարակության համար ծախք չէր խնայված։ Ան չճաշակեց նյութական անձուկ պայմաններու, շշմեցնող մտահոգությունը, որ իրմե հետո Կեսարիա, Պոլիս, Անտիոք և Եդեսիա վազող ուսումնատենչ հայ երիտասարդներու ամենուն վիճակվեցավ։

Իր հոգին քրիստոնեական վարդապետության վսեմագույն սկզբունքներով օծուն, ան մշտարթուն այքերով դիտեց նախ Կեսարիո և ապա Պոլսո մեջ գործնական ապացույցները Քրիստոսի քարոզներու կիրարկման՝ դպրոց, եկեղեցի, հիվանդանոց, վանք և աղքատանոց։ Տեսավ, ազդվեցավ, խանդավառվեցավ և սիրեց հույժ, առանց մտքեն իսկ անցնելու, թե որ մը ինքն ալ հոտի մը քրիստոնյա հովիվը պիտի ըլլար, պայքարելով իր շուրջի համատարած խաթարյալ բարքերու դեմ։ Կեսարիո մեջ երբ ուսումը ավարտեց, Ներսես անցավ Պոլիս։ Երիտասարդ իշխանը Պոլիս կերթար ոչ թե ուսումը շարունակելու, այլ ամուսնանալու Ասպիոն մեծ իշխանի աղջկան հետ[8], իսկ հայոց Արշակ թագավորը՝ Արլաբիոս իշխանի դուստր Օլիմբիային հետ կամուսնանար։

Դ

Երբ Ներսես իմացավ, որ իր մորեղբար որդին Արշակ Հայաստանի թագավոր եղած է, որոշեց վերադառնալ Հայրենիք։

Անոր Հայաստան հասնելուն, երիտասարդ թագավորը նույնքան երիտասարդ, գանգրահեր և վայելչակազմ զարմիկին՝ Ներսեսին, զինվորական աստիճան կուտար և կնշանակեր արքունի սենեկապետ[9]։

Ներսես իր հարսին հետ Հայաստան գալու և արքունիքին մեջ բարձր պաշտոն ստանձնելու օրերուն Կաթողիկոսական Աթոռը թափուր էր։

Տիրան թագավորի հակառակությունը Լուսավորչի ընտանիքին՝ ծանոթ էր ամենուն։ Սակայն Արշակ վարակված չէր հոր ատելությամբ։ Իր գահակալության օրերուն, Հայաստանի քաղաքական խառնակ վիճակին զուգընթաց, խառնաշփոթ կացություն մ՚ալ ստեղծված էր Հայրապետական Գահին շուրջ։ Եվ որովհետև Արշակ թագավորի առաջին տարիներուն, անոր և իր խորհրդականներուն անմիջական ճիգն էր ներքին ճակատը խաղաղեցնել, բնականաբար ուշադրություն պիտի դարձվեր նաև եկեղեցական ճակատին։ Վերջապես թագավորը ըսելիք ուներ կաթողիկոսի մը ընտրության մասին։ Հիրավի, Դ դարուն արքան էր, որ կընտրեր հայրապետը։

Ահա երեք տարիե ի վեր զինվորական Ներսես կվարեր իր թագավոր աղգականին սենեկապետի պաշտոնը։ Իր շուրջիններուն համար այս երեք տարիները բավական եղան զինք ճանչցնելու։

Երիտասարդին ուսումնական միտքը, բարոյական փարթամ ըմբռնումները, գործավարութիւնը և անկաշառելի ազնիվ նկարագիրը զինք կարծես երկնառաք թեկնածուն կդարձնեին այն Գահին, որուն պատվանդանը իր նահատակյալ մեծ հայրը Հուսիկ արյունով լվացեր էր։

Արքունի սենեկապետը զարմացմամբ լսեց ամենուն բերանեն իր անունը, որպես միակ

[8] Խորենացի, Գ. 16։— Մեսրոպ Երեցի ժ դարու վերջերուն գրի առած կենսագրության մեջ ըսածը, թե Ներսես Կեսարիո մեջ կուսաներ իր կնոջ հետ միասին, որուն անունն էր Սանդուխտ, Մամիկոնյան ցեղեն, բոլորովին անընդունելի է։ Մեսրոպ Երեցեն վեց հարյուր տարի առաջ գրող և Ներսեսի ու Մամիկոնյանների մոլեռանդ շատագով Փավստոսի բացարձակ լռությունը այդ մասին վճռական է։

[9] Փավստոս Բյուզանդ. Դ 3։

արժանավոր թեկնածուն կաթողիկոսության։ Իր բողոքները խուլ ականջներու հանդիպեցան, իսկ բոլորովին չքացան, երբ Արշակ թագավոր առ այդ վճիռ արձակեց։

Ներսեսի կաթողիկոսացման արարողության առաջին մասը հուզիչ էր։ Ներսես պիտի ղրկվեր Կեսարիա, բայց Կապադովկիոյ եպիսկոպոսապետին ներկայանալու էր որպես հոգևորական և ոչ զինվորական պաշտոնյա։ Ուստի հոն, բազմամբոխ արքունիքին մեջ, ամենուն աչքը իր վրա, մեջքեն քակեցին մարգարտազարդ ոսկի պատյանով սուրը, հետո, բարձր հասակին այնքան վայել ակնահաճո պատմուճանը առին վրայեն և անոր տեղ հագցուցին կրոնական սքեմը։ Այդքանով չվերջացավ. Ներսեսի գանգուր մազերը կտրեցին, ծերունի եպիսկոպոսը սարկավագ ձեռնադրեց զինք[10]։

Կեսարիա ճամբորդությունը, 341-ին կամ 342-ին, հաղթապանծ շքերթ մըն էր։ Ներսեսին ընկերացող իշխանական կազմը ցույց կուտա, թե արքունի սենեկապետին ընտրությունը ընդհանուրի հավանության արժանացած էր։ Միաժամանակ այդ նաև կնշեր թագավորի և նախարարներու միջև հաստատված հաշտությունը, ժամանակավոր դինադադարը։

Իշխանական շքախումբի մեջ էր Հայր Մարդպետը, որ քանի մը տարի վերջ այնքան մոլեգին բախում պիտի ունենար այս միևնույն Ներսեսի հետ՝ եկեղեցական կալվածներու անարինակ բազմանալուն և հայրապետական հեղինակության բացահայտ աճման պատճառով։ Հոն էր Սյունյաց մեծ իշխան Անդովկ, որուն գեղանի դուստրը Փառանձեմ, Արշակունի արքունիքի մեջ հուզումնալի ելույթներու ողբերգական հերոսուհին պիտի ըլլար։ Հոն էին Բագրատունյաց իշխան Բագրատ, Արշավիր Կամսարական, Մեհենդակ Ռշտունի, Պարգև Ամատունի, Ծոփաց իշխան Դանիել[11]։

Մեսրոպ Երեց (Ժ դար) Ներսեսին ընկերակցողներու մեջ քանվեց իշխաններ անուններով կհիշե, որոնց հետ նաև քանուի եպիսկոպոսներ և չորս հազար հեծյալներ։

Այսպես, ուրեմն, Հայաստանի համար բոլոր նշանները բարեգուշակ էին։ Երկու մոտիկ ազգականներ, Արշակ և Ներսես, երկուքն ալ երիտասարդ, գրեթե տարեկից, իրենց ձեռքերուն մեջ կառնեին Հայոց աշխարհի ճակատագրին թելերը։

Ակնկալելի էր, որ կատարյալ համերաշխություն տիրեր երկուքին միջև, և թագավոր ու կաթողիկոս ապագային որևէ բախում չունենային։

Ամենքը համոզված էին, թե Հայաստան բարեբաստիկ օրերու նոր շրջանի մը սեմին կգտնվեր։ Ալ ո՞վ կրնար հոռետես մտքեր ունենալ...։

10 Փավստոս Բյուզանդ. Դ 3.

11 Փավստոս Բյուզանդ. Դ 4.

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

(Մահվան 40-ամյակի առթիվ)

Հունվար ամսին լրացավ մահվան 40-ամյակը հայ մշակույթի անխոնջ վաստակավոր, անվանի մանկավարժ, բազմահմուտ բանասեր և Գեորգյան ճեմարանի նախկին դասախոս Կարապետ Կոստանյանցի։

Ժ Թ դարի կեսին ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում մշակութային շարժումը նոր թափ է ստանում։ Բանասերների սկզբունքն է դառնում լույս աշխարհ հանել փոշիների և հին մատենագրության էջերի մեջ անթեղված արժեքները, պատմական հիշատակարանները, գրական անտիպ գործերը, արվեստի գանձերը, որոնք նոր լույս պիտի սփռեին հայ մշակույթի անցյալի վրա։ Սրան զուգընթաց ավելի ու ավելի են աշխուժանում մանկավարժական միտքն ու կրթական գործը։ Հանդես են գալիս մի խումբ պատրաստված և հայրենանվեր գործիչներ, որոնք, զինված հավատի և գիտության լույսով, նվիրվում են հայ մատենագրության ուսումնասիրության, ժողովրդի լուսավորության սուրբ գործին։ Այդ գործիչների շարքում իր մանկավարժական գործունեությամբ և բանասիրական պատկառելի աշխատություններով առանձնահատուկ տեղ է գրավում Կարապետ Կոստանյանցը։

Կարապետ Կոստանյանցը ծնվել է 1849 թվականի հունվարի 14-ին (ըստ որոշ բանասերների՝ 1853 թվականին), հայ աշուղների հայրենիք Ալեքսանդրոպոլում (Լենինականում)։ Իր սկզբնական կրթությունն ստացել է տեղական դպրոցում, միջնակարգ կրթությունը՝ Թբիլիսիի գիմնազիայում։

«1865 թվի հոկտեմբերի 16-ին հայրս ինձ տարավ Թիֆլիս գիմնազիա տալու,— իր մասին պատմում է Կոստանյանցը— Այս առաջին անգամն էր, որ ինձ վիճակվեցավ պանդուխտության ճաշակ առնել հեռու հայրենի տնից, հայրենի քաղաքից, հայրենի գավառից, որոնց հետ շատ ջերմ ու քաղցր հիշատակներով կապված էր սիրտս. ստիպված էի անորոշ ժամանակով հրաժեշտ տալ նոցանից, անորոշ ժամանակով, որ ահա քաշեց հիսուն տարի։ Անցան, անդառնալի անցան գնացին մանկությանս և պատանեկությանս ոսկի օրերը, որոնք դեռ այժմ էլ պայծառ արեգակի նման տաքացնում են իմ սիրտս, թեև անցել է հիսուն տարի» (Արվեստի և գրականության թանգարան, Կ. Կոստանյանցի ֆոնդ, № 422, էջ 1)։

1870 թվականին ավարտելով Թբիլիսիի գիմնազիան, Կոստանյանցը մեկնում է Պետերբուրգ և ընդունվում Արևելյան լեզուների ֆակուլտետը, աշակերտելով հայտնի գիտնական պրոֆ. Ք. Պատկանյանին։ Կոստան-

յանցի ուսմամբ ծախսը, տարեկան 300 ռուբլի, հանձն է առնում վճարել Գևորգ Դ Մեծագործ և ուսումնասեր կաթողիկոսը։

1875 թվականին, Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի նախագահ, ականավոր հայագետ և պետական բարձր պաշտոնյա Կարապետ Եղյանցի և պրոֆ. Պատկանյանի խորհրդով Կարապետ Կոստանյանցը որոշում է ուսանել Սանսկրիտ լեզու, համեմատական լեզվաբանություն և Արևելքի պատմություն։ Նույն թվականին նա մեկնում է արտասահման այդ նպատակով։ Լինում է Բեռլինում, որտեղ հանդիպում է ծերունի պրոֆ. Պետերմանին, որն իր հետ «խոսում էր հայերեն գրաբար»։ Պետերմանի խորհրդով Կոստանյանցը մեկնում է նաև Բոնն, Լայպցիգ և Սանսկրիտ լեզվի դասեր է առնում այնտեղի պրոֆեսորների մոտ։ 1876 թվականին, երբ վերադառնում է Պետերբուրգ, պրոֆ. Պատկանյանը նրան խորհուրդ է տալիս գնալ կա՛մ Լազարյան ճեմարան կա՛մ Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարան։ Սակայն Կոստանյանցը ցանկանում է հեռու չգնալ, մինչև մագիստրոսության քննություն և շարադրություն չտա։ Եվ ահա 1878 թվականի մայիսի 11-ին նա հաջողությամբ տալիս է համալսարանի քննությունները։ «Մայիսի 24-ին,— գրում է նա,— ներկայացուցի շարադրությունս պրոֆ. Կոսովիչին, որը բավարար գտավ։ Քննությունս բոլորովին վերջացավ»։

1878 թվականին Կոստանյանցը ավարտելով համալսարանը, հունիսին վերադառնում է Հայաստան. «Մնա՞ս բարով Պետերբուրգ. մնա՞ք բարով ուսանողական տագնապալից 7 երկար տարիներ»։ Այսպիսով վերջանում է Կոստանյանցի ուսանողական շրջանը։

Մանկավարժական գործունեություն.— Ավարտելով համալսարանը, Կ. Կոստանյանցը վերադառնում է Հայրենիք և անմիջապես նվիրվում մանկավարժական գործունեության, հայ մատաղ սերնդի դաստիարակության և կրթության նվիրական գործին։

1878 թվականի օգոստոսի 29-ին իր հոր՝ Տեր Հովսեփ ավագ քահանայի հետ գնում է Բյուրական, ուր կաթողիկոսական ամառանոցում հանգստանում էր Գևորգ Դ կաթողիկոսը։ Կոստանյանցը ներկայանում է կաթողիկոսին՝ իր շնորհակալություններն ու երախտագիտությունը հայտնելու նրան։ Կաթողիկոսը մեծ ուրախությամբ ընդունում է նրան, օրհնում և առաջարկում է մնալ և Գևորգյան ճեմարանում դասախոսել, որտեղ իր նման հմուտ անձերի խիստ կարիք էր զգացվում։ «Խոստացա մի տարի ծառայել ճեմարանին առանց ռոճիկի,— գրում է Կոստանյանցը,— փոխարեն կաթողիկոսի երախտյաց, որ մի քանի տարի դրամական նպաստ տալով, օգնել էր ինձ ուսումս շարունակելու։ Վեհը գոհ մնաց»։

1878 թվականի սեպտեմբերի 23-ին իր քահանա հոր և իր ուսուցիչ պրոֆ. Պատկանյանի հետ գալիս է Էջմիածին և ներկայանում ճեմարան։ Այդ շրջանին ճեմարանի կառավարիչն էր Անդրեաս եպիսկոպոսը, իսկ ուսումնական մասի պատասխանատուն էր նույնպես համալսարանավարտ իրավաբան Վահան վարդապետ Բաստամյանցը։ Կոստանյանցին ճեմարանում հանձնվում են հայոց լեզվի, քննական քերականության, Հայաստանի աշխարհագրության, հայոց և եկեղեցական պատմության և հայ մատենագրության դասերը։ Այսպիսով 1878 թվականի սեպտեմբերի 23-ից սկսվում է Կոստանյանցի մանկավարժական գործունեությունը։ Ճեմարանում նրան պաշտոնակից էին այդ շրջանի հայ մանկավարժության և բանասիրության հայտնի դեմքերից շատերը, ինչպիսիքն էին Գրիգոր եպիսկոպոս Աղափիրյանը, Խորեն վարդապետ Ստեփաննն, Վահան վարդապետ Բաստամյանցը, Սեդրակ Մանդինյանցը, Ստեփան Պալասանյանը, Ստեփան Կանայանը, Աբրահամ Ջամինյանը և ուրիշներ։ Կարող և նվիրված կրթական մշակների այս փաղանգը ոչ մեկ ջանք չէր խնայում Գևորգյան ճեմարանը իր կոչման և առաքելության բարձրության վրա պահելու համար։ Նույն թվականի հոկտեմբերի 25-ին, «Արարատ» ամսագրի խմբագիր Վահրամ եպիսկոպոս Մանկունին երբ մեկնում է Կոստանդնուպոլիս, Գևորգ Դ կաթողիկոսը, Խորեն վարդապետ Ստեփաննի հետ, Կոստանյանցին է վստահում «Արարատ»-ի խմբագրությունը։ Գևորգյան ճեմարանում կարճատև ընդհատումով նա աշխատում է մոտ 20 տարի և ունենում է բեղմնավոր և արդյունաշատ գործունեություն։ Ճեմարանում իբրև ուսուցիչ և հետագայում իբրև տեսուչ նա սիրվել է ու հարգվել, հակառակ իր շատ խիստ և պահանջկոտ լինելուն։ Կոստանյանցը ճեմարանի շունչն ու ոգին էր։ 1887 թվականի մայիսի 28-ին, երբ Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհրդի նիստում ճեմարանի տեսուչ Նահապետյանը (հետագայում եպիսկոպոս) հայտնում է, որ Օրմանյան սրբազանը հրավիրված է կրոնական դասեր տալու ճեմարանում, Կոստանյանցը առաջինն է, որ ողջունում է տեսչի այդ քայլը և առաջարկում է, որ չպետք է բավարարվել Օրմանյան սրբազանին միայն կրոնական առարկաներ հանձնելով, այլ պետք է լսարանական բաժինը հանձնել նրան, որպեսզի լսարանների 30—40 աշակերտներից պատրաստվեն ապագա հոգևորականներ, որով

միայն Ճեմարանը կհասնի իր բուն նպատակին և կիրագործվի հիմնադրի երազը։

Թբիլիսիում և Մոսկվայում ևս Կոստանյանցը բեղուն գործունեություն է ունեցել մանկավարժական ասպարեզում՝ որպես ուսուցիչ և տեսուչ։ Գևորգյան Ճեմարանում նա աշխատել է նախ 1878—1891 թվականներին, 1891 թվականից մինչև 1894 թվականը նա եղել է տեսուչ Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում, Խրիմյան Հայրիկի օրով, 1894 թվականին, հրավիրվում է նորից Գևորգյան ճեմարան որպես տեսուչ և այդ պաշտոնի վրա է մնում մինչև 1905 թվականը։ 1911 թվականին հրավիրվում է Մոսկվա և նշանակվում Լազարյան Ճեմարանի տեսուչ, պաշտոն, որը վարում է մինչև իր մահը։

Կոստանյանցը 42 տարվա իր մանկավարժական գործունեությամբ դարձել է հայ մանկավարժի վեհ, անձնդիր և անշահախնդիր տիպարը։ Կենելով բարձր կրթության տեր մտավորական, մշտավառ և սրտեռանդն նվիրումով կապվել է մանկավարժական գործունեության, կրթել ու դաստիարակել է սերունդներ։ Նրա աշակերտներից շատերը հետագայում դարձել են մեր ժողովրդի առաջադիմության և հայ մշակույթի սրբազան գործին նվիրված մշակներ։

Բանասիրական գործունեությունը.— Հայ մշակույթի անխոնջ և բազմավաստակ բանասերներից մեկն է Կոստանյանցը։ Նա իր մանկավարժական գործունեության զուգընթաց զբաղվել է նաև գրականությամբ, մատենագրությամբ։ Նա առաջիններից մեկը եղավ, որ հասկացավ բանասիրության կարևորությունը, անցյալի մեր մշակութային արժեքների հայտնաբերությունն ու ուսումնասիրությունը և ժողովրդականացումը։ Հարյուրի է հասնում Կոստանյանցի բանասիրական երկերի թիվը։ Նա իր բանասիրական աշխատություններն սկսել է դեռևս ուսանողական շրջանից։ Ահա թե ինչ է գրում ինքը 1878 թվականին. «Փետրվարի 20։ Այսօր բոլորովին պրծա Հյուսվածքի կազմությունը երեք գրքով, տարա Կ. Եղյանին ցույց տվի. հավանեցավ և գրեթե հափշտակությամբ ընդունեց. խոստացավ խոսել պ. Սանասարյանի հետ և նորա ծախքով տպել տալ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 1879—1880 ՏԱՐՎԱ Ա ԵՎ Զ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴԱՍԱԿՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Նստողների 1-ին շարքի վրա, ձախից երկրորդը Կ. Կոստանյանցն է։
(Հոդվածի լուսանկարները Երևանի Գրականության և արվեստի թանգարանինն են)

(Արվեստի և դրականության թանգարան, Կ. Կոստանյանցի ֆոնդ, № 422, էջ 54)։

1876 թվականին, «հունիսի 11-ին թղթակցելով Վիեննայի Մխիթարյանների տպարանի հետ, սկսեցին Սանասարյանի հաշվով տպել տալ Հյուսվածքս, սրբագրությանս վերջին թերթերը ուղարկում են ինձ» (նույն տեղում, էջ 61)։ Կոստանյանցի բանաստեղծական առաջին երախայրիքն է «Հիսուածք բանից նախնի պատմագրաց հայոց»-ը, բաղկացած երեք գրքից, տպագրված Վիեննայում, 1877 թվականին, Մ. Սանասարյանի ծախքով, որը «ոչ միայն մեր հայկական գրականության մեջ իր արժանավոր տեղն ունի, այլև կրոնասիրության և հայկական ազգային դաստիարակության եռանդը և աշխույժը մանկտվույն սրտից և արյան մեջ տածել բորբոքելո համար ընտիր և կարևոր դասագիրք լինելո համապատշաճ հարմարությունը և արժանավորությունը ունի» («Արարատ», 1878 թ., էջ 58)։ Կոստանյանցի այս աշխատությունը մի քանի տպագրություն է ունեցել։

Այնուհետև Կոստանյանցը 1879 թվականին Վաղարշապատում հրատարակում է «Հայոց հեթանոսական կրոնը», 1885 թվականին՝ Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի Ս. Կաթուղիկէն»-ի բնագիրը առաջաբանով և ծանոթություններով, 1886 թվականին՝ «Հայոց վանքերը»։ Ծավալով փոքր այս գրքում խորապես զգալի են Կոստանյանցի հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը, հմտությունն ու այն խոր գնահատանքը, որ նա տալիս է մեր վանքերին՝ հայ ժողովրդի հավատի, դաստիարակության ու մշակույթի զարգացման ու պահպանման գործում։ Կոստանյանցը նաև ջերմ էջմիածնասեր է։

Այդ գրքի հրատարակությունից հետո Կոստանյանցը զբաղվում է միջնադարյան հայ տաղերգուների ստեղծագործություններով, ինչպիսիք են Հովհաննես Երզնկացու, Գրիգի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու, Մկրտիչ Նաղաշի, Մինաս Թոխատեցու, Նահապետ Քուչակի և ուրիշների հոգեթով քնարական գործերը։ Կոստանյանցը անսահման սիրով և մեծագույն եռանդով նվիրվեց մեր միջնադարի բանաստեղծների գործերի ուսումնասիրության և հրատարակության ծանր աշխատանքին, և իր անխոնջ ճիգերով հրապարակ հանեց գրական մի շարք անհայտ գանձեր և հրատարակեց, ինչպիսիք են «Միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ» վերնագրով յոթը տետրը։ «Այդ հրատարակություններն արժեքավոր են կրկնակի տեսակետներով. նրանցով Կոստանյան՝ նախ ցույց տվեց հայ ժողովրդական միջնադարյան քնարի ուժն ու հմայքը, երկրորդ՝ մասամբ լուսավորեց մեր միջնադարյան գրական-կուլտուրական անհայտ շրջանը, երրորդ՝ հարստացրեց մեր միջին դարի սահմանափակ ու աղքատիկ մատենագրությունը, և չորրորդ՝ նոր ուղի բացեց հայ բանաստեղծների առջև, որի վրայով հետագայում անսայթաք առաջացան Հ. Մ. Պոտուրյան, Արշակ Չոպանյան, Հ. Ներսես Ակինյան և ուրիշներ» («Բազմավեպ», 1918 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 97, հատ. 2Ե։ Այս հատորը լույս է տեսել 1923 թվականին)։

Ա. Մնացականյանը իր 1956 թվականին Երևանում հրատարակած «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» գրքում հետևյալ գնահատականն է տալիս Կ. Կոստանյանցի կատարած ծառայության. «Միջնադարյան ժողովրդական երգերի հրատարակման բնագավառում մեծ գործ է կատարել Կ. Կոստանյանը։ Նրա կազմած «նոր ժողովածու»-ի չորս պրակներում՝ «Մկրտիչ Նաղաշ և յուր տաղերը» ու «Գրիգորիս Աղթամարցի և յուր տաղերը» գրքույկներում տեղ են գտել ժողովրդական տասնյակ երգեր, չհաշված Հայրենների շարքերը։ Կ. Կոստանյանը առաջինն է մեր բանասերներից, որ նկատել է տալիս Հայրենների ժողովրդական բնույթը. «ով ծանոթ է հայոց ժողովրդական բարքաոի ոգուն, նա չի կարող չխոստովանել, որ այդ երկու երգերն էլ կրում են իրենց վրա պարզ ժողովրդական դրոշմ» (Կ. Կ., «Նոր ժողովածու», Թիֆլիս, 1892 թ., էջ 71. տե՛ս Ա. Մնացականյան, «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Երևան, 1956 թ., էջ 16)։

Առաջին անգամ Կ. Կոստանյանցն է, որ 1892 թվականին իր «Նոր ժողովածու»-ի Ա պրակում տպագրում է ԺԷ դարի նշանավոր տաղասաց, երգիծաբան Մ. Ղրիմեցու «Ցաղագս քաղաքին Ամասիա» տաղը, մի քանի տարի հետո, 1903 թվականին Դ պրակում՝ «Գովեստ Ս. Աստուածածնայ վանացն Անկիւրիոյ» բանաստեղծությունը։ Կ. Կոստանյանցը ոչ միայն հրատարակել է Մ. Ղրիմեցու մի քանի տաղերը, այլ նաև ժողովածուի մեջ ծանոթություններ է տվել Ղրիմեցու մասին, նշել է նրա հայտնի տաղերի ցանկը և նրան տարբերել Մարտիրոս Խարբերդցուց և Մարտիրոս Ղարասարցուց։ Կոստանյանցը հաջորդաբար հրատարակում է մի շարք այլ աշխատություններ։ Այսպես օրինակ՝ 1910 թվականին Թբիլիսիում հրատարակում է «Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում, համառոտ տեսություն և գրացուցակ» աշխատությունը, որի մեջ «հեղինակին նպատակն եղած է... տալ ամփոփ տեղեկություն մը Եվրոպայի մատենագրաց քով Հայաստանի ստացած նշանակությունը, կամ Եվրոպա-

կան գրականության մեջ հայ անվան դրած հարցանքը։

Ընդարձակ ներածությամբ (էջ Դ—ԼԲ) պատկերացուցած է ժԳ—ի դար Հայաստանի վրա գրված աշխատությանց արժեքը՝ հայ պատմության, աշխարհագրության, լեզվի և այլն համար, որ սիրով և օգտակարապես կկարդացվի։

Բուն գործն այբուբենական կարգավ պարզ ցուցակ մըն է՝ առանց բաժանման նյութի» («Հանդես ամսօրյա», 1911 թ., էջ 607—608, Հ. Ներսես Ակինյան)։

Նույն թվականին Ալեքսանդրոպոլում հրատարակվում է «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», «որոնք առաջին անգամ մատչելի դարձան բանասիրության իրենց պատմական տեղեկություններով և քաղաքական ու եկեղեցական կյանքի հետ կապված անձանց և երևույթների մասին, կցելով և մի ընդարձակ հառաջաբան Պահլավունյաց տոհմի մասին» («Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի», Ա և Բ գիրք, էջ 315)։

Կոստանյանցը հայագիտության պատմության մեջ գրավում է նշանակալից տեղ։ Նրա բեղմնավոր գրչին են պատկանում հայոց պատմության, հնագիտության, Հայ եկեղեցու պատմության, մատենագրության նվիրված բազմաթիվ աշխատություններ։

Կոստանյանցի հրատարակված երկասիրություններն են.

1. «Հիւսուած բանից նախնի պատմագրաց հայոց», Վիեննա, 1877 թ. (գիրք առաջին՝ դրաբար բնագիր, 203 էջ, գիրք երկրորդ՝ աշխարհաբար թարգմանությունը (բ տիպ), Թիֆլիս, 1894 թ., 221 էջ, գիրք երրորդ՝ ծանոթություններ, 1877 թ., 240 էջ)։

2. «Հայոց հին հեթանոսական կրոնը», Վաղարշապատ, 1879 թ., 37 էջ։

3. «Ստեփանոս Օրպէլեան, Ողբ ի Կաթուղիկէն», Թիֆլիս, 1885 թ., 69 էջ։

4. «Հայոց վանքերը», Մոսկվա, 1886 թ., 97 էջ։

5. «Թովմա Մեծոփեցու հիշատակարանը», Թիֆլիս, 1892 թ.։

6. «Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը», Թիֆլիս, 1892 թ., 59 էջ։

7. «Նոր ժողովածու, միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ» (Ա պրակ, Թիֆլիս, 1892 թ., 76 էջ. Բ պրակ, Թիֆլիս, 1892 թ., 78 էջ. Գ պրակ, Թիֆլիս, 1896 թ., 69 էջ. Դ պրակ, Թիֆլիս, 1903 թ., 84 էջ)։

8. «Համամ Արևելցի», Վաղարշապատ, 1896 թ., 30 էջ։

9. «Ս. Լուսավորչի Աչը», Վաղարշապատ, 1896 թ., 59 էջ։

10. «Տ. Պետրոս Ա Գետադարձ», Վաղարշապատ, 1897 թ., 53 էջ։

11. «Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը», Թիֆլիս, 1898 թ., 126 էջ։

12. «Մկրտիչ Նազաշ և յուր տաղերը», Վաղարշապատ, 1898 թ., 57 էջ։

13. «Շարժի տարեգրությունն հայոց մեջ», Թիֆլիս, 1902 թ., 24 էջ։

14. «Հակոբ Կարնեցի», Վաղարշապատ, 1903 թ., 73 էջ։

15. «Ներսես Ե Աշտարակեցի», Ալեքսանդրոպոլ, 1909 թ., ԼԲ+54 էջ։

16. «Վիմական տարեգիրք», Պետերբուրգ, 1913 թ., 283 էջ։

17. «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրոպոլ, 1910 թ., 352 էջ։

18. «Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում, համառոտ տեսություն և գրացուցակ», Թիֆլիս, 1910 թ., 182 էջ։

19. «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը», Ալեքսանդրոպոլ, 1910 թ., 287 էջ։

20. «Կարապետ վարդապետ Շահնազարյանց, կենսագրական ակնարկ. Թիֆլիս, 1911 թ., 38 էջ։

21. «Մի էջ Արղության օրիորդական դպրոցի պատմությունից», Թիֆլիս, 1919 թ., 76 էջ։

Կ. Կոստանյանցը զանազան ամսագրերում և թերթերում ևս ոնի բազմազակալից հոդվածներ։ «Արարատ» ամսագրում 1897 թվականին նրա հրատարակած հոդվածներից են՝ «Մեհեկան ամիս», էջ 52—59, «Արեգ ամիս», էջ 102—111, «Հայի համբերատար ոգին», էջ 435—438, «Հին հիշատակներ», էջ 289—296, 339—343։

«Հայատակության և խղճի ազատության գաղափարը նախնի հայոց մեջ» (փորձ պատմական հետազոտության), «Փորձ» ամսագիր, 1879 թ., էջ 65—95 և այլն։

Ունի նաև հրատարակված մի շարք դասագրքեր գրաբարի համար[1]։

Կոստանյանցի գրական ժառանգությունից մեզ հասել են ոչ միայն տպագրված մասը, այլև հայ մշակույթի (Հայ եկեղեցու պատմության, բանահյուսության, քաղաքական, տնտեսական, շինարարական, ազգագրական) տարբեր բնագավառներ ընդգրկող նրա մի շարք արժեքավոր անտիպ ուսումնասիրությունները, որոնք այսօր մեծագույն խնամքով պահվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում։ Դրանցից են.

---

[1] Այս ցանկը կազմել ենք Երևանի Հանրային գրադարանի և Պետական մատենադարանի բիբլիոգրաֆիկան քարտերի հիման վրա։ Կարող է պատահել, որ լինեն նաև ուրիշ հրատարակություններ, որոնց նշույլ հնարավորություն չենք ունեցել։

1. «Տուն և տոհմն հայոց», չորս մաս. ա. Հայոց երկրի տեղագրությունը, բ. Հայոց նախարարական տոհմերը, գ. Հայոց ժամանակագրության նախնական հարցերից, դ. Հայոց նախնական պատմությունը սկզբից մինչև է դար ն. Ք.։

2. «Հայոց բանահյուսության պատմություն», բաժանվում է հետևյալ մասերի. ա. Ներածություն, բ. Բանաստեղծություն Ե—ԺԲ դար. գ. Բանաստեղծություն ԺԲ—ԺԸ դար. դ. Հայոց պատմությունը (անծանոթ և օտար պատմիչներ). ե. Հայոց պատմությունը Ե—ԺԲ դար. զ. Հայոց պատմությունը ԺԲ—ԺԸ դար. է. Փավստոս Բյուզանդ. ը. Պերճախոսություն, իմաստասիրություն և այլն։

3. «Հայոց արդի բանահյուսության պատմություն». ա. Ներածություն, բ. Վիպական բանաստեղծություն, գ. Քնարական բանաստեղծություն, դ. Ժողովրդական քնարերգություն, ե. Գուսանական քնարերգություն, զ. Գեղարվեստական քնարերգություն, է. Թատերական բանաստեղծություն։

4. «Նյութեր հայկական քաղաքակրթության պատմության (բաղված Լազարյան տոհմի դիվանից)։

5. «Քաղուածք ի կանոնագրաց հայոց» (Ս. Հարց, Հայոց եկեղեցական ժողովներ. Մխիթար Գոշ)։

6. «Դաշանց թուղթը» (ընագիր և ուսումնասիրություն)։

7. «Մեսրոպ Թաղիադյանց և նորան վերաբերյալ նյութեր»։

8. «Հայոց եկեղեցական մատենագրության պատմություն», ա. Ներածություն, տեսիլներ, կրոնական զրույցներ և աղոթքներ, բ. Կրոնական բանաստեղծություն, գ. Շարականներ (նոցա հեղինակները, խմբագրությունը, բովանդակությունը և ձևը), դ. Տաղեր, ե. Գանձեր, զ. Կրոնական, հասարակական երգեր, է. Եկեղեցական ատենախոսություն, ը. Վկայաբանություն, թ. Թղթեր, ժ. Վարդապետական մասն։

9. «Գյումրին և յուր բարքերը»։

10. «Ի՞նչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում»։

11. «Մանկությանս Գյումրին». ա. Աստվածածին եկեղեցին, բ. Ս. Աստվածածին եկեղեցու տիրացուները, գ. Ուխտագնացություն, դ. Գյումրվա հոգևոր դպրոցը։

12. «Հայոց պարբերական մամուլը» (համառոտ տեսություն)։

13. «Պատկերներ Ս. Էջմիածնի վանական կյանքից»։

14. «Հայոց միջնադարյան բարբառները»։

15. «Խառն ժողովածու ժողովրդական երգերի և միջնադարյան տաղերից»։

16. «Աշխարհաբար լեզուս (նկատողություններ)։

17. «Հռովմա պապերի հարաբերությունները հայոց հետ»։

18. «Միջնադարյան բանաստեղծների ցուցակը և նրանց երգերի ցանկը»։

19. «Ղարաբաղի հայ մելիքները»։

20. «Վաճառականությունը հայոց մեջ»։

21. «Ռուսաց կայսրների հարաբերությունը հայոց կաթողիկոսների հետ»։

22. «Ինքնակենսագրություն» (մանրամասն)։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում Կ. Կոստանյանցի արխիվը կազմում է 2290 միավոր, որոնց մեջ են նրա տպագրված գործերի ձեռագրերը, անտիպ ուսումնասիրությունները, Գևորգյան ճեմարանում դասավանդած առարկաների նյութերը, նրա գրած և ստացած բազմաթիվ արժեքավոր նամակները և այլն։ Կոստանյանցը որպես բանաստեղծ, հայկաբան ու մանկավարժ մտերմական, սերտ հարաբերությունների մեջ է եղել իր շրջանի և ժամանակի տարբեր մասնագիտության տեր մարդկանց հետ։ Այդ բարեկամական կապը, բացի անձնական շփումներից, արտահայտվել է նաև նամակագրության միջոցով։ Նրա ստացած հարյուրավոր նամակների մեջ բազմաթիվ են նամակներ Հայր Ալիշանից, Հովհաննես Այվազովսկուց, Գարրիել արքեպիսկոպոս Այվազովսկուց, Հայր Արսեն Այտնյանից, Երվանդ Լալայանից, Կոմիտաս վարդապետից, Գարեգին Լևոնյանից, Գևորգ Բաշինջաղյանից, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանից, Սեդրակ Մանդինյանից, Մարից, Հրաչյա Աճառյանից և ուրիշներից։ Նա մի առանձին հարգանքով է կապված եղել Վահան Տերյանի հետ։

Հայր Ղևոնդ Ալիշանը իր 1893 թվականի մայիսի 12/24 թվակիր նամակով դրում էր Կարապետ Կոստանյանցին.

«Ազնիվ բանասեր տեր.

Ձեր բաժանորդագրյալ Սիսականաց օրինակեն վաղուց խավրած ենք աստից, և հուսամ հիմա ընդունած եք այդտեղի մեր տպագրության գործակալեն. ուրախ եմ, որ հաջողեցավ ավարտել գործս և շնորհակալ ես երկար համբերող սպասողաց։

Միջնադարյան երգոցդ մեջ կային քանի մի՝ ինձ համար նորք բայց շատերն արդեն ոմանք հրատարակված են, ոմանք ալ գրավին հայլևայլ երգարանս. ասոր համար է, որ իբրև նորատեսակ ինչ երևած է անոնց՝ որոց քով գտվին կամ ժանոթ են այդպիսին։ Իսկ որոց ոչ՝ հայտ է որ շատ հետաքննական և զվարճալի բանք են և հուսամ, որ ա-

վելի ճոխացնեք պրակները և ինձ ալ անծանոթ երկեր հնարեք։— Հայկական բուսաբանության գրողին համար պետք եղավ Սալաձորեցվուլն ծաղկերգը բաղդատել ձեր հրատարակածին հետ, ինչպես պիտի տեսնեք, տեղ-տեղ մեր օրինակն շատ նոր է, բայց ավելի կերևի։

Միշտ փափագելով հաչողության և ողջունելով լծակիցդ,

Մնամ աղաբարար
Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ»։

(Գրականության և արվեստի թանգարան. Կ. Կոստանյանցի ֆոնդ, № 605)։

Կոմիտաս վարդապետը իր 1907 օգոստոս 17 թվակիր նամակով գրում էր.

«Սիրելի պ. Կոստանյան.

Իտալիայից վերադարձա, և ձեր գրած տոմսերն ստացա։ Լոգան այնպես պատահեցավ, որ Քաչբերունին նշանակված ժամին իմ հյուրանոցում չգտնվեցավ, որոնեցի նրան ետտա, նրանից հետո էլ նա է ինձ որոնել, մի խոսքով իրար չպատահեցանք, իսկ ձեր հասցեն ինձ չէր ասել. տիպված, ցավելով, առանց տեսնվելու մեկնեցա։ Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբախտ հայրենիքն ավելի գեղեցիկ է։ Վենետիկի վանքում երեք շաբաթ աշխատեցա, բայց վանքում չէի հյուրասիրված, ապրում էի քաղաքում, Ս. Մարկոսի հրապարակի հյուրանոցներից մեկում, պ. Ջոպանյանի հետ մեկտեղ։ Գրադարանից բավական օգտվեցա։ Այս քանի օրն արդեն պատրաստվում եմ ես էլ կամաց-կամաց, որ մի ամսից երթամ Կովկաս։

Շատ ուրախացա, որ տիկնոջ հիվանդությունը մասամբ թեթևացել է. ցանկանում եմ կատարյալ առողջություն. շարունակ հիշում եմ միասին անցուցած բարեկամական գեղեցիկ օրերը. Աստված հաչողություն պարգևի երկուքիդ էլ. որ կրկին խնդանք ու զվարճանանք։

Կարոտագին և սիրալիր բարևներ տիկնոջ։

Ձեզ միշտ անձնվեր
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ»։

(Գրականության և արվեստի թանգարան. Կ. Կոստանյանցի ֆոնդ, № 11000)։

Կ. Կոստանյանցը պատվավոր տեղ է գրավում հայ մատենագրության մեջ որպես նրա անխոնջ մշակներից մեկը։ Նա թողել է պատկառելի ժառանգություն։

Վերջաբան.— 1920 թվականի հունվարի 1-ին, Մոսկվայում, իր այքերը հավետ փակեց հայ վաստակավոր մանկավարժը և հմուտ բանասերը։ Նրա մահով հայ բանասիրությունը կորցրեց իր բարեխիղճ և բազմաշխատ մշակին, իսկ հայ դպրոցը՝ իր լավագույն մանկավարժին։ Կոստանյանցի ամբողջ կյանքը ուսումնասիրությունների, պրպտումների, հետազոտությունների, վերլուծությունների, հրատարակությունների մի բեղմնավոր և արդյունաշատ գործունեություն է եղել։ Ամբողջ կես դար նա ծառայել է հայ դպրության և բանասիրության։ Նրա սիրտը բաբախել է գիտության և հայ ժողովրդի համար։

Մեր մատենագրության և բանասիրության պատմության մեջ պայծառ կմնան Կոստանյանցի անունն ու հիշատակը՝ որպես հայ մշակույթի բազմաշխատ մշակներից մեկի։

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՆՏՈՆԻՈ ԿԱԺԻԱՆՈՆ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 19-ին, Բուենոս-Այրեսի կաթոլիկ արքեպիսկոպոս կարդինալ Անտոնիո Կաժիանոն այցելել է Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանին և ապա հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։

Առաջին անգամն էր, որ կաթոլիկ բարձրաստիճան մի հոգևորական Բուենոս-Այրեսում այցելություն էր տալիս Հայրապետական պատվիրակ սրբազանին և հայոց եկեղեցուն։

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՆՏՈՆԻՈ ԿԱԺԻԱՆՈՆ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԲԱՆՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ Ե. ԲԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏՅԱՆԻ ՀԵՏ

Կարդինալը առաջնորդարանի դռնից ընդունվում է պատշաճ հարգանքով Հայրապետական պատվիրակ սրբազանի, եկեղեցական դասի, Կենտրոնական վարչության խորհրդի անդամների և այլ ազգային-եկեղեցական մարմինների ու հայ մամուլի ներկայացուցիչների կողմից և առաջնորդվում եկեղեցի՝ զանգերի ղողանջի տակ։

Կարդինալը ծնրադիր աղոթում է Ավագ Ս. Սեղանի առաջ՝ աշխարհի խաղաղության և քրիստոնեական եկեղեցիների միության համար։ Ապա բարձրաստիճան եկեղեցականը հետաքրքրվում է Հայ եկեղեցու կյանքով, խորապես տպավորվում Մայր Տաճարի ճարտարապետությամբ և առանձին հետաքրքրությամբ դիտում Ս. Էջմիածնից նվեր ուղարկված խաչքարը։

Նույն հանդիսավորությամբ հարգելի հյուրը առաջնորդվում է առաջնորդարան, որտեղ սիրալիր զրույց է տեղի ունենում նրա և Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոսի միջև։ Քերմ խոսակցության ընթացքում կարդինալը շեշտում է մասնավորաբար քրիստոնեական եկեղեցիների միության անհրաժեշտությունը։

Մեկ ժամ տևող այս այցելությունից հետո կարդինալ Ա. Կաժիանոն հրաժեշտ է առնում Հայրապետական պատվիրակ սրբազանից, եկեղեցական դասից և ազգային մարմինների ներկայացուցիչներից՝ լավագույն և անջնջելի տպավորություններով։

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Փետրվարի 6-ին, Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում, գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Քեմհաճյանը, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի խարտավիլակությամբ, կուսակրոն սարկավագ է ձեռնադրել ժառանգավորաց վարժարանի ուսանողներ Հ. Ավետիքյանին, Ջ. Գալայճյանին, Ս. Դեմիրճյանին և Ա. Գասպարյանին։

Փետրվարի 7-ին, կիրակի օրը, սուրբ պատարագի ընթացքում, գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոսը կուսակրոն քահանա է ձեռնադրել բարեշնորհ Սիմոն, Վարդան, Գառնիկ, Հակոբ, Հարություն և Զավեն ավագ սարկավագներին։

Խարտավիլակի պաշտոնը կատարել է նորից գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը։

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվել է նորընծաների վեղարի տվյուրյան արարողություններ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, իր ապրիլ 1 թվակիր հեռագրով շնորհավորելով նորընծաներին, գրում էր գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոսին.

«Մեծ ուրախությամբ լսեցինք Ս. Աթոռիդ վեց աբեղաներու ձեռնադրության բարի լուրը։

Երկնային շնորհ և օգնականություն կնայցեք նորընծա Արշակ, Գեղամ, Եզնիկ, Փառեն, Ժիրայր և Վրթանես աբեղաներուն և կօրհնեմք զանոնք հայրական սիրով։

Մեր անկեղծ խնդակցությունը Ձեզ և Աթոռիդ միաբանության։

Խաղաղություն ընդ ձեզ»։

Նորընծա հոգեշնորհ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը ծնվել է 1938 թվականին, 1953 թվականին ընդունվել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը և այն ավարտել 1959 թվականին։

Նորընծա հոգեշնորհ Տ. Գեղամ աբեղա Զաքարյանը ծնվել է 1938 թվականին, 1953 թվականին ընդունվել է ժառանգավորաց վարժարանը և այն ավարտել 1959 թվականին։

Նորընծա հոգեշնորհ Տ. Եզնիկ աբեղա Զավտարյանը ծնվել է 1939 թվականին, 1952 թվականին ընդունվել է ժառանգավորաց վարժարանը և այն ավարտել 1959 թվականին։

Նորընծա հոգեշնորհ Տ. Ժիրայր աբեղա Թաշճյանը ծնվել է 1936 թվականին, 1954 թվականին ընդունվել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը, որն ավարտել է 1957 թվականին։

Նորընծա հոգեշնորհ Տ. Փառեն աբեղա Ավետիքյանը ծնվել է 1938 թվականին Թեյրութում, 1957 թվականին ընդունվել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը և այն ավարտել 1959 թվականին։

Նորընծա հոգեշնորհ Տ. Վրթանես աբեղա Գալայճյանը ծնվել է 1939 թվականին Հալեպում, 1958 թվականին ընդունվել է Երուսաղեմ և աշակերտել ժառանգավորաց վարժարանին։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհավորում է նորընծաներին, մաղթելով, որ նրանք լինեն «մշակք առանց ամօթոյ» և շարունակեն Երուսաղեմի հայոց զինվորյալ միաբանության հատուկ ավանդությունն ու վանական ոգին, որով ապրել են ու գործել Երուսաղեմի հայոց վանքի հավատավոր միաբաններն ու հոգևորականները, արժանանալով հայ հավատացյալ ժողովրդի վստահության և հարգանքին։

ԴՈՒՐՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 25-ին, Դամասկոսի Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյանի նախագահությամբ, Ս. Թարգմանչաց ազգային մանկապարտեզի սրահում, համազգային շուքով նշվել է երջանկահիշատակ Եղիշե պատրիարք Դուրյանի ծննդյան 100-ամյակը։ Հոբելյանական հանդիսության ներկա է եղել նաև Դամասկոսի հայ կաթողիկե համայնքի մեծավոր գերապատիվ Տ. Օգվարդ վարդապետ Կրտին։

Հանդիսությունն սկսվել է Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայի հիմնի նվագով, որից հետո բացման խոսքով հանդես է եկել արժանապատիվ Տ. Պարգև քահանա Պարտագճյանը։ Ապա Ա. Օհանյանը ներկայացրել է Դուրյանի կյանքը, Ն. Հակոբյանը՝ Դուրյան գրագետը։ Հանդեսի ժամանակ գործադրվել է նաև գեղարվեստական ճոխ հայտագիր՝ բաղկացած շարականներից, երգերից, խմբերգերից և արտասանություններից։

Դամասկոսի Թեմի բարեխնամ առաջնորդ սրբազանը խոսել է «Դուրյան մարդը» թեմայի շուրջ, ներկայացնելով մեծ ուսուցչին որպես տիպար հոգևորական և ազնիվ մարդ։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ

Ամենայն Հայոց Հայրապետական դարավոր Աթոռի այս պաշտոնական ամսագիրը, «Էջմիածին», իր բարձր կոչումին և առաքելության համապատասխան բովանդակությամբ կհրատարակվի ամեն ամիս կանոնավորապես և խնամյալ ծրագրով։

Անիկա ունի գլխավորապես եկեղեցական, մշակութային, պատմական և բանասիրական ուղղություն և այլազան և հյութեղ պարունակություն։ Կարձանագրե նաև իր յայն շրջապատի կրթական և իմացական շարժումներուն և գործունեությանց պատկերները այնպիսի գեղեցիկ դասավորությամբ մը, որ ցույց կուտա, թե հանդեսին խմբագրություններ ունի և կտածե որոշ հոգածություն, արտաքին աշխարհի հայությունը տեղյակ և իրազեկ պահելու թե՛ մեր վերածնած Հայրենիքի և թե՛ Հայրապետական Աթոռի հոգևոր և մտավորական գործունեության շուրջ։

Որեւէ հայ տուն կամ հայ անհատ, որ մեր գեղեցիկ Հայաստանի և Առաքելական Եկեղեցվո թրթռումները կզգա իր ներսիդին, այս մեծարժեք ամսագրի մեջ պիտի գտնե մեր նախահայրերու անայլայլ հոգին, անոնց տեվականորեն ապրող սրտին բարախումները, որոնք անշիջանելի լուսավորի մը նման կբերեն տաքություն և ճառագայթ, կպայծառացնեն մեր պապենական երազը և այս հյուրընկալ երկիրներուն մեջ ցրիվ եկած հայ տնակներուն կուտան ապրելու հավատք և կամք։

Այս ամսորյա հանդեսը ունի 64 մեծադիր և երկսյունակ էջեր, ծարված սիրուն և գեղատեսիլ կափարիչի մը տակ, որուն ճակատը զրված է «Էջմիածին» հմայիչ անունը այնպիսի հստակ և հայադրոշմ տառերով, որոնք կարծես «Լուսավորչի կանթեղ»-ին նման կախված կմնան ալեզարդ Արարատի և Ս. Էջմիածնի երկնամերձ գագաթներուն վերև և անոնց՝ անքակտելիորեն իրարու կապված դարավոր էությունը կդարձնեն անհուն խորհուրդներով լեցուն շտեմարան մը։

«Էջմիածին»-ը կհասնի մեզի շատ սիրելի այցելուի մը նման, իր գրպաններուն մեջ միրգ ու շաքար լեցուցած ժպտուն մեծ մայրիկի կարոտով։ Ամեն ամիս անիկա կբերե մեզի դեսպիսուն և թանկարժեք նվերներ։ Կուգա զարդարելու համար մեր միտքն ու հոգին, մեր տունն ու գրադարանը և մեր մտածման օրերն ու ժամերը։ Քիչ հետո, կըլլա հաղորդություն և շունչ, կսնուցանե զմեզ և հայ լեզվին և հոբենական զգացումներուն կարոտով լեցված մեր էությունը կառաջնորդե դեպի մեր հոգիներուն ճշմարիտ ընագավառը, Հայաստան։

Այսպես, կյանքով ու խանդով «Էջմիածին»-ը պատահական հյուր մը չէ, այլ հին «բերու մնալուն և մտերիմ ընտանեկան անդամ մը։ Անիկա զմեզ կճանչնա մեր մանկական օրերեն ի վեր, նույնիսկ անկե ալ առաջ։ Ճանչցեր է անկասկած մեր պապերն ու անոնց պապերուն պապերը։ Նաև մեր անհամար սերունդներու մամիկներու շրթներն է ոձեր լույսով ու աղոթքով, անոնց տկար ու տառապակոծ կուրծքին տակ անթեղեր՝ ապրելու բուռն տենչ, հաղթահարելու պողպատե հավատք և լույսին վազելու անտեղիտալի նվիրում։

Ղարիբ հայը այս հյուրընկալ կայքերուն մեջ կապրի Արարատով, երևանով, Էջմիածնով և անոնցմե ճառագայթող շեն ու չերմիկ ցոլքերով։ Արարատին մեջ կգտնե ան Էջմիածինը և Էջմիածնի մեջ՝ Արարատը։

Ահա թե ինչու այս երկու սրբությունները դեմ դիմաց՝ եկեր և միացեր են Ամենայն Հայոց Հայրապետության ամսագրի ճակատին վրա և անքակտելի ամբողջություն մը

կազմած՝ կուգան հսկելու մեր հոգեկան ապրումներուն վրա և հայ տան շնչառութեանց վերա։

«Էջմիածին»-ը նաև զանգակատուն մըն է սիրո և խաղաղութեան։

Անիկա նոյան տապանին արձակված աղավնիին նման իր թևերուն վրա կկրե խաղաղութեան ավետիսը, ունի հայրապետական օրհնութիւն և հորդոր, որպեսզի մարդիկ հուշքի դան, արորն առնեն զենքի տեղ և եղբայրութիւնն ընեն սահմանագլուխը բազմալարալար ազգերուն։ Այս սիրո և փոխադարձ հասկացողութեան փրկարար ոգին խորացնեն և ամուր հիմերու վրա պահեն մանավանդ նույն հոգիներուն մեջ, որ հոգնած և արյունոտ երկրագունդի ճակատագիրն են դրեր իրենց սեղանին վրա։

«Էջմիածին» գրեթե իր բոլոր թիվերուն մեջ կուտա մեր սիրեցյալ Հովվապետին կոնդակները, որոնք շնորհք և օրհնութիւն կտարածեն հայ կամ այլազգի ժողովրդանվեր հաստատութեանց և առաջնորդներուն վրա։ Կհորդորեն, որ խաղաղութեամբ ընթանանք, միասնական ճիգերուն փարինք և շինարարութեամբ բարձրանանք և բարձրացնենք։

Թացառիկ և հուզիչ իրականութիւն չէ՞, որ մեր ազգընտիր Հայրապետն Վազգեն Ա խաղաղութեան առաքյալ մը հռչակվեցավ և սիրո ու եղբայրութեան շքանշանն ալ զարդարեց Անոր կուրծքը։ Նույնպես, գեղեցիկ և հուզիչ առիթ մը չէ՞, որ «Էջմիածնի» համարներուն մեջ միշտ արձագանքը կունենա Անոր հայրական խաղաղասեր ու սրտագրավ խոսքերուն։

Իրավամբ, այս հանդեսն ամբողջ հմուտ ու ճարտար ձեռքերու մեջն է։

Խմբագրականները հասուն, նվիրյալ և հայրենասեր գրիչներե կծորին և իրենց վերցուցած նյութերուն պայծառ լույսը կձգեն ընթերցող հասարակության վրա։ Անոնց արձակագրությունը, լեզվական հարդարանքը ճկուն, անսայթաք դնացքով եզական կմնան արդարև։

Օրինակի համար անցյալ հուլիս ամսվան խմբագրականը «Հայ Եկեղեցու երկու սյուները» վերնագրով շատ հասուն տեսություններ կբանար և ինքզինքը կպարտադրեր ընթերցողին վրա։ Իրավ շատ հաճելի երևույթ մը եղավ, որ արտասահմանյան մեր բոլոր հավատարիմ թերթերը անմիջապես արտատպեցին զայն և հանձնեցին իրենց ընթերցողներու ուշադրության։

Իսկական հաճույք է նշմարել նաև, որ անոր մեջ գրչի և արվեստի վաստակավոր վարպետները վեր կանգնվին ուսումնասիրությամբ։ Արևելահայ և արևմտահայ դեմքեր կրանան իրենց արժեքավոր վաստակները։ Այս խորապես թելադրիչ պարտականությունը մշակույթի նվիրված որևէ հանդեսի համար կբերե վարկ և մեծարժեք որակ։

Առանձին ուշադրության արժանի է Կաթողիկոսարանի կյանքին հատկացված արձանագրությանց բաժինը։ Հոն ուշի-ուշով կկարդանք պաշտոնական կամ մտերմիկ այցելությանց, գործի, կրթական ջանքերու և հաջողությանց համառոտ տեղեկագրությունները, որոնք կառնեն ու կտանին մեզ դեպի Էջմիածին կամ Երևան, ներկա կդարձնեն բոլոր անցուդարձներուն, բոլոր ճիգերուն և աշխատանքներուն և մեզի հավաքելու գացող բոլոր աշխույժ մեղուներու վազքին։

Հոգևոր Ճեմարանի հատկացված լայն էջերը, որոնք նորահաս ուժերու բերած նյութերն ու տեսությունները կամփոփեն արձակ կամ չափածո կտորներու մեջ, շատ անգամ մեզի կծանոթացնեն իսկական տաղանդի ծլարձակումներ, որոնց հանդեպ «Էջմիածին» հանդեսի խմբագրությունը հայտնապես ունի որոշ հոգածություն և խնամք։

Չեմ կրնար պահ մը կանգ չառնել Արամայիս Սահակյանի շուրջ, Ճեմարանի ուսանող, որ «Պապաս» վերնագրով ոտանավոր մը տաղաչափած է և անոր մեջ դրած՝ իսկական և հուզիչ պատկերը հայու ճակատագրին անցյալ և ներկա իրականությանց։ Այդ ոտանավորը սիրուն և սրտառուչ պատկեր մըն է։ Զմայլելի ոգեկոչումն ու տենչանքն է այն բյուրավոր նորահաս թոռնիկներուն, որոնք կհիշեն իրենց տարաբախտ մեծ պապերը, անոնց լեռնականի քաջ հոգին, անոնց որսորդական արշավները, անոնց երազն ու մուրազը, որոնք անարև և անկատար մնացին և անցան անանուն և անհիշատակ...

Բայց թոռնիկներն հասեր են այսօր իրականացած այդ երազներուն՝ անհուն երջանկությամբ։

Անոնցմե մեկն է կանգներ ահա և կոգեկոչե իր քամբախտ պապիկն ու սև անցյալը և անոնց վերև բացված մեր չքնաղ արշալույսը։

Իր «Մայր Հայրենիքում» վերտառության տակ «Էջմիածին» կամփոփե առանձնապես շատ հետաքրքրական նոթեր։ Մեր հայրենի աշխարհին մեջ տեղի ունեցած բազմաթիվ տեղեկություններ, հայագիտական, ուսումնական, գիտական, շինարարական, երաժշտական ու այլ բազմազան ճյուղերու վրա ցանված գործունեությանց վաստակները անհագորեն կկարդանք և կլեցվինք արդար հպարտությամբ և հրճվանքով։

Տակավին կգտնենք հայրապետական այս պարբերագրին մեջ ուսումնասիրություններ, որոնք կտարածվին հին ու նոր ժամանակներու, դեմքերու և դեպքերու վրա։ Սփյուռքի

հայ եկեղեցիներն ու հաստատությունները ձեռնհաս գրլով վեր կառնվին և ընթերցանության համեղ էջեր կավելցնեն ամսաթերթին վրա։

«Էջմիածին» ունի տպագրական անթերի հարդարանք, գեղարվեստական տիպ ու տառ, հանոնավոր դասավորում և նյութերու ճոխություն։ Անոր կազմն ու լուսանկարչական և մանրանկարչային զարդարանքներն ալ կմնան ամեն գովեստի արժանի։

Արտասահմանի մեր գաղթային աշխարհը իր եկեղեցիներով, գրական և լրագրական հաստատություններով կհավատամ, թե պարտավոր է ավելի ուշադիր բլլալ Ամենայն Հայոց Հայրապետական Մայր Աթոռի այս պաշտոնաթերթի վերաբերմամբ։

Որովհետև Արարատի շուքերուն տակ հստած հայուն փառավոր տնակը իր շեն ու պայծառ ժպիտով, թրթռուն երգով ու պարով մեզ պիտի ապրեցնե և մեր հոգին պահե՝ հաստատուն և տնականորեն կապված մեր անցին Հայրենյաց անթիվ սրբություններուն, հոգին ու ջուրին, արևին և աստղերուն, որոնք Հայոց աշխարհն են իջեր և ա՛լ չեն թողուր, որ խավարն ապրի հոն և կամ չարաշուք ամպ մը մոտենա անոր հորիզոնին։

ՎԱՀԵ ՀԱՅԿ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 4 և 5 մարտի 1960 թ.)

ՄԱՑՐ ՀԱՑՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՑՐ ՀԱՑՐԵՆԻՔԻՑ

ՍԵՎԱՆԻ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐ ՍԽԵՄԱ.— 30 տարի առաջ մշակված նախնական սխեմայով նախատեսված էր Սևանի լճի ջրի դարավոր պաշարները օգտագործել ոռոգման և Սևան—Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայաններում էլեկտրաէներգիա արտադրելու համար։ Նախատեսված էր 50 տարվա ընթացքում լճի տարածությունը վերածել իր մեկ յոթերորդական մասին։

Ղարագաղից ստացված դաշտ հնարավոր դարձրեց Հայաստանում էներգետիկ նոր բազա ստեղծել, կառուցելով խոշոր ջրմատակարարացենտրալներ։ Այդ կապակցությամբ կվերանա Սևանից մեծ քանակությամբ ջուր դուրս թողնելու անհրաժեշտությունը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը վերջերս քննարկեց այդ հարցը։ Այդ նիստին մասնակցում էին բազմաթիվ էներգետիկներ, հիդրավլիկներ, մելիորատորներ և այլ մասնագետներ։ Նոր սխեմայի համաձայն Սևանի լճի ջրերի օգտագործման մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էներգետիկայի և հիդրավլիկայի ինստիտուտի դիրեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Ենանյանը։

Գիտնականների խորհրդով լճի հարավ-արևելյան կողմից, Վարդենիսի լեռնաշղթայի ստակով, կփորվի 55 կիլոմետր երկարությամբ մի տունել, որով Արփա գետի վերին հոսանքից ամեն տարի Սևանա լիճը կհոսի 300 000 000 խորանարդ մետր ջուր։ Ոռոգման նպատակներով կգործադրվեն հիմնականում ստորերկրյա ջրերն ու գետաջրերը։ Նախատեսված է կառուցել մի շարք խոշոր ջրամբարներ Հրազդանի և Քասաղի միջին հոսանքում։ Սևան—Հրազդան կասկադի գործող հիդրոէլեկտրակայանները զգալիորեն կկրճատեն էլեկտրաէներգիայի արտադրությունը և Անդրկովկասի միացյալ էներգոսիստեմում կկատարեն կարգավորիչի ֆունկցիաներ։

Գիտությունների ակադեմիայի նախագահությունը հավանություն տվեց գիտնականների ներկայացրած նախագծին։ Այս նոր սխեման կիրագործվի մինչև 1970 թվականը, ըստ որի հնարավոր է դառնում Սևանի լճի մակարդակը թողնել մոտավորապես բնական բարձրության վրա, իսկ մակերեսը կրճատել ընդամենը 13 տոկոսով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Մարտ ամսում Երևանում բացվեց Հայաստանի կին նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը մեծ հաջողություն գտավ։ Ցուցադրված նկարները, քանդակները, գավաթները ու արձանիկները վկայում են Սովետական Հայաստանի կին նկարիչների ստեղծագործական նոր նվաճումների, նրանց ճաշակի և կենսախինդ, առողջ ու երջանիկ կյանքի մասին։

Ուշագրավ էին հատկապես Ա. Նալբանդյանի «Հեռաբքիր դիրքը», Ս. Ղարագյոզյանի «Մանկական կոնստրուկցիան», Ա. Բոյաջյանի «Ցնծալիվ» կտավները։ Այդտեղ, կենցաղային նկարների կողքին, ցուցադրվել էին նաև հայրենի բնությունը պատկերող կտավներ՝ Հ. Աբրահամյանի «Գարունը» և «Ծաղամանը», Ս. Գեորգյանի «Կիրը Արխաղիայում» և «Զանգուն», Ժ. Հարությունյանի «Կակաչները» և այլն։

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԵՐ.— Վերջերս Հայաստանի նկարիչներից Վ. Բդեյանը և Հ. Ցացմայլյանը այցելեցին Ռիգայի «Մայորին» կիրառական արվեստի ստեղծագործական տունը։ Այնտեղ նրանք ներկայացրին իրենց կազմած էսքիզները, որոնց ընդհանրապես ներշնչված են հնագույն ժամանակներից մեզ հասած կենցաղային օգտագործման իրերի արժեքավոր նմուշներից, որոնք պեղումների ընթացքում գտնվել են Հայաստանի այլևայլ հնագույն բնակավայրերից։ Դրանց հիման վրա կերամիկայից ձուլվեցին արձանիկներ, վազեր և այլն, որոնք հետո ցուցադրվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում։

Հ. Բդեյանի աշխատություններից ուշագրավ են դավաթները, սափորները, գինու լիկյորի սպասքը, «Ուրարտուս» կախոցի ժաղկամանը, «Հայրենիք» սկահակը և այլն։ Հ. Ցացմայլյանի արձանիկներից հիշատակության արժանի են հատկապես «Ինկերուհիները», «Դիմակները», «Գուսանը» և այլն։ «Բերքահավաքը» արձանիկը նվիրված է Հայաստանում սովետական բարձրության վրա, իսկ մակերեսը կրճատել ընդամենը 13 տոկոսով։

տական կարգերի հատատման 40-ամյակին և ուրախությամբ է իր գեղեցիկներին նորը ճայակով։

Ռուսաստանի բերվել էին մոտ 100 աշխատություններ։ Դրանցից շատերը մոտ ժամանակում կհանձնվեն մասնագիտական արտադրության և կդառնան մեր բնակարանների անբաժանելի զարդերը։

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.— Հայաստանի պետական հրատարակչությունը որոշել է 1960—1963 թվականների ընթացքում հրատարակել Ստեփան Զորյանի ստեղծագործությունները 10 հատորով։ Առաջին հատորն ընդգրկում է 1912—1917 թվականների պատմվածքները, երկրորդ հատորը՝ 1915—1922 թվականներին գրված որոշ պատմվածքներ, երրորդ հատորը՝ «Մի կյանքի պատմություն» վեպը և «Կապիտան Երեմյա» վիպակը, չորրորդ հատորը՝ 1923—1933 թվականների ստեղծագործությունները, հինգերորդ հատորը՝ 1930—1944 թվականներին գրված պատմվածքները, վեցերորդ և յոթերորդ հատորները հատկացվում են «Հայոց բերդը» և «Գայ թագավոր» պատմավեպերին, ութերորդ հատորը՝ «Ամիրյանի քնարները» անավարտ վեպին, իններորդ և տասներորդ հատորները՝ 1926—1950 թվականներին գրված այլևայլ պատմվածքներին, գրություններին և հուշերին։

ՆՇԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 10 ՏԱՐԻՆ.— Գրիգոր Խանջյան Երևանի Գեղարվեստական ինստիտուտի շնորհալի սաներից մեկ տասնամյակից էլ պակաս այն ժամանակում ինչ կա ավարտել է ինստիտուտը և անցել ստեղծագործական ինքնուրույն աշխատանքի, նա արդեն այն ճանաչում է գտել որպես շնորհալի դիմանկարիչ։ Նրա մեծ կտավները տարիս են իդեալիզմի աշխատանքի գեղեցկությունը. աշխատավոր մարդու երջանիկ կյանքը («Երջանիկ ճանապարհ», «Մանի ափին» 1952, 1956 թ. թ.)։ Աշխատանքը և երջանկությունը մարմնավորող այս նկարների մեջ Խանջյանը կարողացել է դնել նաև հայրենի գեղեցիկ բնության շուքն ու բույրը, բացահայտել մարդկային ինքիմ զգացումները, կարողությունները, որը Խանջյանի արվեստի բնորոշ հատկություններից մեկն է համարվում։ Այս տեսակետից ուշադրավ է մանավանդ 1953 թվականին ավարտված «Բացատրություն» կտավը, որտեղ առարկաների նպատակային խմբավորումը, դույների մեղմ և ներդաշնակ ծփանքը, սեռերի հոգեկան ապրումները հայոց բացատրող անկեղծ և անմիջական հուզումը իրոք տպավորություն են թողնում մարդու վրա։ Հմտություն, կենդանի և սուր դիտողություն, բարդ հոգեկան ապրումների արտացոլում, ահա այն, ինչ կենդանի և բարեխիղճ է դարձնում Խանջյանի նկարները։

1959 թվականին Խանջյանը այցելեց Այրարատ և այդ առթիվ բազմաթիվ էսքիզներ պատրաստեց, որոնք ցուցադրվեցին Այրարատյանում, Մոսկվայում և Երևանում։

Խանջյանի վրձինին են պատկանում գրական նկարազարդումները Հ. Թումանյանի «Մասունքի Դավթիս», «Գիքորը», «Անուշ», «Լուսնի Մայրն» երկերի, Վ. Միրզայանի «Լալվարի որսը» պոեմի, Խ. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպի, որտեղ նա օգտագործել է ներկերի բնձնում բոլոր կարելիությունները։ Հայ կյանքի գրականության այդ երկերի զարգացիրական բովանդակությունը և դեղարվեստական հրապույրը արտահայտելու համար Առանձնապես հարգ են «Անուշ»-ի և «Գիքոր»-ի նկարազարդումները, որոնք նկարչի հասունացման փաստերն են։ Սակայն Խանջյանի անունը ավելի շատ հիշվեց «Լուսնի Մարոն», որը նրան բերեց ՍՍՍՄ Գեղարվեստների ակադեմիայի ոսկյա մեդալը, և «Վերք Հայաստանի» երկերի նկարազարդումներով։ Երիտասարդ և խոստումնալից նկարիչը իրեն համար ապահովել է արդեն առաջնակարգ տեղ սովետական կերպարվեստի աշխատողների մեջ։

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ.— Հայաստանի Գրողների միությունը վերջերս կազմակերպեց Հայաստանի Գրողների միության Թարգմանիչների և քննադատների սեկցիայի համատեղ նիստ, նվիրված թարգմանական հարցերին։

Հայաստանի պետական հրատարակչության թարգմանական սեկցիայի վարիչ Ա. Վարդանյանը հանդես եկավ ընդարձակ զեկուցումով՝ նվիրված վերջին երկու տարում լույս տեսած թարգմանություններին և հատկապես նրանց մասին եղած քննադատություններին։ Զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին թարգմանիչներից և քննադատներից շատերը։ Թե՛ զեկուցողը և թե՛ բանավեճի ելույթ ունեցողները նշեցին, որ ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի է՛լ ավելի ամրապնդմանը մեծ չափով նպաստում է տարբեր ժողովուրդների գրականության լավագույն նմուշների հարգատ և հայոց թարգմանությունը։